



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

U6

1153



Ն Ո Ւ Ա Գ Ք


Հ. ՂԵՒՈՆԴԵԱՅ Մ. ԱԼԻՇԱՆԵԱՆ

ՄԻԻԹԱԿԵԱՆ ՎԱԿԱԳԵՏԻ

ՅՈՎԻՏ ԳՅՆՅԻՍ

ԲՆԱԿԱՆ ԳՅՆՅԻՍ

ՅՈՎԻՏ ԳՅՆՅԻՍ



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

ՌՅԶ - 1857

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՄԱՆՈՒԿ ՊԷՅԻ

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՄԱՆՈՒԿ ՊԷՅԻ

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ

ՅԻՇԱՏԱԿ ՀՈԳԻՈՅ

ՄԱՆՈՒԿ ՊԷՅԻ

ԱՍՏՈՒԱԾԱՏՐԵԱՆ



Ա Մ Ա Ն Ո Ր Ա Բ Ե Ր

Ա.Ռ. ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ

Ընդ ծով դարուց յալիս ամաց
Յաւերժ յովկիան՝
Ի զաղփաղփուն տախտակ կենաց
Վարիմք միաբան .

Նաւուս փոքու՝ դու Հայր՝ հորդես
Շաւիղ անխոտոր ,

Ընդ թուխ կոհակրս՝ լուսաաես
Բանալով հուն խոր .

Մէք ի կողեցն յառեալք ընդ ծով
Սահուն եւ անդարձ ,

Տեսանեմք կոյտ ահեղ փրփրով
Նաւուս դիմադարձ .

Այլ չերկրն չիմք ի կոհակէն

Որ դայ յամերամ :

Ասողըն ծովուց՝ հողմն յիւր գահէն

Շրնչէ բարեկամ :

Ծաղկապրսակ նաւուս բերկրեաց

Նաւուղիղող վարժ ,

Քեզ դիւրեցէ կախ ըզբեղեաց

Տաւիղս հոգեշարժ :

1840

ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ

Մանկուհի սքեմառուս

Ի սուրբակաց հեռաւորաց հիւրք մատաղ
Յոսիկնաթիւ խառնեալ յարփուոյն շամանդաղ

Ընդ կոհակ թեթեւ

Զուդեալ թեւ ի թեւ ,

Ի սուրբ թիրախ սուրահնագոյն բրբռք պիշ
Իբրեւ փըթինք ի կուս բազկաց երկնանիշ՝

Թափ յորորտս ի խոր

Դիմեն անխտոր :

Մօրն հոգէծին սոքա թուուցեալ գան ի ձօն
Յոտսըն մաքուր խոնջ անկանին հաւք ըզգօն ,

Ի սուրբ ջերեալ հուր

Թօթափեն զփեսուր :

Այլ ընդէր թեւք նկարէն գունին տխրերանգ . —
 Զի թառ զուգիս ոյր այսքան բարձր են խոյանք՝

Սեան է կիսպարի

Յոր Յիսուս փարի :

Ո՛հ, յոսա դորին դարեալ հանէք ինձ մրմունջ,
 Մինչ առ բընովն ես կորացեալ անշըշունջ՝

Ածից սիրաբար

Ըզնուաղս իմ քընար :

1840

ԱՌ ՆՈՐԸՆԾԱՅ ՎԱՆՍԱԿԱՆ

Ընդ ո՞ր ելեալ ես Պողէ ,

Չայն ծանօթիդ տուր աղէ .

Հիմ զընկերաց քոց դասակ

Լըքեալ ի տիս դեռհասակ՝

Մեծագունից քան ըզքեզ

Մըտեր քաջացն յասպարէզ .

Միթէ ժողովքն այն սըրբոց

Զքեզ կարգացին յերկնից ծոց :

Ո՛հ, շնորհք փրկչին՝ որ այսպէս

Զմանկունս կոչէ ի հանդէս .

Այլ շնորհք կըրկին եւ արգար

Զի հանգիսին մարտյարդար

Խաչիւն իւրով ինքն Յիսուս

Հորդէ շաւիղ՝ կեանք մեր յուս ,

Եւ որոց զհետ ընթանան
 Երանաւէտըն խոստման ,
 Դընէ հանդէպ պէսպէս կիրս
 Ի քաջութեան սուրբ գըրգիւս ,
 Եւ յաղթողաց բընաւին
 Սփռէ զպըսակս երկնային :
 Ահա գնացեալ աստուատ արդ
 Ելեր ի գործ եւ ի մարտ -
 Իբրեւ ըզտունկ կամ ծաղիկ
 Որ կարծի , դաշտն ընկեցիկ ,
 Յորչափ անդէն տատանի՝
 Թէսկա եւ շատ գեղանի ,
 Ոչ ակն ուրուք շէղ՝ ի նա
 Ամուլ հեշաիւ վայր մի զկայ ,
 Եւ ոչ ձեռօք ինչ ուրուք
 Անփոյթքն ուղլին անդր առուք -
 Իսկ թէ յանկարծ ինչ ազդումն
 Կամ բաղդ շնորհաց անսրատումն
 Ի մայրենին հողոյ զնա
 Կանգնէ ի վայր գերակայ ,
 Շարժեն անցորդք անդր աչկունս ,
 Քննեւ ծաղկունս եւ բուրմունս :
 Այսպէս որ ցարդ անխըտիր
 Յաշխարհակցաց դաս կայիր ,
 Քեզ եւ նոցա հաւասար
 Յաչաց ճաճանչ մի լոկ գայր ,
 Իսկ մինչ զատար ի բարձու
 Մենաստանիդ երկնաչու ,
 Բոլոր տեսոյ դու նսրատակ
 Եղեր առ մարդ եւ հրեշտակ :

Այլ քեզ եղուկ եւ աւաղ
 Թէ մանկական իբր ի խաղ
 Կամ ի շրջուն ինչ հրապոյր
 Ելեալ գնացեր անդր յահուր •
 Զի ոչ ձրգէ տունկ արմատ
 Թէ ոչ խնամէ շնորհաց կաթ •
 Մերժեալ յերկրէն զոր թողեր ,
 Անընդունակ ուր գնացեր՝
 Իբրեւ ըզխտան ի դաշտի
 Ում սատահեաց գերանդի ,
 Վերայ ծըլիդ ցամաքիս
 Յոտընկելեացդ անկանիս :
 Բայց երանի՛ քեզ , եւ բիւր ,
 Ում եւ վկայէ սըրտիս դիւր ,
 Եթէ նոյն ինքն ըզքեզ շնորհ ,
 Յայդ ամբարձ գահ երկնաւոր •
 Սակայն չեն փառք ինչ կըրել
 Եւ նըշանակ ոսկեթել ,
 Թէ մարտընչել ինչ նոքօք
 Կամ վայելել չունի ոք :
 Խաղաղութիւն է արդ շուրջ
 Երեսք ծիծաղ քան թէ լուրջ ,
 Սիրտ քո հանդարտ եւ ուրախ ,
 Ուստեք հայիս՝ չեք զըմբաղ •
 Այլ մի ասեր ի սըրտիդ ,
 Թէ ի հաղբից քո վարմիդ
 Աշխարհ , թուուցեալ եմ թուչուն ,
 Եւ անկասկած ունիմ տուն •
 Ի արդարեւ իսկ ըստոյդ
 Զի չէ ոստինն այն ջատուկ

Արկեալ բոլոր զվայրն ի ցանց
 Որպէս զաշխարհ զիւրրն դանձ .
 Այլ, ո՛հ, էն էն եւ անդ .բեղ
 Ոստեղք ըղձից ծածկապէս ,
 Յոր բազում սիրտք անըզոյշ
 Իբրեւ ի բարձ ինչ .բընքոյշ՝
 Ասեն վայրիկ մի նըստիմք ,
 Ապա քաջիկ թըռանիմք :
 Այ հէգք, մինչ թեւք ձեր սրարզին
 ‘Նոր չարաչար պատատին .
 Յայնժամ ի զուր ի տատան
 Տայք դուք թեւոցդ եւ տըտան .
 Կամ ուժաթափ յօդս ի կախ
 Մեռելոտի կայք կըմախ ,
 Կամ թէ մնացուած ինչ ուժոյ
 Հասեալ օճան ի հոգւոյ՝
 Թեւահասարուտ եւ գըծուծ
 Հաղիւ լիջիք անձնասարուծ :
 Մի եւ այսու ինչ կարծեր
 Յամէն վտանգէ զերծանել .
 Անդ ոչ սակաւ լարեալ կան
 Քեղ եւ ծուղակք եւ դարան ,
 Հետաքրքիր բնութեան չարք
 Անբընաղբօս մեր սրտձառք ,
 Յոր մատուցեալ իբր ի զնին
 Ի կիրս և ի գործ մարդկային ,
 Ի նոյն ապա շողին սիրտք
 Թէ ոչ երազ փախչին միտք :
 Դարձեալ եւ յօդս են բաղայք
 Անդեղք արծուիք սուրահնեայք ,

Բարձրացելոյ մրտաց դէտ .
 Զորովք ածենն ահափետ ,
 Յանկարծ կալեալ ի խաւար
 Ծածկեն զհրպարտն օդաւար :

Եւ աստ դարձեալ երկրաքարչ
 Ի մարդ գիճինն եւ ի գարշ՝
 Ի հեշտախառնն բաժակ
 Թէ տաս ըզքիմն ի ճաշակ ,
 Ո՛հ , հարկանիս ի սիրոյ
 Արականեալ կենցաղոյ ,
 Որպէս թռչունն որ ի քաղց
 Ճարակեցաւ դառն ի գաղձ .
 Մոռնա՛ դու զմեզս աշխարհի
 Զի ջուր վերկշիդ քաղցրասցի :

Եւ երբ ըզքոյշ յայս բնաւէն
 Կարծես ազատ ի դիւէն ,
 Յիշեա՛ զի միւս եւս ոտիս
 Քեզ դարանի ոչ անոխ ,
 Որ ի խըրճիթս ու առագաստ
 Յանպատրաստից եւ պատրաստ ,
 Ընդ առաւօտս եւ գիշերս
 Եւ յամենայն իսկ բոսպէս
 Հասցէ յանկարծ ի սահուն
 Հսկող սահակն այն մահուն ,
 Ընդ որ կրուուէլ չիք օդուս ,
 Լոկ լաւութիւնն է անքոյթ .
 Իբրեւ գընտակ հրազինին
 Յօդս իսկ կտրէ զթեւ հաւին .
 Դառնայ յերկինս շունչ մաքուր ,
 Իսկ յոր արատ գոյ՛ նա ո՛ւր : . . .

Արդ ան ինձ քեզ մարտակից
 Զահն Աստուծոյ, զսէրն անբիծ՝
 Կենաց կըցորդ անբաժան
 Քեզ առաջնորդ եւ խըթան •
 Յառաջիկայդ մանաւանդ
 Որ զսուրբ ուխտին պարաւանդ՝
 Չեւ միջամուխ իբր ի ծով
 Կշուես աջացրդ հոգւով,
 Ընդ որ ի նաւ մենական
 Երեւք դրօշուք քրիստոսեան
 Թ՛ արժանասցիս սահարկել
 Գըսցես զերկինս անարդել :
 Ահա պընդեա զքեզ, որդեակ,
 Ընդ հաւատոց ամուր զեակ,
 Քաջալերեաց սուրբ յուսով
 Եւ բորբոքեա ջերմ սիրով,
 Դիր ըզսըրտիկդ ի քո խաչ,
 Մի՛ երկընչիր, երթ յառաջ :

ԱՌ ՈՒԽՏԱՆՈՒԷՐ ԵՂԲԱՐՍ

Հուր զոր յերկնից էարկ Յիսուս
 Լուցկիս սրտից պարզ ու անպարտ,
 Բոց հատանէ յերկինքս կոյս
 Ծըխամամբ զոհին բարդ ի բարդ :

Անէջ ցոլից ի ձեզ եղբարք
 Բորբոքեցաւ սուրբ հըրատ :
 Յանտաշ սեղանըն պատարագք,
 Եւ վերանայք անարատ :

Ո՛հ ես քանիցքս զիմ՝ նուիրան
 Յանձուկ եղեալ սըրտիս վէմ՝
 Կացեալ հեռուստ արտօսը յական
 Զինչ Գեդէոն նըկատեմ,

Թէ երբ եկեալ հրեշտակըն սուրբ
 Հըպի ճապուկ մականաւ
 Եւ Յիսուսին հարեալ զիս հուրբ,
 Ծըխէ զսրտիս ծուխ անբաւ :

ՅԱՍՏՈՒԱԾԱՆՈՒԷՐ ՈՒԽՏ

ԿՐԹՆԱԻՈՐԻ

Զոհք են, արիք ի գլուխ լերին սրբավայր,
 Սուրբ է նըւէրս եւ վէհ, հանուրց գերածայր.
 Գեղեցկաշէն՝ սիրան է սեղան սիրալի,
 Իղձ՝ սրատարադ, կամք՝ քահանայ, յոյս՝ լուցկի,
 Հաւատք են սուր՝ յօղից կապից որոշիչ,
 Սէր սրբազան՝ դու ես զոհին հուր կիզիչ:
 Բոց ծիրանի ծուխ արձակեաց քաղցրաբոյր,
 Ողջակիզին անոյշն եւ յամբս ոսկեթոյր.
 Հոտոտեցաւ Տէր, ամփոփեաց ի ծոց իւր,
 Զոհ եւ զոհիչ եւ բեմն ի մի կիզան հուր:

ՅՈՒԽՏ ԿՈՒՍԱՆԻ

Ո՞ւր պարայած ընդ երկնիւք
 Ըստ շունչ հոգւոյն հեղասիւզ՝
 Ի տես անդոյր եւ անժոյժ
 Աջօք հանդարտ եւ աշխոյժ
 Սլանաս երթաս դու վըսեր
 Աստուածային անմահ Սէր •

Ո՞ւմ յայտ աւուր տալ նըշան •
 Երկնաբուսիկդ այդ շուշան
 Ո՞ւմ ձօնեսցի երջանիկ ,
 Եւ սուրբ շըրթանցդ համբուրիկ
 Մահացուաց ո՞յր ի ճակատ
 Դադարիցէ խանդակաթ :

Ի կենցաղում մեղկաղէտ
 Որ ըզցնորից անկեալ հետ
 Բիւր ասպարէզ յօրէ օր
 Ի քէն օցաի հեռաւոր ,
 Գուցէ դեռ սիրան այն արի
 Որ վարիցի քեզ գերի :

Արդեօք յարեանց ճասպաղիս
 Երթանս պսակել ըզհոգիս ,
 Կամ վըկայեցն ի խարոյկ
 Քաղցրածաւալ ցօղիջիւք
 Զանբըծութիւնըս կրնքել
 Երկնի ծաղիօք լուսաթել •

Թէ մենաւոր ի մայրին
 Կամ յանապատն յամային
 Եւ ի վասար ծակամուտ
 Երթաս սսակել զալեւոյթ ,
 Կամ ճրգնողացն առ խրախոյս
 Կարդալ համբաւ բարեյոյս :

Ոչ ի խրուան բազմամբոխ
 Ուղղես դու՛ նթացս հեղակոխ .
 Ի խորչս հանդրեան յալէծուփ
 Զասարնջական քոյին սուրբ
 Խընդրես ի ծոց մի կուսի ,
 Սիրտ վառ յանձուկն Յիսուսի :
 Հասկա թեւօք քոյին հար
 Եւ զսարտուցեալն անդրր սար .
 Տեսցեն աչօք սառնորակ
 Ըզխաչին դիրդ նահատակ ,
 Տեսցեն զի դոն յաշխարհի
 Որոց նա չէն արժանի .

Տեսցեն զօրոյն զայն պատուար
 Զամէն բարեաց զօրավար ,
 Ըզմատաղ սիրտն այն վրստահ ,
 Ում չարկանէ այլ եւս ահ
 Աշխարհ՝ ժողովն ըստուերաց
 Որ խոչընդոտն է բազմաց :

Օն անդր ի բաց յայն սրբոէ
 Զուր կրրից ջահ եւ աշտէ .
 Աճապարեաց քան ըզձեզ
 Հար ըզնա սէր սրբբակէզ ,
 Որ ճանաչէ զմահացուն
 Ամահահուծեան դոլ մարթուն :

Նիզակակիցք զաչացուք
 Աշխարհ, մարմին եւ դէպ դուք,
 Առեալ ըզհաղք ձեր եւ լար
 Ի բաց էլէք վայրասպար .
 Ոչ ումէք ոչ է բաժին
 Որ ձօնեցաւն անմահին :

Սիրուն այն աման է սիրոյ ,
 Ծըրբար ստաշխին եւ զըմուոյ .
 Քաղցրիկ հոտով արտաքուստ ,
 Եւ քանի՞ն ի ներքուստ .
 Ոչ ծըխեսցէ նա այլուր ,
 Բայց ուր փրկչին վառի հուր : . . .

Այլ նա նընջէ . . . մեռանի . . .
 Ծածկէ զնա վէմըն խըրթնի . . .
 Շուրջ բոլորեալ քերց կուսից
 Լան ըզբոյրն յաչք ցօղալից : . . .
 Այլ ո՛չ . աշխարհ անդ մեռաւ .
 Նորակենցաղ նա յարեաւ :

Ըզթանձըր քօղ կենցաղոյս
 Հերձեալ հողւոյն իսկալոյս՝
 Ըզհաւատոց ելոյց ջահ
 Յերկնաբորբոք հուրն անմահ ,
 Ի թէլս յուսոյ առեալ հիւ
 Կախի 'նդ երկին եւ երկիր .

Յանմահուլթեան եւ սիրոյ ,
 Որ են դաւառք Աստուծոյ ,
 Այժմէն եմուտ յանդաստակ
 Եւ նազելով համարձակ ,
 Նազէ ի դոդ մի նըսեմ .
 Ո՛վ աղաւնեակ օդաճեմ : . . .

Նազէ մընչէ սիրաբար
 Յովնատական քաղցր ի բարբառ .
 « Ընկալ Տէր զսիրտ եւ սուր խաչ ,
 Բայց ի մահուս ել յառաջ .
 Եւ մոյժ ի քոյդ սրբակասան ,
 Կացուրդ սրբախց սրբբազան » :

1844

Ի ՆՈՐԸՆԾԱՅ ՔԱՀԱՆԱՅՍ

Ըզբէզ ի բարձրն Սիոնէ՛
 Ուր յերկնախօս լարս ի Թինդ
 Յանտրխորական նազեալ խինդ
 Իբրեւ ճաճանչ ճօճաս յերկնէ ,
 Եւ ի Գրլխոյն սիրաբորբոք՝
 Ուր յաստուածեան ճապաղիս
 Արտօսրակաթ յառեալ բրբօք
 Թեւապօղեալ լուս ճեմիս ,
 Ըզբէզ կարդամ Երաժիշտ
 Ամահութեան քարոզ միշտ .
 Ահէզ բեմին եւ գերասանձ
 Արդ ի բարձունս հաւատոց
 Ուր մաղթանաց եւ խընկոց
 Ամպ վերանան հեզոց անձանց ,
 Կացցէ քընար քո հոգերգակ .
 Եւ յանթառամ դարաստից
 Հրեշտակահալուս չք. քնաղ սրասի
 Նուիրականացս եւ ամբիժ

Հուք ճակատուց՝ իջցէ վայր ,
 Յոր աջ կարկառ Աստուածն հայր :
 Քանի՛ վրսեամբ ըսքանչեղիս
 Աջդ այդ յայտնէ մեծդ Աստուած ,
 Յորժամ ի տուն մահացուաց
 Խընդրես ղերկնից քոց արժանիս .
 Յորոց հաւաաք եւ սէր ամբիծ
 Իբրեւ բուրումն ընդ բոցոյ
 Մատաղօրեայ ի սուրբ սըրտից
 Ճենճերին քոց կամաց հաճոյ .
 Եւ առ ի քէն սիրաբար
 Յաստուածութեանդ տաղաւար
 Կոչեալ հասակքն այն տղածրի ,
 Դողդողալով անշըշունջ
 Իբր աղանիք հեղ մրմունջ
 Ի սաղեմեան քում տաճարի ,
 Մատչին ի բեմնն վեհավայր
 Դեռ մանկութեամբ ամօթխած ,
 Աստուածընտիր գըլուխք ի վայր
 Սիրտք ի բարձունըս սլացած
 Կոխեն զահեղ զայն սըրահ
 Ուր քրովբէից խակ է ահ :
 Ո՛ղջ լիք մանկունք ինձ նոր Ղեւեայ ,
 Ոյց ոչ իբր անդ յԱհարոն
 Անուշահոտ կինամոն
 Տեղայ՝ նդ գըլուխն՝ ի խորշխորշեայ
 Պատմուճանին պճեղնաւոր ,
 Զոյր աստ հրեշտակք ունին վերջս ,
 Այլ ինքն հոգին սուրբ աստանոր
 Հեղեալ ըզնորհս իւր անղեղջ ,

Ըզսիրտ, ճակատ եւ զոգիս
Սըրբէ գործէ սըխրալիս :

Ո՛հ. մինչ ի տիպ նոր նաւուղղի
Ընդդէմ ալեաց սարսըռուն
Մըտայոյզք յեզը ի ծովուն
Զանհուն կըշուեալ աջօք զուղի
Տրոփմամբ սըրտիւք յաստուածութեան
Զանձինս ի ծով խառնեցէք,
Եւ յանմատոյց ի դաբիրայն
Ընդ հրեշտակաց պարեցէք,
Երկին երկրիս ձայն արար,
Էջ քաւութիւն սըրբարար .

Եւ մըրտենեաց պէս ի տատան
Ձըգմամբ մատանցդ երերկոտ
Մինչ յաշխարհի դէմս աղօտ
Ելէք կընքել զսիրոյն նըշան,
Տըւեալք սնտոի կենաց հրաժեշտ,
Եւ իբր ամոլք հոգեկից
Ըզպարանոցս առ լուծըն հեշտ
Ետուք յակօս անդր երկնից,
Ո՛հ, հրեշտակաց ի տիպար
Հանդիսացայք թեւասար .

Խաղաղութեան ձայն սըրտառուջ՝
Երբ ի շըրթանցդ երերուն
Իբր ի լարից դեռ թըրթռուն
Ըզնախն հընչեաց քաղցըր մըմունջ,
Եւ սըրբագործ դողդոջ մատունս
Երբ յուս արկէք անմահին,
Էջ հաշտութիւն յաշխարհի դրունս .
Եւ սլար հոգեաց վըշտագին

Թողեալ ըզբանտն՝ ի ձեր ձեռս
 Թեթեւ թըռեան ի յեթերս :
 Իսկ մինչ ի պահն այն ի յաւեժ
 Անմահութեամբ պատարուն՝
 Ընդ արարչիդ բարձրելոյն
 Որպէս յԱզին ջուրք զուգավեժ՝
 Սիրոք ի սիրտ անդրը խառնեցան ,
 Տիպք ջընջեցան մահացու ,
 Քանի՛ գաղտնեաց քօղք վերացան
 Ձեզ ի խորհուրդն ահարկու . . :
 Լըռէ քընար . մի այլ բանք ,
 Հոգւոց ելցեն արձագանգք :
 Արդ իմ օծեալք երջանիկք ,
 Որք ի տիոցըդ ծաղիկ
 Նըւիրեցայք ի տաճար
 Խորհրդածուք դուք անձառ ,
 Մինչ զըւարթունք եւ ըզգաստ
 Երթայք այգուն յառագաստ
 Չոգւոց փեսայդ ըզՅիսուս
 Առնուլ գըրկաց հօրն ի լոյս ,
 Ի սեղանոյն հրաշազան
 Իջուցանել բազմարան ,
 Եւ դէմ ընդ դէմ սըխրանայք
 Եւ բիբ առ բիբ հիանայք ,
 Եւ շուրթն առ շուրթն համբուրիք
 Եւ սիրտ ընդ սիրտըս խառնիք ,
 Եւ ի ներքին անձանց տունս
 Յանփորձն աղտից կենցաղոյս՝
 Ուր մանկութեան դեռ փըթիթ
 Արձակէ քաղցըր ժըսիս ,

Յայնժամ, թէ ոչ թելք հասցին
 Աստուածախօս ձեր ըլծին,
 Ո՛հ, քաղցրասցի յայնժամ ձեզ
 Ընդ մարդկու-թեանքս դրոհի
 Անեւ յիշումն համառօտ
 Եւ սըրտեկիս այս կարօտ :

1844

Ի ՅՈՒՅԷԼԵԱՆ ՔԱՀԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Հօր խոյ հոգևորի .

Բոյլ շնորհաց, էջ ի պարտիզէն սովվերայ,
 Բողբել զսուրբ ճակատ յանանց համասպրամ.
 Ուրախ լեր հայր իմ, աւետեաց է պատգամ,
 Նոր լյս նոր շու գայ ի սըրտիդ դարերայ,
 Ուր յաւերժին սէր թեւածեալ թըրթըռայ .
 Յոստոյ խաչին շիւղ հաշտութեան անթառամ
 Եւ ձայն կենաց արձակելով յամերամ,
 Նոր զքեզ ձօնել նոր տաճարի Սաղեմայ :
 Այլ յիս կենացն հարկանէ ձայն զարձագանդ .
 Մի՛ դք խանդայ 'նդ իս, զի եմ հօրքս ժառանգ,
 Ոյր սիրտ՝ փրկչին ասպընջական զամս յիսուն
 Չրկարօտէր փողով այդու հաշտութեան :
 Ուրախ լեր հայր իմ, ի կէս քօ սուրբ դարուն,
 Ինձ քաւիչ, քեզ յաղթից է այդ յօբելեան :

1844

Ի ՅՈՒՆԵՍԿՈՒՆ ՔԱՂԱՆԱՅՈՒԹԵԱՆ

Հ. Դաւթի Վ. Ճերմ.

Մի ով գուշակք ի Բեդդեհէմ մի 'նթանայք
 Խնդրեւ զօժեալ Տեառն ի տուարածս եւ ի մարգ.
 Զոր սրբաւոյս իւղովն օժ Տէր երբ եգիտ,
 Մըխիթարայ ի տուն հարցէք ըզՎաւիթ.
 Ոչ յայտ կարմիր, ի հոպս հերաց շիկորակ
 Սոսկալիթիար ոսոխի գոլ նահատակ.
 Այլ ի տեսակ ձիւնակերպիկ, աջ սորուն
 Կընքէ դժոխոց գաւազանաւ գալարուն:
 Սա իւղագլուխ նազի, չեն պէտք մուրտ, Թեղօշ,
 Զորոյ ներբող Հանգրին հընչէ եւ Թաշոշ*:
 Յերբ ի բեմէն լոյս հոսեն ջահքն իննակնեան**,
 Պաշտեսցի քեզ, Ճերմակ, յաւերժ յօբելեան:

1841

* Թասոս կղզի, ուր արգելաւ երբեմն ի հալածանս:

** Պղնձածոյլ ջահք իննաշտանակեան, ճարտար ձեռագործք նորա:

ԱՌ ՆՈՐԱԿԵՐՏ ՎԱՐԴԱՊԵՏՍ

Ի ծայրդ ի սուրբ գաւազանիդ երկնադէտ
 Բարձրացուցէք ըզսիրտս, ո՛վ հարբ վարդապետք •
 Նեցուկ հոգւոց, դա եւ լըծակ տերունի,
 Ուղղել վարել զկարգ աշխարհիդ ծերունի •
 Առէք հանգոյն Յեսուէայ, երթայք յաստարեզ՝
 Վարդապետացն ուր վարդապետ կոչէ զձեզ •
 Եւ յայն երկիր մանաւանդ յայն սրացարուք
 Որ էր բարեաց երբեմն հանուրց խանձարուրք,
 Եւ մեր, աւանդ նժդեհութեանս՝ տեղի բուն,
 Զոր սէր հաստչին կազմեաց, ցասումն եղծ նորուն •
 Յորժամ կրրից գազանադէմ գագաթունք
 Պայքարեցան ընդ ձեզ երկինք աննրկունք :
 Փութացարուք տուք՝ գաւազան առեալ զայդ՝
 Չար խաւարին մըտաց հարուած բարկաճայթ •
 Խեթկիչ գըլխոյ յամառութեանն անձընդիւր,
 Խորոց կենաց ընդ մահ, նդ ուղիղն եւ ընդ թիւր •
 Յորժամ երկիր գրգռէ ու երկինք զայրանան
 Ըզգա ի մէջ արկէք հըզօր հաշտարան •
 Ի տեսակէդ բերեալ ըզբարս աղաւնոյն
 Լիք խորագէտք իբր որ ի ծագ անդ ցըպոյն,
 Որ զի հանգոյն մովսիսայնոյն չրթնաբաց
 Կըլցէ զէզու դարուդ շողփաղլի եւ զրասաց :
 Ձեզ գաւազան հեզի հովուի ոչխարաց
 Հօտապետին ուղղել յարօտն երկնընթաց,

Հսկել առ ձեռն ընդդէմ գայլոց եւ գողոց
Եւ զամենայն մերժել մոլար ըզփողոց :

Ե՛լ եւ ընթա 'ւետարանիչ Սիոնի
Գոչեա՛ ի գլուխս լերանց ու ի խոր տապանի .
Ա՛հա դողան սիւնք տատանեալ եւ բեմ սուրբ ,
Տեղի տան վէմք որպէս դիմաց ինչ քօղ նուրբ .
Եւ ձայն , « Խօսեա 'պաշխարու թեան վարդապետ
Ձոր կնիք անուանդ եւ աշխարհի հայցէ պէտ » :

Լըւար , եղբայր , զաստուածախառնն պատգամ
Ձոր կրրկնեցին վերուստ վեհից պատրչգամք .
Արդ խրախուսեաց արդ զօրացիր արդ փուլթա՛ ,
Չասպաշաւանս ի ձեռն առեալ յանդեղայ ,
Խաչակրնքեալ մեղսամակարդն հեղ յաշխարհ ,
Եւ կուրասցին շաւիք զժօխոց ի խոնարհ :
Վարեաց սիրով եւ հօտ քո քեւ բորբոքի ,
Քրտնեաց , եւ քեւ թըւին բեռնք փոքրոգի .
Կօխեա՛ զշաւիղս , զհետ քո գայցէ հօտ քոյին ,
Հար մահանաւդ , ահա բացան մուտք յերկին :

Ի ՆՈՐԸՆՏԻՐ

Գահակալ Մխիթարայ Գ. Գ. Վ. Հ.

Մայրաղարդեալ լուսաբողբոջ տըւընջենիս Կալ ի
յայտ

Յանեղին ծոցոյ բղխամամբ սիրայորդոր հաճու
թեանց՝

Ի մէջ սրբոյ ստուերանըստաց սրտիցս եհար
ճառագայթ .

Արի՛ ըրաժիշտ, լոյծ ի վիմէն ուր ողբայիր զհօր
մեր անց ,

Ըզհրճուական լոյծ ըզքնար ,

Զարտասուլաթոր անդեա զթեւ .

Յաջորդեցա՛ւ Մըխիթար ,

Սիւգ Սիուինի քեզ ազգեւ :

Առցի հարցի բարձրացուցի այսօր սրաի մասն ի
վեր .

Յերկնից խառնին յաղիս հոգւոց ման ի մանի
խինդք ի մեզ .

Մեծամեծար ըսքանչեւեայ Բարձրելոյն ասնք՝
էն պատուեր ,

Տօնեցէք , ի յեզր հասաք ընդ մըտածուփս աս
պարեզ ,

Յոր յայսքանեաց ի յամոց
 Ի մենաչուս ի տապան՝
 Ընդ բարձրայօն վէգս այսոց
 Տալով տայսք մեծ տատան .

Առ ձեռն առ հուսզ ղերկնած ըրարըն դիտելով Մա
 սեաց յոյս ,

Ճապաղէին աչկունք ի ծով ափանն ըղձիւք ծա
 բաւիք .

Տատանեցան ընդ տապանիս բաղքբըն հայկայ
 յարտասուս ,

Խարխիս ի դող գայթ ի գայթի սահեալ զնային
 սիրտք ու ալիք .

Մինչեւ եցոյց ձեռն անբուն

Ընդ մէդ ընդ ամսլ առաջնորդ

Մինչեւ ըզոյս մեր թաղուն

Ըզքեզ, հայր, ցոյց ռահահորդ :

Ընդ տեսն ընդ քո հըսարտ հրոսակքն հարթեալ
 հարան դիր ու տար ,

Հանգրստահանքն ըզմըկանամբք կոյք խայտա
 լով մերձեցան .

Ահա վարչիդ աւանդէ զկապ սրտիցս ի յաջ՝
 Մըխիթար ,

Որ քեւ երկնից զօղիմք համայն տարերց՝ առ
 կունք անսասան .

Եւ ահ՝ առեալ զիւր բողբոջ

Կոյսն աղունեակ գայ հանդարտ ,

ԶԵյցելուծին՝ իւր անխոնջ ,

Պրճ՛նէլ զընտրեալ քո ճակատ :

Հովանացին անդ յաւերժ թեւք արծաթափայլք
 Խեղուհւոյն ,
 Երկնակաճառ քառքն հսկեսցեն քո նախորդք
 ծագս ի քառեակ ,
 Զբազմամանուած վըշտաց վիշապս ընկճեալ քո
 քաջն** համանուն ,
 Պսակահամբար ընդ նաւս արհի սխրացի զարմն
 Արամեակ .

Եւ յանուանէդ մեծ եւ սուրբ

Պատկառեսցին տիեղէրք ,

Կամ թէ հրաշիցդ հարեալ հուրք

Կիզցեն ըզքնարս խմ եթերք :

1846

* Ի տօնի Այցելութեան Տիրամօրն շնորհալ
 լինելով :

** Ս. Գեորգ զօրավար :

Ի Գ Ա Ր Ձ

ՀՈԳԵԻՈՐ ՏԵԱՌՆ ՅԱԹՈՌ ԻԻՐ

Օծուքեաւք Արնի Եպիսկոպոսուքեան .

Բաղդք մեր հասին, բաղդ տանդ եհաս Մըխիթար,
 Յասաուածային շարժեա՛ զորդիքս ի կիթառ .
 Որք զանձկալւոյն զհետ թընդայիք սալաժոյժ,
 Բաղդք ձեր հասին, հընչեցէք սիրտք՝ իղձս անոյշ .
 Զարթո՛ Սիսակ, զարթո՛ զպարծանս վաղեմի,
 Նախանձ բերեալ Սեմայ վիճակդ Յաբեթի :
 Բաղդք ձեր հասին ո՛ ծմակացեալ դուք մարմանդք,
 Վարդից խնկոց մըրաից լերուք կոյս արդանդք՝
 Գեղզեղ ի գիլս համբուրեցէք զմարգաց ծոց
 Ո՛վ ծըփծըփեալ ծընունդք յուլթի ծործորոց .
 Սըփուեցէք սօսք տերեւաշարժք Արեւեաց
 Քաղցր հովանի հօտից ի ձեզ կայտուելաց :
 Զարթիր փուլթա՛ դու մանաւանդ սրարառաջ
 Եկեղեցեակդ այրի, թախսից մատն յաւաչ,
 Ո՛վ դու մերոյն Սիոմի Նախդ ի հարսանց
 Որ յայնքան դարս չեղեր ի քում Տեառնէ զանց,
 Որ յԱնանեան եւ Ստեփանեան դահ վէհից՝
 Նոր ընծայէ փեայ սիրուն եւ անբիծ .
 Իմաստութեամբ հոժ ոչ լոկոյդ տալ բեղուն,
 Այլ համօրէն յաննախանձ տարիլս սիրուն :

Լեառնն կենաց, խոնարհեաց բարձրող Մասիս,
Տէս գրաւական ձօնեն Սիւնիք որպիսիս.

Տէս դու ընդ մեզ զաստուածաշուք հայր արհի,
Մըխիթարայ տանս յոյս եւ հայ աշխարհի:

Ո՛հ, ես ըզբեզ խնամողդ օրհնեմ մահացուաց
Որ այսպիսի տաս բաղդ հովտիս արտասուաց,
Իւ ծանրացեալ նուազի սըրտից հեղիկ սուգ,
Ի ձեռատունկ դրախտդ հաշտութեան ձեմի սիւգ.
Թէ օդք շնչեն, գոռան այերք, ծովք յուզին,
Եւ եղկէլեացս յուսոյ թէ հնարք թանգուզին,
Համայն անխռով շեշտ վերակնեմք ընդ ճակատ՝
Յոր կայ հաստչիդ մեզ աահահորդ հաշտ հըրատ:

Ո՛վ վեհ հոգի, հայր սքանչելեաց ծածկատես,
Ամբարձ ըզմիտս իմ տաճարիս քան զհանդէս,
Զարուեստ մատանց քոց ընթեռնուլ զոր գրծեր՝
Յորում աւուր ընտրեալ ըզԳլուխս եւ օծեր,
Համառօտեալ զճակատագիրս մեր համբուն
Ի կուսական տախտակի վսեմ ճակատուն.
Սակայն հրամանք են լըռութիւն համբուրել,
Մի զհոգւոյն տառս՝ թոթովանօք եպերել.
Այլ եթէ լուս՝ թէ խօսուն՝ իղձք նոյն են մեզ,
Հայր, անեղին աջով ի սիրտ զուգեալ քեզ,
Որով չքքնաղ խորհուրդք, սեր եւրս չքքնաղ
Բացապիայլէ եւ յակնարկել քում խաղաղ:
Ծածան ծըւէնք ամպոց ոստոց ի զեփիւս
Հանդարտագին աւուրց ցուցակք են համբոյր.
Եւ երբ երկին մըխիթարեան ժըմտի՝ դրախտ
Ոչ վայրասպար որոնէ սիրտ զիւրն բաղդ.
Ոչ վայրասպար Հայկ զօգնական իւր աստ տես,
Եւ Սիսակայ սուզաւ տըրտունջ սըգատես,

Զ'առ ի մորմոք մընչեալ սըրտինն հառաչանս՝
 Տէրըդ Գէորդ, յանուանդ յեղեալ աքձադանս :
 Քում սիրայնոյ երկնասպարդեւ քում սըրտին
 Ժողովք սըրտից իբրեւ երկնից ակն ունին .
 Դու զծայրացեալ ծերունեաց վեհըս պարու
 Գըգուեալ ըզկեանս երկարեսցես յանդորրու .
 Դու յեռանդուն յերխտասարդս ազգեալ ոյժ
 Տեսցես խիզախս ի զըժուարինս եւ ըզպոյշ .
 Առաքինիդ դրոշմեսցիս սիրտ ի մանկանց՝
 Առաքինեաց յարուցանել ազգս հարանց .
 Քեւ կայկայեալ կացցէ պանդուխտս այս խորան
 Շըրջապարիսպ թեւօք տիկնոջն աստուածեան ,
 Որ ակն յայտնի յայցելու թեան իւրում սուրբ՝
 Քեզ հաւատաց զտուն ծառային բազմածուփ ,
 Զի յօր ցաւոց՝ զոր դրաւ սիրոյ օժտեաց տանս ,
 Քեւ ծանուսցին՝ թէ չեն պատիժք՝ այլ վորձանս ,
 Եւ թէ երբէք հեծեծեսցես յայնքան վիշտ ,
 Նեցուկք ահա նուիրեալ որդիքդ անցցեն միշտ .
 Այլ նախահօրդ արեւ քեզ ցանկ ընդ առաջ
 Եւ խոհականն արիութիւն կացցէ յաջ :
 Զորդիս թոռանց տեսցես յարդիւնս եւ հասակ ,
 Հանուրց յաղթեալ ի լուսակիլզնն դիսակ .
 Երջանկութեամբ աստիճանեալ եւ վառօք
 Յերկինս դիցես զոան անկարօտ հուր կառօք :
 Գեր քան զոսկւոյն՝ քեւ եղեմեան ծընցի դար ,
 Երկցու թեամբն իցէ լոկ նախ՝ Սըխի թար : ...
 Ահա լուարովք բարձեալ զհոգիս ընդ երկինն ,
 Զի այլ ուստի՞ ձայնս աւետեաց՝ Եղիցին :

Մ.Ռ. ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐ

Ընծայելով զվարս Ս. Գեորգևայ .

Ձերկնաւորին քո կենցաղ հռչակապանծ պաշտ-
պանի ,

Ձեդեալն ի քէն կէտ դիտման՝ դեր քան զանունն
ընտանի ,

Ի նախնական հարց երկոց նըւիրելով խայրի նոր՝
Գրաւականս ընծայեմք քան ի խրախոյս ու ի
յորդոր ,

Թէ հոմանուանդ զուգիս քաջ համաշաւեղդ յաս-
պարէզ ,

Նովին սիրով անարիւն դու ճենճերեալ յողջա-
կէզ .

Ոչ ժանեւոր առեղի շըրջաբերեալ ընդ հողով ,

Այլ յանհամբոյր ի գեղոց ժամանակիս վըշտ-
յովով .

Սակայն քոյդ քէզ Գեորգէ , մաղթեմք՝ եւ կայ օդ-
նական ,

Ընդերկարել աննըկուն ըզհանդիտիդ սուրբ շըր-
ջան .

Ձի վայելմամբ յերկնաձիր մեր ի յօրհնիսդ հայ-
րադուծ

Նախաաղալիդ քեւ աճեն՝ եւ քեզ մեւք փառք
անկապուտ :

Ի ՅՈՒՆԵԼԵԱՆ ԿԵՆՍՅ

Հոգևոր Տեսաւն .

Ո՛վ կենսաձիր ջահավառեալդ յարիխասկիղըն
 յԱնեղէն

Դիտապետիս մեր քաղցր առուրց ասող այգա-
 ծին լուսադէս ,

Ի կապուտակ յանձուլի ծովէս եւ ի Մասեաց
 շափիւղէն՝

Ե՛լ վերացիր զակն անքըթիթ ի քոյդ կալեալ
 Գէորդէս .

Առ եւ ընկող վերամբարձ թեւս , այսքան սրը-
 տիւք ակըմբիս ,

Վառարանիդ քո անմահի կացեալ հանդէս եւ
 գոգջիր .

« Հովանացեալ ինեւ Պետիս որդիքն ահա շողալ
 զիս

Մըշտափըթիթ լուսով յօծեալ ճակատն՝ ըղձան
 սիրալիր .

Ի հրամանուած երդուեալ ի ծամբս ծալ ի ծալ ճա-
 կատուս ,

Ես ի բուլիցս յուրաստ ի սուգ երթեալ նըստիմ
 տարադէմ

Թէ ոչ այժմէն կընքի հայցուածս՝ յաւելուածով
 իմ շքքոյս » :

Յաւերժական յակնէ լուսոյն ահա հատաւ ճառա-
գայթ ,

Զարծաթափայլ լըցոյց ծոց կենացդ աստեղ
ուղփաճեմ .

Կեցցես մեզ հայր , վերնոյդ հանգոյն՝ աստղ ան-
թառամ լուսացայտ :

1847

Ս. ՈՒ Վ. Ր ՈՅՐ

Ի Հռովմ դարձ առնկոյլ .

Եւ այսպէս սարտ ուրեմն հասին անյեզլի
Ըզհրաժեշտին մաղթել ուջոյն տըխրալի .
Քեզ որ յերկար նըժդէհ յախորժ քո ասնէն ,
Նըժդէհ գըրկաց սիրեցելոցդ համօրէն ,
Երթաս անգրէն դարանակալ ի նոյն վայր՝
Զնախնին առնուլ ըզմենական աւուրց լար .
Երթաս եւ ոտք ի յեսս ի մեր կոյս դիմեն ,
Երթաս եւ աչքըդ չըմեկնի յականէն
Որ անքըթիթ դարչապարացդ յառեալ զհետ
Փոխէ չըփոթ զարտօսը եւ խինդ ետ ընդ ետ :
Ո՛վ դառնութիւն բաղդի , եւ մեզ ապգէս դու ,
Եւ դուք երկինք ժըլատք սըրտից սիրարկու
Առաքինեաց խի անջրբուէտ անկանիք
Զըտալ վայելս ի միութեանըս կընիք :

Ո՛հ, ես ըզձեզ երգմնի առնեմ քաղցր երկինք,
 Օն ասացէք, իբր անարիւն զատչին սիրտք
 Որ թել ի թել շարամանեալ սերտ մածան.
 Մըտերմուծիւն լիցի նշաւակ տըրտումուծեան :
 Ոչ Վըրոյր, ո՛չ սիրտ մըտերմաց անքակ կայ
 Ընդ քեզ պանդուխտ դեգերեսցուք յարակայ,
 Եւ ի քաղցրիկ զըրկեալ տեսոյն իրերաց
 Վըտտահագոյն յառեսցուք զակն եթերաց,
 Զի՛նդ քաղցրուծեան ըզգառնուծիւն նք սիրոյն
 Տեսցէ ի սիրտ մեր երկնաւորն ուղղուծիւն :
 Քաջաց միայն է զսէր կարդալ յասպարէզ.
 Թէ եւ հեռիք՝ անդուլ լիցի մարտ ընդ քեզ.
 Ընդ բազմուծեան մըրցեսցիս քաջդ ընդ սրտից,
 Ընդ բազմուծեան եւ մէք քոյոց սուրբ ձըրից :
 Այո՛ Վըրոյր, հանձար քո պերճ եւ զըւարճ
 Իմաստուծիւնդ հէշտ ու ապուլեան քո կապարճ,
 Գուծք քո անխոնջ առ անծանօթ եւ ծանօթ,
 Անձնանըւէր քո պարապմունք սիրայորդ,
 Քաղցրը ժըւլիտ ի դէմս ու ի շուրթն անուշակ,
 Որ ազնուագոյն ներքին դիմաց են գուշակ,
 Մէն են հարուածք, զոր դու չըտալ չըկարես
 Եւ չընդունել ըզնոսա վէրք մեծ են մեզ.
 Ստեղծուածք ինքնին ճարտար մատանցդ երկասէր
 Ի գգոն թերթիցըն բարբառին ի սիրտ մեր :
 Լալով ըզքեզ, այլ յարի սիրտ յուղարկեմք.
 Ուր Մըխիթար կոչէ աստեղքք լուսածեմ.
 Ի սէր նորին անկ է նուիրել եւ զիրար
 Դէտն ակն եդեալ յաղթանակաց անվրթար.
 Քանիցս ի սէր տան քո ու ազին փոխես քայլ
 Ի տապալեղն ի հոովմ ընդ քերտըն մըտեալ,

Մըխիթար ինքն չափեսցէ յոսկի չափ ,
 Յերկնուսա ուերկրէ եղբարք հարցեն ծափ ի ծափ :
 Ողջամբ գընա գըլճիս ընտրեալ եւ սիրուն
 Այսքան սրտիւք մեր սիրալիւր ու ակաղձուն .
 Ոչ յՈրատեսայ քընար ըղնորըդ Վիրգիլ
 Եւ քաջ հընոյն թարգման՝ յանձնեմ ի զեփիո ,
 Այլ ի նոյն Տէր՝ որ զքո ծագեաց քաղցր արեւ
 Ի տանս Մասեաց քաղցր ի խրախոյս եւ պարգեւ :

1844

Ի ԲԱԺԱԿ ՀՐԱԺԵՇՏԻ

Արնի ևսխկոսութիև Տարօնոյ .

Բաժանի բաժանի , որ ըզսրբտից մեր ի թինդ
 Մատուուակես խառըն զարտասուս եւ ըզեփնդ ,
 Ընկալ եւ զկայլս ընդ օշարակն անմահից
 Զոր Տարօնեանն ոգի ցողէ ցընծալից .
 Եւ քաւեսցես ճանասպարհին ի Հոռով կոյս ,
 Ընդ որ ուղւոյ առնեմք զմասունս մեր հոգւոյս .
 Մինչեւ անդրէն նոքիմքք պաշտեալ յայս տաճար
 Եւ դոյզն իսկ քո պարզեսցի մրուր տըխրարար :

1844

ՅԱՆԱԿՆԿԱԼ ՅԵՏԱԴԱՐՉ

Եղբոր յուղարկելոյ ի նաւ .

Եւ զինչ կարծես ըզպատահումնրդ , Պետրէ ,
 Ճշմարտութիւն թ'երազ ըզմեզ ինչ սկաորէ .
 Եւ ոչ խսկ մին . սիրոյն հընարք բարեգութ
 Գործեաց ըզխաբս՝ ի դիւր ցաւոց և ի զայրոյթ .
 Հուր ջուր եւ օդք դաշինս կըռեալ ընդ իրար
 Չէին արգել առ տէրունիդ ճանասարհ ,
 Այլ ըզպարգեւս անակընկալ երկնէին
 Ըզտրտմախառն ողջունի կնիք զայս յետին :
 Մինչ ձեռն ի գլուխ դարձ արարեալ մեր լըռիկ
 Այժմէն ըզքեզ հազար մըղոն տարածիդ
 Յափանց յափունս սոնտեան տահել դիտէաք
 Թաւալելով ըզսիրտս յալեացըն կուտակ ,
 Ո՛վ ճառագայթ ի մուտս արփելոյ յեղակարծ ,
 Միթէ կարօտ էիր եւ նորս արտասուաց ,
 Որ համառօտ յայտնեալ ի նոյն եւ խուսես ,
 Առ զաչս ըստ քէն մանրաքընին գործել եւս :
 Մի եւս այլ , երթ փախիր ի քոց սիրելեաց ,
 Գըացես ընդ քեզ ի ցանկալին հայրենեաց :

Ո Ի Խ Տ

Հոգեկից Սիրելոյ .

Ոգի անմահ, որ ի մահացուս երկնից չափ
 Վերապատուեալ զհոգեհարազատ սիրոյն կապ՝
 Ըզմբտերմաց բարձրացուցանես սիրտ յերկին ,
 Զ' ի յարազուարճ՝ յաղբերէն հեղցի սէր կրկին ,
 Համբուրալից մերթ շրթամբ վարիս ի զօգն այն
 Որ աստ զանդորր՝ անդ զանմահութիւն խոստա
 նայն ,
 Եւ մերթ հուր սուրբ յեթերաց թափես ի մին
 յայնց
 Զի առ ընկերն ընթացին փոյթ ցոլք կայծականց .
 Հովանացիր յօժեալդ իմ գազաթն ի Գուրդէն
 Զոր իղձք հոգւոյս յերգումն ուխտական ընդգրկեն .
 Խոնարհեալ յունկն, ի սիրան՝ ի փոքրիկն այն Եդեմ
 Աստ, զի ես ի Յիսուս ըզնա քաջ սիրեմ .
 Լէր արեգակն ի նա եւ լուսնակ գիշերի
 Աստղիկ հըսկող ի գազաթնակէտ բեւեռի .
 Եւ վերասցլս մի, բայց թէ յերկին կոյս կամ յիս
 Զանկեղծ սրտին շրշնջել սատգամս հոգելիս :
 Անմեղութիւնդ՝ արարեալ ըզնա քեզ հաղորդ
 Յաւերթացի անդ մինչեւ ի յօրն հոգեկցորդ ,
 Յորում ըզհետ թոռուցեալ քո միոյս յերկուց մէջ
 Զանբակ ընկերն ըզկնի ձրդելով բազմատենէ՛ջ՝
 Կրկնաստեղաց տիպ կաճառանաւ բարենշան՝
 Մըխիթար զիւրն տեսցէ Գուրդէն ու Ալիշան :

ԱՌ ՀԱՐԱԶԱՏՆ ԻՄ

Ծովալուռերով յԱմերիկա .

Սիրով Սերոբիդ սիրտըս ձայն առած
 Լուռ միայնութեան ճրագիկըն վառած՝
 Գիշերէ գիշեր յանձանօթ ճամբայ
 Մինչեւ յԱմերիկ քո հետ կը թրթուայ,
 Որ թողած սրտիդ հատորն աղուական
 Հազար փարսախով կ'երթաս բացական :
 Ո՛հ, ես բարեկամ կոչեմ եթէ ոչ
 Այն բաղձն՝ որ կրկին իմ գրկէս դողդոջ
 Զքեզ յափրջուակած յԱդրիոյ խորշէն
 Կ'անցընէ ցամքներն ու ծովերն ամէն,
 Մինչեւ յայն երկիրն՝ ուր իմս հակառակ
 Ասողեր կու ծագեն, դառնան եղանակք :
 Ովկիանոս, ծով դու մեծ եւ ահեղ,
 Գիտե՛ս որ նրման ծովհաւին անտեղ
 Որ զհողն ուրացած՝ ի գիրկդ անկայուն
 Երթայ կու հաւտայ իր բոյնն երեքուն,
 Սրտիկս է ելեր ու ալիքներուդ մէջ
 Յանդունդն ու յամպերն ժամ ժամ ել եւ էջ՝
 Անձկտա կրակըն վառ նրման փարոսին՝
 Որ հողմով ծեծւած ի նաւհանգրասին
 Քո մըրբկաց մէջէն զնաւըն կու փնտուէ,
 Այսպէս Սերոբիկըն քենէ խնդրէ :

Քո տարածութեան մէջ անբաւ անհուն
 Իւր մէկ հատիկ կէտն՝ է նաւն անձկալըոյն : . . .
 Բայց ի՞նչ կը տեսնամ, ծով, ինչո՞ւ ես մնայլ,
 Ինչո՞ւ գոյն կու տաս կ'առնուս այլ եւ այլ :
 Ահեղ մըրըրիկներ կ'ելլեն չորք դիաց
 Եւ երերագին խեղճ բնութեան դիմաց
 Սեւ դարչապարով պար բռնած կ'ինջնան .
 Իսկոյն կու տիրէ կատուածն ուրական .
 Կոհակ կոհակէ կը վազեն ի վեր
 Ճերմակ ու կանաչ փրփուրն յամպն հասեր .
 Վ՛ն վ՛ն կը մննչեն գոչմունք հովերուն ,
 Թափ կու տայ երկինք իւր թուխ՝ ամպերուն ,
 Կ'որոտան գոմունք օդերուն վերեւ
 Կարկտախառն ի վայր թափելով անձրեւ ,
 Եւ խառնափրնդոր տարերաց ծայրէն
 Կու ցառքէ կայծակն իր կրակոտ դարէն ,
 Պինդ պինդ քարշէլով զաղեղն ամպրոպին
 Շանթեր շողալով կ'արձրկէ փըքին .
 Ի թարթել մ'աչիդ զամպերըն պատուած
 Ալէծուփ նաւուն գըլուխն երկրնցած . . .
 Կեցիր չար կայծակ , կեցիր , ո՞ւր կ'ինջնաս ,
 Իմ Սերօբն է հոն , յամպըն կախ մընաս ,
 Կամ թէ ծովն ի ներս ըլլաս ցիրուցիր
 Ուր շատ գանձ , շատ յոյս , շատ լոյս մարեցիր :
 Գիտեմ ովկիան , գիտեմ որ յատակդ
 Ունիս անկողին՝ որ մահն է վերմակ .
 Վըհերդ ու փոսերդ ոսկրով են փրոուած ,
 Բայց իմ Սերօբիա քեզ տեղ չէ տրուած .
 Չէ , չէ , յաւիտեան չինջնիր ի քո ծոց
 Այն յոյսըն պայծառ սրտիս ու հայոց ,

Որ ըզՏէրն առած յողին անվէհէր
 Բացաւ առադաստ՝ հովու տուաւ հրաւէր ,
 Ղրկեց սրտին մասն յիս , մաս մ՝ իմ առաւ
 Մինչ ի հերակլեանս մէկ ուժով թըռաւ :
 Ծով, նա զքեզ չափեց , դու զինքըն հերկք •
 Լըռէն արդ հովերդ , ամպերն ու արևք ,
 Հասնի հանդարտիկ քո ամուռնքդ հեռու •
 Նորէն ծուխ ու բոց լըծած նոր նաւու
 Յաղթըլած արեացդ երեսէն սահուկ
 Աւարով դառնայ յիմ գիրկս երերուկ •
 Զօրացած կրծքով փրչէ մէկ մի շունչ ,
 Դրախտ թողմամբ հողույս ծաղկի ոսկեփունջ :
 Հիմ՝ ասեմ քեզիկ , Ատլանդեանդ անդունդ
 Ուսկից բիւր եզերք դողան սրտաթունդ ,
 Քո երկայն թեւերդ մինչ հոս կը հասնին ,
 Է՛հ , բերնէ բերան թող արևք խօսին •
 Ահա ես կ'ինջնամ ի յեղը ի ծովիս
 Սրտիս բոցն ի դուխս , դիտիկս ի յալիս ,
 Տեսնում ինչ լըրիկ ունիս Սերօբէն •
 Արդեօք ձանձրալի դաշտերուդ մէջէն
 Միայն իր ուղած ողջութիւնն առած
 Հասա՛ւ ցանկալի հանգրստին նաւաց ,
 Դիտէց ի դիտոյ դրօշազարդ կայմին
 Ու ցատքէց նըման մեծ Կոլոնպոսին •
 Զայն որ յուզարկեց ծերըն Առապորոն՝
 Հանեցիր ցամաք , ըսէ ինձ հ՛ուստն •
 Եւ դու Կոնտոլա* պահեցիր ամբողջ ,
 Հասուցիր զաւանդն անգին՝ քո տիրոջ •

* Անուն նաւուն որով ծովաչուէր :

Ելան, ա՛հ, ելան նա, կոխեց արդեօք
 Ուր ազատութիւն կանգնեց ըզնորն Եօք .
 Բարեւ սիրելոյս տըւիք արդեօք հոն
 Քաղցր խմ Ֆրանգլին, քաջըդ Ուռչինկոն :
 Դու հայր նոր Եօքայ Ռուճա-Թօփ բարձրա-
 Խաժուճաժ աչուի ու ծնօտովըն թուխ (գլուխ
 Տեսար զայն կարիճն որ թէպէտ հնասեր
 Քու նորեկ ամանցդ ի տես էր ելեր :
 Դուք քաղցրակարկաջ վըտակք Կանադայ ,
 Դուք յորդախաղաց առուք Լաւրենտայ ,
 Լուսահայելի Էրեան դուք լըճեր ,
 Խոխոջուն սահանք ի քարուտ լեւներ ,
 Ո՛վ յաւերժական կէս գիշեր մայրիք
 Որ զաս կարդցողին ու գրողին նմանիք ,
 Լըսեց ձեր շըշուկն արդեօք Սերոբէս .
 Ա՛հ, ըսան սրտէն , յիշեց զանոր կէս .
 Հեա Սերոբ անուան իմըս Ղեւոնդեակ՝
 Արատունք աչքն ի վայր բերան փայլունակ . —
 Ա՛հ, գնտին երկու դիէն հեռաւոր
 Դէմ դէմ թնդացի՛ն երկու սիրտքն հրաւոր :
 Արդեօք հինաւուրց գոգոյին ներքեւ
 Ուր հոջն որորայ ի ճղերն ու տերեւ ,
 Մտածմունքէ մտածմունք երազէ երազ
 Եղբայրդ ի քովիկդ հիմայ կը տեսնան
 Արմաւրայ սօսեաց շըքովին նստած ,
 Երգւընցընելով մէկտեղ զԱրագած .
 Կամ Արտաշատու դրամներուն հին ժանդ
 Սրբելով ճակտիդ ցօղով քրտնազանդ :
 Եւ մէջ սյսպիսի մտածմանց ընկղմած
 Չիմացար շուքերն որ բողբոջ առած ,

Մինչեւ թանձրացաւ խաւար գիշերուն
 Մինչ զեփիւուն անցաւ թողլով զովութիւն .
 Ու յանկարծ ծառէն խօշիւնն որ հնչեց
 Երբ հաւն արթնցաւ ու քննէն ցաաքեց ,
 Վեր տարիւր զաչերդ . ձայնդ՝ « ո՛ւր եմ պոռաց ,
 Գողաւոր երկինքն ի հետ իւր գոռաց .
 Իրա՛ւ Հայաստան , Ստամբու՛լ , Վենետիկ ,
 Թէ քո անասառաց մէջն եմ Ամերիկ » :
 Դարձեալ կը լռուես , ձայն կու գայ մօտիկ . . .
 Ո՛հ , ի՞նչ ըսեմ քեզ , ո՛վ ձայն անուշիկ .
 Ո՞ր լեռնէն կ'ինջնաս , ո՞ր կու դաս ծառէն ,
 Սոխանէն է քո տէր , թէ հրեշտակ վերէն .
 Ողորմուկ գերիք սրտանց կը հառչեն
 Թէ քոյրն եւ եղբայր զերար կը կանչեն . . .
 Ահա ջրոց կանաչ եզերքէն բլուսած ,
 Ահա սահանաց շոռաչման խառնած
 Կ'ընդմիջէ խաղաղ լուսութիւնն ու գիշեր
 Կը հընչեցընէ սարեր ու ձորեր ,
 Ու արձագանդէ արձագանդ անցած
 Կ'ինջնի ան սրբտին մէջըն տարածուած՝
 Որ զովկիանոս կտրեց ծայրէ ծայր ,
 Ատ մէկիկ ձայնէն կապուեցաւ խալառ .
 Հազիւ կայծ մ'աչքէն թուչի դէպ լուսնակ
 Որ դէմըն կանգնած կը ժպտի մինակ .
 Հազիւ կը դառնայ այն նոր աստղերուն
 Որ վրան կը ցօղեն թեւով շողջողուն :
 Ո՛հ , գիշերն ի բուն , եւ չէ մէկ՝ այլ բիւր
 Կ'ուզես դու թաղուիլ մէջ զմայլմանց մաքուր .
 Թէ ոչ նախանձոտ դիմացէն արեւ
 Այդ անգին ժամերդ ընէ կարճատեւ . . .

Բայց ո՞ւր եմ ես, ի՞նչ կը խօսիմ... ամառս
 Որ գիշեր անաստղ զիս սլառէ հոս,
 Ու բռնի զփետուրս յափէս կու խըլէ
 Թմրութեան փոշուլ բոցըս կը մարէ •
 Ժամ է որ երթամ գըլուխս բարձն ի վար
 Խաչակրնքելով ինձ ու քեզ համար,
 Յիշատակդ ի սիրտս հոն կանչեմ զԱստուած •
 Տեսնում ի՞նչ երազ կայ ինձ պտորաստած : ...

1845

Ս. Ռ. Ն Ո Յ Ն

Երբ երկուց եղբարց հարազատ սրտեր
 Հարազատք ասեմ յարիւն, միտք ու ի սէր
 Իւրեանց միայնիկ ակտորժ ժամերով
 Դիմացէ դիմաց կու կանգնին մտքով,
 Ահագնատեսիլ ընդ ծովուն վերեւ
 Սիրտ-հոգի-բերան տալով բիւր բարեւ,
 Իբր հորիզոնի երկու ծայրերէն
 Ծիածանանման վերացեալ յէկէն
 Զանհուն ոլկիանըն կամարածեւ
 Կըտրելով փարիլ ազատ թեւ ի թեւ
 Ժամիկ մը մոռցած զայնքան մըղոններ
 Որ մարմնովս աւա՛ղ, խորոց են անկեր,
 Երկնից ու ծովուն առագաստին յէջ
 Լոկ զերար տեսնան հոր աչքով անշէջ

Մինչուկ որ հովիկ շարժէ զտարր օդուն
 Կտարի գեղեցիկ աղեղն եօթնագուն ,
 Փայլուն պատաններն յամպերն ի վար գան
 Ծածկին մէկն ի յայս եզերք մէկն ի յայն .
 Այն երկու սրտիցն մէջ ի՞նչ պիտի
 Որ պինդ կայ աղեղն ու գոյնն ալ պընդի :

Երբ կրակէ ճակատ կերոններու պէս
 Խորանին երկու դիաց բոցագէս
 Դէմ դէմ խոնարհած յիրար կու ծըռին ,
 Ու չիհասնելով մէկմէկու ճակատին՝
 Ծոցերնին ճրդքած հրածորան արտասունք
 Սեղանին վըրայ կաթկըթեն փայլունք ,
 Մինչեւ ճապաղած ձիւնափայլ ու պաղ
 Արձանացեալ մնան կըրից պէս խաղաղ ,
 Այն երկու սրտիցն մէջ ի՞նչ պիտի
 Որ մաքուր բոցով ճակտընին մօտի :

Երբ դէմ դէմ սրտի սափորներն բաց
 Դողդոջուն շարժով դէպ յիրար ուղղած ,
 Պահ մի բացխըփիկ զըսպեն զկրակըն ջուր
 Պահ մ'արձակ թողուն գետեր սիրահուր
 Որ վազեն զեռան , ու յիրար մօտիկ
 Յանկարծ արգելուին անարգէն ալիք ,
 Այն երկու սրտիցն մէջ ի՞նչ պիտի
 Որ ջուր սափորնուն յիրար խառնըւի :

Ի՞նչ կայ գեղեցիկ ներքեւ արեւուն
 Քանց ջուխտակ մի սիրտ որոց նոյն արուն
 Նոյն փափագ ու միտք թէպէտ հեռըւանց
 Ի նոյն ովկիան կու թափին անանց .
 Այլ ի՞նչ պատուական ունիս դու աշխարհ
 Որ այս մէկիկ ջուխտըս կըշռէ հաւսար :

Քո եւ իմ սրբոյն՝ սիրուն Ալիշան,
 Այլ ինչ պիտենայ լինել բարենշան : —
 Ա՛հ, մէկիկ մի դեռ, մէկիկ պիտի այլ .
 Քո եւ իմ հասաչին անմահ սիրտն հրապայլ .
 'Նա ինք լինի կապ թէ մօտինք յիրար,
 'Նա ինքն անջրպետ թէ մընանք օտար :
 Աշխարհքիս եղերքն հանց է ասպարէս
 Որ սէրըն չափէ շուտ ի թեւ ու կէս .
 Զողորտածաւալ երկրնուց խորան
 Եւ զանհետագօան աչաց ովկիան
 Ի մի օր չափէ արեւակին դունտ,
 Զանհուպ արեւէքն ածէ յարեւմուտ .
 Ո՛հ, թէ մեր սրտից Աստուածն է արեւ՝
 Ինքն է այցելու եւ սրտից մեր թեւ :

Յատկանդեան նրստած դու յեզր ի ծովին
 Պանդուխտ կիսակամ հայիս ընդ երկին,
 Ես յազրիականս աղտաղտուկ ճահիճ
 Ի նոյն վեր տանիմ զաչերս ցօղալիճ .
 Մէկ արեւն երկուցս է կէտ հայուածոյ,
 Այսպէս երկոցունս հրատ՝ սիրտն Աստուծոյ : ...
 Ե՛կ արդ իմ ազնիւ զայն սիրտն ի մեր մէջ
 Սեղան ու վրկայ կանգնած՝ սէրն ի շեղջ,
 Յերկուց եղերաց տարակաց ծովուց
 Դու յերեկոյեան աղօթս՝ ես առտուց,
 Մէկ ձեռն ի ճակտի մէկ ձեռն ի կրծի
 Սրտերնէս այսպիս՝ իմն աղօթք թռչի .

« Ով Ամենակալ՝ ում խելք չհասնի
 Ոչ հողոյն հանճար ոչ միտք հրեղինի,
 Այլ միայն սրտից հաստուածք սիրաթեւ
 Զիրենց չափն ի վեր բարախեն ըզբեւ .

'Նայէ այս սրախցս որ անդօք հեռու
 Զուգակիր ջանքով մօտ են իրարու .
 Մէկիկ քո անմահ ձեռքդ է անջրպետ .
 Այնոր ալ զըրած ճակտնիս երկնադէտ՝
 Մասներուդ մէջէն քրննելով զիրար
 Սիրա առ սիրա կու տանք կ'առնու՞նք լուր հաւ .
 Մէկըն խօսքով մէկըն լուռ կ'իմանանք , (սար .
 Մէկին չենք դռներ յարմար դէպք ու բանք .
 Ըզմէկն այս ծովուս կոհակաց նրման
 Կու թաւլեցրնենք ծածուկ ինքն յինքեան :
 Դու որ նախ քան շունչ ըզձայնըն լրատես ,
 Բոցըն չարձըկած ըզծուխըն ատնես ,
 Լըսէ ինչ սրախցս , ո՞վ Տէր , կայ մրմունջ ,
 Հասու՞ մէկմէկու նախ քեզ ուղղաշունչ ,
 Ինչ անդ խառնաձայն կամ քեզ անարժան՝
 Թափէ թօթափէ , սրբէ զայն աման .
 Ա՛ն զայս քո տաշած հարազատ սրախկէք
 Սիրոյդ ի բուրվառ զուգադէղեցիկ .
 Ծուխըն ծառանայ դէպ քեզ բարդութարդ
 Քան զարշալուսոյն ամուրք ցօղաւարդ .
 Կայծկունք՝ թէ ներես՝ թռչին մինչ ի Հայս
 Զոր ամէն երկրէ նախ ըրիր քեզ կայս .
 Չի շեղիր այն նաւ որ խնդրէ զբեւեռ .
 Ուր եւ դնան՝ քենէ չղատին մեր սրտեր :
 Իսկ թէ չըկամիս բոցերնուս ծաւալ ,
 Թէ զհայաստանեօք չըկայ մեզ շուրջ գալ ,
 Թող սլացիկ ծուխերս չըդադրին ի սպառ
 Յորչափ կեանքս եւ սէր փարին աստ յիրար .
 Թէ ոչ երկրաւոր թողունք հայրենեաց՝
 Արձան մեր քրտանց յաւերժականաց ,

Գոնեա թողունք ասա խարըսինիա կանդուն
 Ըզհարազատացս հոն դրոշմած անուն .
 Երբ յեաին ծրխով մաշած սրտերնէս
 Թուչին զոյգ աստղունք երկաւորաց սէս ,
 Եւ յանմահ սիրոյդ աղբիւրն ո՛վ Աստուած
 Զարնեն ըզճաճանչ անվախճան կենաց ,
 Հոն խըրւին թաղւին կորսուին թէ կ'ուզես ,
 Միայն՝ չըթողուն զիրար եւ ըզքեղ ։

1846

Ա Ռ Բ Ա Ն Ա Ս Է Ր Ն

Որ ըղձիւք ձեռացս ինկրէր գրերդուած
 ի համբոյր .

Ընդ ո՞ր դու անուանակիրդ եռացուցչին հանուրց ,
 Սերովք ,
 Եւ ըզնորուն առ գեղեցիկն յանձին բերող բոց
 սըլացիկ ,
 Ընդ ճանապարհ անհետազօտ՝ զոր նայն միայն
 գիտէ վորձեւ ,
 Զայսքան հատեալ վայրուց խորոց եւ ըզգիմաց
 օտարութեան՝
 Առ մենաւոր մի հասանես յիմաստասէր ըզձից
 սահանջ .
 Յո՞ր սրավարեալ թեւս յանդրդունս ըզվաղա-
 հաս մըտերմութիւն՝

- Համառօտեալ եւ զժամանակ բարեկամաց եղև
լուծեան ,
- Մարակիկ սիրոյ ի կուշտ կացուցանես ինձ հուպ
յանկարծ .
- Մի առ փորձ իմոց կամաց որք չախորժեն եր-
բէք ժխտել ,
- Թէ ի բարւոյն դու յուսացար ի սէր որ միշտ
սրաշտէ զբարին .
- Թէ յայն՝ զի ուր երկուցն է կէտ ըղձից եւ սիրաք
անդ գումարին .
- Ի կէտն ասեմ՝ Մասեաց լերին ի հոգեխառն եւ
մըտաւոր ,
- Ուր դիւցազանց երասան հայոց . ուր եւ ըն-
թացք սրտիցս ի մէջ :
- Հանգստ դու դարձիր յինէն ի նոյն փուլմա՛ ծայր
երկնածրար ,
- Թէ հայկազնեան խնդրեն ճարակ անշէջ տար-
փից բերմունք ի քեզ ,
- Խորակրկիտ թէ դեզերունն ի հընուծեանց ծոց
սիրալի .
- Եւ թէ ի կէտն իսկ քան զոր չիք անգրագոյն՝
յերկինս յածիլ .
- Ոչ սըխալես , ի նոյն սըացիր , չիք երկնահուպ
չիք սուրբ քան զայն :
- Անդ արդեօք հանդիպեացիս եւ զոյր հաճիս պա-
տուասիրել
- Ըզփանաքի մըտաց ծընունդ եւ ըզհողեալ ստե-
ղանցն երկունս .
- Անդ պարզուծիւն թէ նըկատես՝ զիտեա՛ զառ
քեւ իմըս ժըպիտ ,

Թէ ծուխ կրցեալ յայեր՝ յինոյն համարեսցիր եւ զայն սրտէ .

Զի շատ խիստ ծըխէ սիրտս այս անձկակէզ եւ անձնածախս ,

Ծըխէ՛, եւ չըզխտէ ցերբ եւ ցո՛ր վայր եւ ցո՛ր օգուտ ,

Եւ ծըխեսցէ՛ զերկնասարոյկն յինքեան ցորչափ ըզգայ զբորբոք :

Անդ ի բարձունըս միացիր ընդ իս մլտօք ո՛վ Սերոբէ ,

Եւ օրհնեա՛ զձեռնն վառողին ի քեզ եւ յիս հուր հայրենի ,

Հուր՝ քան զոր չեք՝ դ արեգակամբ եւ սրբազան եւ բարձրաթուիչ ,

Որ դիւցազունս հաստէ յերկրի եւ նահատակս յերկին հանէ .

Զայն վերօրհնեա եւ այնց մատանց տուր ջերս ջերս՝ ըզքօ համբոյրս՝

Որ ի սրտի քուս՝ տարրեցին ըզգեղեցկին զմաստ եւ սէր .

Տո՛ւր փառս հաստջին հանձարոյ՝ թէ խուն հանձար յիս նշմարես ,

Եւ մի ճգնիս շրթունս հըպել առ մեղսամած ձեռին հաստուած՝

Որ սաշտունեայ յոյժ անարժան է սրբութեան ցըն զոր սաշտէ .

Ո՛հ , թէ այս չէր՝ ապա հրեղէն պիտէր փետուր զէնն ունողիս ,

Եւ կայծակունք յայնքով՝ դըչէ զերկին ու երկիր հըգեհէին .

Յո՞ր բարձունս յայնժամ եւ քոյդ ի քէն շո-
պեալ սլանայր սիրտ :

Բայց զայս ընկալ ի դրաւական իբրու խնդրես , ոչ
զոր խնդրես

Երգ ազգոյ խանդավառեալ սրտայարոյց բանա-
ստեղծաց՝

Քնարական ձայնարկութեամբքն ըզմահացուաց
վառել զողիս ,

Կամ ի սէր հարց դիւցազանց զարիւնս առոյգ
յեռանդն հարուլ .

Բուռն է ինձ գեղաճաշակ այդքան մըտաց տալ
կիրթ որոճ .

Այն զի չկանխեմ եւ առ մուզայս ոչ այնց սի-
րողս՝ որչափ կարծիմ ,

Նա՛ մանաւանդ զի քան զհասակ մեծաքայլէ յիս
ցրտութիւն՝

Յերիտասարդս անկանելով ի գիտակս հիւս սա-
ռամանեաց .

Ո՛հ , քաջագոյնք յերգոց մընան հեղձուցիւք ,
սիրտ ընդ իւր տանի ,

Ո՞ր օգուտ թեւոց աստէն՝ թէ թռչանաց չափին
սահմանք : . . .

ՊՍՏԱՍԽԱՆԻ ԱՌ ՔԵՐԴՈՂ

Յանդրագոյնսն քան ըզքեղ յանդրոնեցար Պար-
մանի,

Թեւ ի թիկունս, թեւ ի թիկունս տուր եւ դար
ձիր հաշտ ի հետ.

Էրո՞ւմ օցտեալ յայերց հեզոց թեւահոծիս յործ-
կուտ կայս.

Անկբ վարդագոյնք եւ ծիրանիք զխարտեաչ
գլխովըդ խաղան

Յօղատարափ երկնից մեղու զծիր բարբառոյդ
սպարարել,

Զկարկըտածուս ըզմէ սպառնասս կըրկըտել ծոցս
ամպրոպաց :

Եւ ո՞ւր ուսար անէծք կարդալ եւ օրհնութիւն
սպհանջել,

Ի գուբ գըլել եւ ի բարձունս դէտ աղըն կալ ի
զընին,

Զկայծն ի մոխրի հեղձուցանել եւ ջերմութեան
ակն ունել.

Զի այդպէս բոււն ի յիս տեղաս, յիս, ի հան-
ճար ու ի մուսս,

Եւ քըճքըճեալ եւ փետրաթափ ի վնհ Մասեաց
տաս անդրս.

Եւ դարձեալ սիրողաբար քաղցունս ժըտիս երգս
յինէն :

Թեւ ի թիկունս, թեւ ի թիկունս, դարձիր յայ-
երս հեզանաղ,

Անդ սըլացիր, անդէն թըռիր ու ի մըրրկաց երթ
փախիր :

Այլ ուստի՞ քեզ իղձ երգոց Թուլադաշնակ ի
քնարէ ,

Ի հուրաստան ասպարիզի ճեմողիդ զինչ պէտք
կայծից՝

Յատակաբուզն որ ի մոխրոց սրտից Թռչին կիս-
աղօտ :

Ապողովեան կապարճ ի յուս՝ մանկունք քեր-
դոք աղեղանց ,

Ամենուրեք ձեզ նըպատակք , ելէք կայտառք
դուք ի յորս .

Մարմանդք յտըս ձեր ծաւալք , ծաղկանց քը-
ծինք ըզճնգովք ,

Եւ հեղապար ըզգագաթամք յածի սողոխ խան-
դաշարժ .

Մերթ ի Մասեաց դարեւանդ , առ ստորոտով
մերթ նորին .

Երգեցէք երգ զիւցազնեայ , երգ հայրենի , երգ
գորով .

Անդ շարժեսցին ճապուկ ձրգանք ձեռաց յան-
դուլ երգարան .

Եւ Թէ ներկուռ երաժըշտաց խոնջին ստեղունք
հնգածղի

Կաղամախեաց եւ հազնոյ կախ դաւարագրեստն
ըզբաղկաց

Տատանեսցին հայկեան բամբուռնք ի սոյլ հու-
մոյ հայրենոյ .

Յազդման ձայնին զերդ վարդամատն յարշարու-
սոյն շրղարչից՝

Աստեղաչիունք եւ հրագիտակք հոսեսցին հոյք
հայկազնեայ

Եռաթեւեանք , քաջաղեղունք , ասպարակիր
նահատակք .

Անդ համօրէն սլար բոլորեալ առաքինի հայու-
թեան

Անկցէ զձեօք դաս առ դաս հուր նոր շնչել ի
ձեզ հայրենի :

Անդ հուպ ի վայրն անմեղութեան՝ անմեղ դի-
մակք տարփալէք

Յեղեմածին ծաղկանց սլրսակ ձեզ եւ ինքեանց
հիւսեացեն .

Ո՛հ , ըզգրախտին եւ զեթերին առջլէք ճաշակս
անդ ի հայս ,

Անդ յայն երկիր նախնի մարդկան , յերկիր վե-
հից եւ սրբոց :

Անդ յոստ կարկառ ի կիսպարոյն եւ խմքնար կաց-
ցէ կախ ,

Սաւառնեղոյն յանապատէ՝ սպասեալ սըքի սըր-
տայնոյ ,

Զիւրն հընացեալ մնչել նըւագ յերիտասարդ
սլարուդ խումբ .

Որպէս սօսինն սօսւոյ ծերոյ՝ դեռափրթիթ թը-
փոց մէջ ,

Որպէս յառուաց խոխոջ՝ դըղչունմն հառաչաձայն
սահանաց ,

Որպէս դըրուագ դամբանական՝ յՈրորոցի * ճը-
ռինչ քաղցրիկ :

1849

* Որ եւ մակ անուն խնդրողի բանիս :

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՄԻՐԱՅ ՏԱՏԵԱՆ

Յայցելուքեան իշրու՛մ ի Ս . Ղազար .

Հովանացեալք Հայկաւ նորուն սրայազատ,
Որ ի վերջնս զնախնի դարուց լուծեալ վրէժ
Եւ զմաքրագոյն ի քեզ տարեալ սէր յաւէժ
Եւ բորբոքիս եւ բորբոքես զԱյրարատ ,

Զ' ի յաւերժից իջեալ լերանց վէհս ազատ
Հիւրընկալել պարծի յինքեան քեւ Արնէժ ,
Եւ բիւրակնեան ծնանի կարկաջ սիրավէժ
Ծովս ի քրծին որմոցս եկեալ ալէշատ :

Աստ զըզձալիդ ի յըզձակերան ի դադար
Եւ զօժանդակ ազգակեցոյցն հանդիսի
Երկնատարած գըգուէ հնացեալն ոսկի դար .

Եւ յեալն ծնունդք նորին մըշակք հայրենեաց
Զարս անուանիս՝ որ կեան ի տառս Մովսիսի՝
Կենդանագրեալ Քեւ՝ գոհանան զԵթերաց :

Ձի տայր զաշտիս Մար Խրատայ :

Համբաւք հասին հրաշալուրք հուսի ի յերկրէ հայ-
րական

Թէ մերկացաւ ի Մասեաց նոր իմըն քօղ սրբա-
ղան .

Վլքսեր վարսիցըն սրաղսաջ ցանեաց ըզձինն ընդ
եթերս ,

Ի տես հանուրց աշխարհաց ձայն ետ ի վեր
թունդ յընդերս .

Ճակատեցան դիւցազունք Հայոց ի սարն երկ-
նազգեաց .

Հողիք հրեղէնք հոսեցան յաստեղազարդ խորա-
նաց ,

Եւ մամուրմատ յուզեցաւ հաղարամեայ դամբա-
րան .

Փառք ամենուստ յորդորեն Արամայ , փառք
Տատն անուան :

Ո՛վ գեղեցիկ համբաւուցն որ ի յերկրէն հայկական՝
Մենացերչս մոնաղին յեղակարծուց հաս ուն-
կան ,

Եւ սիրտ ի ներքըս սահեալ կիրըս զարթոյց սրխ-
րագործ՝

Չորպիսեաց չէր նրբազգածն այն հսկողի առեալ
փորձ .

Եւ խուռն ի ներս խայտացոյց զհոգւոյ մասունս
կենսաձիր

Հուր վարդաբոց արծարծեալ ի սառնորակն ի
մոխիր :

Ո՛վ ներգործող սքանչելեացս այսախսեաց յայն
կոյս ծովէն

Որ ի հռչակ հայրենեաց գողանաս զսիրտ ի յինէն :

Ի հովանեաց Եփրատայ զարթեալ ի քնոյն ան
գորրու՝

Արշակունեաց նախահայր եւ հայկազանց թեւ
արկու

Գեղեցկանձնեայն Վաղարշակ քրսանդարեան
հայոց հայր .

Աչկունս ամեալ փարելիս յիւրն հայաստան
սիրավայր

Ըզվեհազանցն ետես փառս ի միւսանգամ մոռա
ցօնս .

Գրլուխ շարթեաց եւ գոչեաց . Առ Մար Իբաս
ձայն տուք , օ՛ն :

Ո՞ յարուսցէ զՄարիբաս յանյիշատակն ի վայրէ .

Չայնըն Տատեան Յովհաննու հնչեալ յօտար ի
յերկրէ :

Ո՛վ գերարծուի քոց աչաց , ո՛վ լայնարձակ քում
ձեռին՝

Որ հեաախոյզ հայ յուշո՛ զհանուրց գրտեր
բաղձալին .

Բաջալերեաց Յովհաննէ , քեզ աննըման կանգ
նին փառք

Ի դիւցարանն հայկազնեայ գահոյս կազմեն քեզ
կաճառք .

Ի ձեռնարկեալդ դիմագրաւ արիացիր նահատակ,
 Եւ քեւ կրկին դիւցահօրն հայկայ բանի սլառ
 ըլլակ :

Ըզքեզ երկրորդ Վաղարշակ, ըզքեզ երկրորդ
 մեր Ասպետ

Իարքն ասպագայ կարդայցեն եւ ներկայս քեւ
 յուսակէտ :

Այլ ինձ աւանդ, ինձ ընդէր ճակատագիր չեա հրա
 ման

Յեցեալ ի թեւս իմ աշխոյժ՝ խակոյն քեզ կալ
 յանդիման :

Ու ի քոց ըղձից լայնալիճ՝ նեա ոստուցեալ
 պնդածիդ

Աւ քոյն եւ իմ թափ հարուլ նըստտական դե
 դեցիկ :

Զթարգմանն յոգունց անձկանաց ըղջերաջերմն
 իմ համբոյր՝

Ոչ անարտօսը ի գըլթոյ՝ դրոշմել ի պրակն ի թիւ
 բիւր :

Թափեալ ասպա զհին հիւլէ ժամանակին բորբոսոյ՝
 Ի լոյս ըզնա ողջունել յանմահութիւն անուան
 քոյ :

Բայց զիս երկնից սուրբ սլառգամ բեւեռասպինդ
 պրկէ զիս

Ի կէտ կղզոյս մենական յանդորրականն ի հան
 դրիս :

Ուր ծուխ ի ծուխ կըցելով ծըփանցս ի ծով ծի
 բանի՝

Բոցաշնչեմ՝ բիւր փարսախս առ իմ հողիկն հայ
 բենի :

Այլ արդ հասոր մ'ի սրբոյ հանեմք ի սուր հա
լաթեւս

Առ սրտումահայր մեր հասո՛, զգա՛սեւ, Արի որ
ննջես .

Եւ լեալ սրմին ձեռնսո՛ւ՝ դու թորգոմայ ձեռն
տաս .

Ըղձաղարչակ հանդուցեալ՝ Տա՛տ հնչեսցէ Մար
իբաս :

1849

ԱՌ ՅԱԿՈՒՄ ՍԵՊՈՒՀ ՏԻԻԶ

Ի գաղտնեան խորոս ի վանս Ս . Ղազարոս .

Ո՞ւր գեղաղէչն ընդ Վոսփոր եւ ի Թրակեան
պերճ ափանց

Թողեալ ըզննամս՝ իւ զԵւրոսլ փոխաբերես
յԱսիա ,

Թողեալ ըզննաճ ընտանեաց , ըզննայր սիրոյն
նորննծայ

Յաղբիակնս յայս ի խորչ գիմես նախ՝ հիւր
մեծապանծ :

Ճարտարուժեան՝ իղձդ անյագ , իմաստուժեան
տենչայցէ ,

Միժէ զանխո՛ւ լուտետեան քեզ հրաշալիք եւ
Լոնդոն .

Անդ անկարօտ քոց փառաց՝ այլ արժանևոյդ՝
պաշտի ձօն .

Եւ խուն կըղղեակս՝ յայնքանեաց իբր ունի զքեզ
ի բացէ :

Այո՛ , փառք , շահ , գիւտ հնարից քաջ ի բաց են
արհամարհ

Առ վսեմականն այն սիրով՝ որով ընդ մեզ զիւ
ջանիս ,

Հեզիկ ի ճեմըս պատուեալ զՄըխիթարայ տուն
խօնարհ :

Այլ զի՛նչ քեզ աստ արժանի , եթէ ոչ նոյն զոր
սիրես ,

Եւ որ քոյին իսկ է շնորհ՝ Բարերարիդ այսմ
ուխտիս .

Ըզնոյն հապա քաղըր ակամբդ աստէն մեւք չափ
Սիշտ տեսցես :

ԱՌ ՆՈՅՆ ՍԵՊՈՒՀ

Յաւիտենից ճակատագրեալ ի յաստեղ
Ամենախնամ աջոյն կերտուած պերճափառ,
Ի մեծ զարմէ պահեալ անզոյգ շառաւեղ՝
Ի տարփ հոգւոյդ ձրգեալ դայ քեզ Մըխիթար:
Ո՞ զմանկըտուոյդ լարէ սըրտիցն ըզկիթառ:
Ծովակ, կըղզեակ, ձեղուն յատակ, յարկ պարտեղ,
Պըսակահաճիւս ծառք եւ ծաղկունք արգադիր,
Եւ համօրէն շուրջ ոլորտիցս ասպարեզ,
Քեզ սրայազատ քաջաց ի Զանս անձանձիր
Յոտիցդ հըպե՛լ լուծան յողջոյն ու ի թըրթիւռ:
Եւ աստ թէ արուպ կիսահագագ հընչէ պուէտ,
Մի կիսախօս իւր եւ իւրոց գրեսցի ձայն:
Շուարին շրթունք յուզեալ սրտից բերկրաւէտ:
Եւ անսայթաք՝ յեռանդնաշարժ ի յորձան
Ո՞ մակուկէ կամ գեղգեղէ յաղթաձայն:
Ողջոյն ձօնէ քեզ՝ պանծացեալքս քեւ տուն:
Քեւ ծիծաղին սահմանքս լուռ եւ մեկնակ
Պարագըծեալք յորձանս բարեաց քոց կանդուն:
Եւ յորդորեալ ջուրքս ի ծրփին սիրունակ՝
Զաջդ համբուրեն յորմունս՝ ոյց կասրդ պահնակ:
Ողջոյն քաջիդ քեւ խրախուսեալ գրիչ տրկար,
Որով զինեալ դողդոջ դաստից հինաւուրց
Մենամարտին արգիտութեանն ընդ խաւար,
Խորշումերես մատենայած ճակատուց
Ըզգիւրահուպ դիտելով զաջդ ի մատոյց:

Այո՛ Բաջ, գետ փոքր եւ դաղթեալ բացաձիգ
 ՅՅրարատայ մինչ ի հանդրեանքս խորւոջ,
 Հայրականաց իւրոց կայից դիմեցիկ՝
 Ընդ ամեհի քարաժայռիցն կոչկոճ՝
 Որ անթափանց արձանանան խուժ եւ խոչ,
 Թէ քո աջոյդ ճարտարարուեստ իմն ի ձօն
 Զմանուածաւառն յանձին բեկեալ փրփրադէզ
 Մինչ ի կատար վերաթռուցէ զալեաց թօն,
 Ո՞ւ՛մ նըւիրէ զկարկաջասահն իւր հանդէս՝
 Քան թէ ձեռին՝ որով զազատն եդխտ ելս .
 Թէ սաւնորակ երկնապողոզ ցայտէ շէշա՝
 Ըգքաջամուղ կորով ձեռինդ հանէ վեր .
 Թէ շիթ մանրիկ ի հիւուժեանց գեղապէշ
 Վայրացօղէ ձիւնածաղիկ ընդ այեր ,
 Ի գլուխ քոյին շողողէ շաղ օրհնաբեր :
 Ի Անեղին հաստեալ աջոյ՝ Տանս ի վրէժ
 Անփառունակ փառաց ազգիս առաջնոյ ,
 Նախանձակոճ քան թէ ալեօքն իւր Վ՛րնէժ ,
 Վէհին կամաց եւ ցանկուժեան իւր սրբոյ՝
 Գըտանէ զքեզ սատար եւ ազգ տանն Հայոյ :
 Զիմաստուժիւն՝ ոչ եւս անոք մոռացիկ
 Թափառական ընդ նա դիտեմք ասպառու՛մ ,
 Այլ քեւ՝ զերից ժամանակաց յոյսն ի դիրկ ,
 Զանցեալն՝ ի դիրս նախնեաց , զներկայս՝ ի մերում :
 Եւ զսպառնին՝ մամլոցս ի ծոց ընթեռնու՛մք :
 Զահ համասփիւռ դու ի սրտէդ բորբոքեալ
 Կաս վերամբարձ բանասիրաց առաջնորդ ,
 Գընաս եւ զհետ զնացուցանես լուսափայլ ,
 Ըզգըժուարուան ինքնին հարթեալ եւ ըղկորդ ,
 Եւ տաժանեալ ընթանալեաց զուգակցորդ :

Վահագնակերպ ընդ եղեգունըս ցամաք՝
 Բոց ծիրանի դու ծաւալիս ջեր եւ լոյս,
 Եւ դու զանխուլ սրբոխս յերկիր մեր համակ •
 Թէ թուէ Երասխ բառս արամեան քան մկանունս՝
 Ի քէն դիտէ զնոցուն բըղխեալ հոյլս անհունս :
 Ընդ մայրեւոր Շաղագումեանն հովանոց
 Երկնասարացիկ թեւք լմբըռնին Մովսիսի ,
 Սըրբէ զլեռնին կաթս արտասուաց սրտախոց ,
 Շունչ հարաւոյ կարծէ այցող հիւսիսի ,
 Ընդ Սահակայ գտանէ զՅակովբ եւ սիրտի •
 Եւ թագազարդ ճակատք մեծաց արքայից
 Յամրոյն Կնոյ ըսքանչանան ընդ քաջիդ ,
 Վէհ դաւանեալ քան զոյդ ինքեանց դործակից ,
 Զի հնարագէտ ժողովեալ սերմն ի յոգիդ
 Զանծինն ածու զգեցուցանես դեղափթիթ :
 Դասք ողջունից օրհնից յերկրէ ի հեռուստ
 Վազլազելով այսր ի բըլրոց գան Հայոց •
 Դասք ողջունից օրհնից ի հարց մեր յերկնուստ ,
 Եւ բնաւ յորոց բարւոյ կաթեաց սէր ի ծոց
 Եւ սիրեցին դիառս հայրենեաց անցելոց :
 Եւ տունս՝ սրատուեալ յոտին ճոխից սլաակաւոր
 Ոչ բարձրաճեմ յիշէ յանձին այս գունակ ,
 Ոչ այսպիսի ներգործեալ փառս անսովոր ,
 Յորմէ շանան դիւանք նախնի ու ամանակք
 Եւ նախանձին անձկակարօտ ապագայք :
 Օրս անմոռաց՝ լիցի եւ քէզ քաջըդ Տիւզ ,
 Որ յանգատտան հարուստ բարեացըդ ճեմիս ,
 Զոր ոչ խիթամք հանուրց եւ քէզ դոլ հաճոյս •
 Եւ թէ պըճնիմք յայսքան ի քո երախտիս՝
 Քսւլ մի գըրոցես յըզձից սրտիդ աստ թերիս :

ԱՌ ԱՂԱՆՈՒՐ ՍԵՊՈՒՀ

Առաքելոյ ընծայ Օճաճոշկն ի արագարոշի

ձենդեան Տեսուն .

Յերանաւէտ հասեալ աւուրս
Փրկչին մերոյ ի խանձարուրս՝
Քեզ բիւրաբիւր մաղթեմ բարիս
Հանդերձեւումդ եւ որ յաստիս .
Ի տես դիմաց թուինդ փոքու
Զմանուկն Աստուած յիշեա ինձ դու ,
Որ ըզհասակն էառ կրսեր՝
Յերկնից ըզմեզ վառել ի սէր :

Եւ մերձակայ տարւոյդ նորոյ
Կրկին մաղթիւք ի սերտ սիրոյ ,
Տիպք ծրաբոլոր ամանակին
Զօճապըտոյտ ձուկն աղտաղտին
Քեզ եւ քոյոցդ յըզեմ նըւէր ,
Վայելէլ քաղցր առ յուշոյ մեր :

ԱՌ ՆՈՅՆ ՍԵՊՈՒՀ

Յ Ա Ռ Ա Ջ Ն Ո Ւ Մ Տ Ա Ր Ե Կ Ա Ն Ի

Ա Ղ Ե Ք Ս Ա Ն Դ Ր Ո Ւ

ԹՈՌԻՆ ԻԻՐՈՅ

Գևորգ .

Ո՛վ վողբրատարդ ի մարմնում
Ամփոփեալ իրք անպատում ,
Անսահեղիկ քաղցր հոգեակ
Թէ խուն ածեմ քեզ մանեակ
Յայրարատեան ի ծաղկանց ,
Զի դու պատուաստ հայկազանց .
Մինչդեռ վանիչն ըզխաւար
Եւ կենսաչափ մեր լամբար՝
Ի նոյն դարձաւ յօրամուտ
Որ բացն ըզլոյս արեւուտ :
Եւ թէպէտ զի՛նչ քեզ կարօտ
Մերոցս աղեաց համառօտ ,
Որ զյարաշարժ զուարթնոյ լար
Լըսես յոգւոյդ անդադար .
Այլ զի եւ մէք խանդակաթ
Գող պատկերիդ անարատ ,

Անաս հեղիկ քաղցր հոգեակ
 Թէ խոուն հանեմ քեզ նըւադ :
 Եւ թէ, ո՛հ, չիք ի ձայնս յայս
 Գեղգեղ դաշնակն յոր խայտաս ,
 Բայց դոյ բարբառ սխտանի
 Որ ի սրտէ հատանի •
 Յոր թէ խառնի բան տըխուր՝
 Ի այն քեզ յօգուա , սիրով լուր :
 Զի դու յերկնից սկանդխտիկ
 Աղէքսանդրէ ինձ մանկիկ՝
 Ի դաւառացն արփեհիկ
 Յովիտս անկեալ լալօնից ,
 Յանմահունակն ի դոգոյ
 Տաղաւարիս յարկ սըգոյ •
 Եւ թէ յայժմուս յարաթիւ
 Հրեշտակօրէն դաս յայթիւ ,
 Թէ իբրեւ սուրբն աղանեակ
 Այն ինչ թողեալ զտապանակ
 Անբիծ թեւօք եւ ոտիւք
 Շրջեալ զերկրիս ոլորտիւք՝
 Ի հիւ ի հիւ դաս անհուպ
 Գիշակերպիցըն ջրածուփ ,
 Թեւապարիկ վայելուչ
 Ճոճիւն հատեալ քաղցրաճուչ ,
 Աչք ածելով նազենի
 Առ հաշտընձայն ձիթենի •
 Սակայն դիտեա հաւաստեալ
 Զի մէնջ եւ շիւղն այն կորեալ •
 Ամենուրեք տղմասիկ ,
 Անբիծ ոտին հանդիստ չիք •

Ի քոյդ ի քոյդ տապանակ
 Ե՛րթ, դա՛րձ, թըռի՛ր քաղցր հոգեակ,
 Անդ ճօճեա անդ ճոռուղեա
 Եւ ի յերկրէս լեր բացեայ :
 Աղցից խոնարհ զի՞ քեզ պէտ ,
 Ուր ամենայնս է աղէտ .
 Երկնիւք բուծեալ մինչեւ ցարդ
 Անդըր կառո՛ն ակն անթարթ .
 Ձի աստանօր եւ ծաղկունք
 Ոչ եւս անխառն անուշունք .
 Ո՛հ, ընդ վարդիւ կարմրորակ
 Ղօղեալ նատի փուշ դժնեակ .
 Ձիք յերկրի չի՛ք ինչ համբոյր .
 Համայն պատրանք, բնաւ հրասպոյր .
 Ո՛հ, փախիցուք ի յերկրէս ,
 Կամ թէ կեցցուք երկնապէս :
 Այլ քեզ կանգնեալ երկնուղէշ,
 Աղէքսանդրեակ գեղաղէշ,
 Ծառ հինաւուրց, նոր սաղարթ ,
 Աստ օթեւան կայ զըւարթ .
 Ե՛կ զի՛ր թոռնեակ դու բունիկ
 Ի գիրկս հաւուդ ու ի մամիկ ,
 Ոստ ի յոսոյ ճախրասլաց
 Խաղա՛ն խնդա՛ն եւ պարեաց .
 Մերթ ի պատուդ պարանոց
 Քան զադամանգն իւր վարդոց *
 Յոյր հրճուի նա ի խըտիղ ,
 Կախեաց գրկօք փափկածիղ ,

* Գեղեցիկ ադամանդ վարդապոյն , զոր եւ յոյժ սիրէր հաւ մանկանն :

Եւ մերթ ի ծոց քում հանոյն

Լէր լանջանոց գեղապոյն .

Եւ մերթ ի բարձս հայրենի

հարց ըզմօրէդ քաղցուենի

Այ, լուռ, լռեա՛ ժիտ քընար ,

Զի՛ հնչեցեր նրմա զմայր՝

Ում խանդացան յորրանաց

Երկինք սիրողք նազելեաց ,

Եւ զմանկամայրն իւր չքնաղ

Առեալ տարան հաղ ընդ հաղ՝

Այն ինչ նորա մեզ ի յուշ

Թողեալ զորդեակն իւր անոյշ ,

Առեալ տարան առ Եմայ՝*

Առ սիրուհին Եդեմայ ,

Առ աչադեղն իւր քոյրիկ

Եւ սրտին ջերմն հատորիկ ,

Ըղկուսանուճնն առ կուսին

ԸզՎ իրգինեակն հանգուցին

Ի սրսկասպան անգր ի նոյն .

Նոր երկուորեակք հրաշագոյն :

Նոր միաճեա վարդուրհիք ,

Մինն ըսպիտակ բողորիկ ,

Միւսըն ճերմակ եւ կարմիր

Ընձուեալ զկոկոն իւր յերկիր :

Նոր խընկանոցք ըստաշխին

Ի դրան անմահ արքային .

Երկիրս հոտով զըմբոյ

Լըցան երկինք ի սիրոյ :

* Քոյր Վ իրգինեայ մօրն Աղէքսանդրու :

Այլ քեզ մանկիկ Ղեքսանդրէ
 Տրամել առ այս ընդէր է .
 Շատ խակ լուծին ցօղս աղի
 Քո հաւ քո մամ գարաղի .
 Երկինք ժրպիտրս միայն
 Լըցին ի լիճ լուսոյդ լայն .
 Օն դու ժպտեա եւ ժմտեա
 Եւ զմեր թախիժ փարատեա :
 Բայց զի ծանեար զմօր անձուկ
 Եւ ըզքեզ գոլ կիսորբուկ ,
 Եւ զի լըցեալ յուժ յարեւ
 Իբր աղանին լիաթեւ՝
 Կամիս բունիկ լըքանեւ
 Եւ բաց ի բաց թըռանեւ .
 Զի մի յանկարծ դիւրագայթ
 Անկեալ շաղիս յորոգայթ ,
 Եկ ուսուցից քեզ հընար
 Եւ գոցէ շնորհ իմ քընար :
 Զանբըծութեան քո նուրբ թեւ
 Իւ արդ յերկին ես զօդեւ ,
 Պնդեա ի ծղիս քո փափուկ
 Մինչդեռ եւ եօրդ մանուկ ,
 Ըզծայր թեղոյն սրբանուէր
 Տուր նազելի մօրդ ի վեր ,
 Ապա թըռիր յով եւ կամ
 Զինչ ճընճըղկիկ 'համասպրամ' .
 Եւ քո մայրիկն հօդունակ
 Ըզպարտ կաթինն անուշակ
 Շնորհաց յեղեալ ցօղ ի զով
 Յնցղկեսցէ զքեւ սիրով .

Աչք իւր անքուն եւ ըզգոյշ
 Պիշ յերեխայդ իւր քնքոյշ՝
 Արածեսցեն ի ծաղկունս
 Ըզքեզ յանմեղն ի խրախունս .
 Եւ յերեւել յանկարծուստ
 Խարամանոյն ի հեռուս ,
 'Նազուկ մատամբք սարսեալ զթել
 Քեզ ազդեսցէ խուսափել :
 Ա յսպէս գրգուխ ի մօրէ
 Եւ կաս աղատ ի չարէ .
 Ա յսպէս սիրոյ կըցեալ զօր .
 Յանբըծութիւնդ անաղօս՝
 Կեցցես դու մեզ միշտ հրէշտակ
 Աղէքսանդրէ սիրունակ :

Ահա շարժեմ մասն ի վեր
 Երկնից օրհնից տամ հրաւեր .
 Անձանօթի սիրոյ ծնունդ ,
 Գաղթ ի բուլիցն այն հրագունդ .
 Ատուածառայք մեզ հողեակ ,
 Քաղցրիկ թունեակ , քաղցր որդեակ ,
 Բաղդ քո ի քում գաղաթան
 Կացցէ յաստեղ յաւիտեան :
 Աչկունքդ աղու սեւաթոյր
 Անհուն երկնից խուն պարոյր՝
 'Նրբից յունից ի կամար
 Հովանացեալք վառ ի վառ ,
 Ի խոյզ գեղոյ հրաշալոյն
 Կառուսցեն բիբ բարձրագոյն .
 Դէմքդ այդ հանուրց ցանկալի՝
 Իցեն զուարթնոց հայելի .

Եւ հանճարոյ պատշըգամբ
 Ճակատ քո լայն եւ անամբ՝
 Բարձանց լիցի եւ սրբոց
 Տուն եւ տաճար խորհրդոց .
 Եւ փոքրիկ սիրտն այն դատարի
 Անձին կրրից խոր դադարք ,
 Ուր այժմ հաստչին լոկ աչք սուր
 Ըզէւն առկայծ դիտեն հուր ,
 Եւ մրկանունս վերասասա
 Յանհողմ յանծուփ լուսթեան աստ ,
 Եւ բոյս սերմանց բիւրաւոր
 Յագարակիկդ անարօր ,
 Հոգւոյն լիցի գրգարան
 Տաւ քեզ վեհից կերպարան :
 Արդ այժմ օն առ եւ ժմտեա
 Եւ զմեր թախիծ փարատեա .
 Յունըս լարեա , աչըս բաց
 Յայտէ ի յայտ ժըպիտս ած .
 Թեւ տարածեա գիրկ պարզեա
 Տուր ներբանիդ եւ կայթեա .
 Կարկան կարմրիկ ըստեղունս
 Ի սրածուճակս ու ի մրգունս ,
 Հար ըզճափիկ ի ծափիկ
 Ե՛րթ առ հաւիկ եւ մամիկ .
 Առ եւ տուր վարդս համբուրից
 Յօղատարափ երկթերթից .
 Եւ յողկուղէդ ժմտանաց
 Հատո՛ հատիկ մ՛ ինձ ի վարձ՝
 Որ զսեաւ մերկեալ քնարիս քօղ
 Չայն շայս հանի քեզ գգուող :

Ի ՀԱՐՍԱՆԻՍ

Վիրգիլեայ Աղանուշ-Պիսերի .

- Ի սահմանաց Եդեմին
 Ծաղիկ սրանդուխտ մլտադիւր ,
 Իտալական դրախտին հիւր ,
 Բաղդաբ երջանիկ զքեզ կամին .
- Ոչ, ոչ խաբիս թէ այսօր
 Ընդ սուրբ քօղով հիմենիդ
 Զանմահ սիրոյն իսկ ժըպիտ
 Հետազօտես մեզ յորդոր ,
- Որ զԵւայի հետոց փուշ
 Գարշապարացդ հեզանազ
 Առեալ փոխէ յաննիազ
 Վարդա ի շուշանըս քընքուշ .
- Ո՛հ, ջահեսցէ ինքն յամայր
 Ըզքեւ կուսան եւ հարսնեակ ,
 Զանուանդ իմաստ Վիրգիլեակ
 Ի սիրտդ հարեալ շնորհաց վայր .
- Ու այժմէն յաւերժն ընդ հարսանց
 Գրեսցէ յերկնից առագաստ
 Քո զուգակցաւ բարեբաստ ,
 Հաճեալ ուխտիցըս բուրմանց :

Ի ՀԱՐՍԱՆԻՍ Տ . Մ .

Կընքեցին երկինք օրէնս երկրի՝ գուլթ մարդահաշտ,
 Մի անդարձ ամպել ցօղածաւաըն ահանողաց .
 Ոսնառու ոահից ի փարելլի փթըթիլ ի դաշտ
 Յետ կոծոյ հիւսսի՝ սիրամընչից գալ տատրակաց :

Երկնածրար ծոցոյն ամբիծ ծընունդ սէր համածին՝
 Թաթաւեալ օրհնիւք քաջաց նախնեացդ աստղա-
 կաճառ ,

Առ քեզ պայազատ վըսեամ՝ եկեալ հրեշտակ
 հեշտին

Վերագրէ չըքնաղ ընդ զուգակցիդ բաստ ոսկե-
 փառ :

Ի յելա արեւու իղձ սրտակէզ ծըխէ ի վեր ,

Յաստեղցն ըսքօղել ցօղ երկնապող յօդ ցընցըղկի ,

Ձեզ երանադարձս յաւերժ դերձել ժամս եւ օրեր ,

Յանմահից հաճոյս , ի պարծ մտերմաց , ի յոյս
 աղցի :

Ի ՅԱՂԹԱՆԱԿ ԺԱՌԱՆԳԱՅ

ՊԵՏՐՈՍԻ ԵՌԻՍՈՒՑԵԱՆ

Զարդարութիւն՝ Ի Յոնիոյ պերճ ավանց
 Ըզզուգակիցն հեղ՝ քաջավրէժըն նեմէս
 Թռուցեալ տանի զմեծ ջատագովն յասպարէս .
 Հիմ կորասցի յըստակ ճակատն իրաւանց .

Շահնդն հնչեցին նրժարքն անշեղ աննախանձ
 Յատեանս վէհից կարկառեալ փոյլթք Ի հանդէս .
 Զմէսն Ի մատին իւրում բարձրեալն ուղիղ տես ,
 Անն արկ , թափեաց զերկ եւ զարդիւնս ջնջ
 քրտանց .

Արդարոց՝ Տեանն է պատշաճել ըզժառանգ ,
 Ի զուր նիւթին նենգք դրժսլըհիք եւ դարանք .
 Խնդացէք տեարք , երկինք բաղդիդ աջ ետուն .

Եւ զնոյն անշուշտ տացեն ուղղիչ Ի վայելս՝
 Զոր սիրելիքդ յերկար մաղթեն՝ դ կենաց թելս ,
 Տոհմիդդ Ի փառս ու Ի Հայկազանց խնդութիւն :

Մ Ա Ղ Թ Ա Ն Ք Յ Ա Մ Ա Ն Ո Ր

Տեսնեցաք առ Բարերարս :

Յէից տեսնեն չափեալ երկիրս ընդ հանուր
Արփիափայլ ջրաբաշխ ուրէք վայր յուսթի ,
Ի սաղարթուց զերծ ծարաւուտ՝ գիտ այլուր .
Ելանէ ամպ յայց յանապատ անջրրդի ,
Փթըթի երէզն եւ ծիծաղի ամային ,
Յամպ նոյն թըռչին խունկք ի ծաղկանց իւրա-
ծին :

Զանարգասի առեալ բաղդին ըզվիճակ
Կրրկին սրանդուխտք տընանկքս յովաի կենցա-
ղոյս ,
Սով մերկուծիւն , տարերք զինին գըժընգակ .
Զըգիտեմք յո՞ դառնալ կամ իբըր տալ խոյս .
Արտօսը ի վեր զաչըս մըղէ , սիրա զոգիս . . .
Եւ Տէր տայ մեզ բարերարաց հովանիս :

Ո՛վ վերնախնամ ծածկեալ գըթոյն ձեռք յայտնիք
Արարչագործ աստուածք , եղբարց ձեր այցող ,
Որ զոյգ ամպոց ըզհէգ մարդկամբ ծածանիք
Յեղակարծուց տեղալ նոցին ջեր եւ ցօղ .
Յերկրի ձեմեալ երկնից գանձու տայք հրաման ,
Զոր մեզ սըփուէք նոյնք անկորուստ ձեզ մընան :

Ջահք հաստողին՝ լուցեալք կենաց մեր ի լոյս ,
 Իմաստուլթեանն արփի ձեօք ոչ թաղչ՝ ի մէնջ .
 Ձեօք ոչ մեզ հուպ դամբան ունի զլսանձարուրս ,
 Մէք զամանոր վայելից ձեօք առնուաք տենչ ,
 Եւ աջք յարտօսր եւ սիրտք անձկաւ ի գորով
 Առ Տէր դառնան ու առ ձեզ՝ տարեաւս այս նօ-
 րով :

Տո՛ւր հայր , տնանկաց եւ ճոխից , վարձ ընդ վար-
 ձուց

Ոյց բարերար խնամոցդ հաղորդք լինին աստ .
 Կեցցեն սարգեւք նոցուն ի դարըս դարուց ,
 Հիմունքն ի մեր սիրտ , ծայր ի քումդ առագաստ .
 Յաւիտենից լերանցդ աղբիւրք գերակայ՝
 Յիւզ եւ ի մեզր արբեցուցեն զգարմ՝ նոցա .

Յաւուր՝ յոր բաղդք եւ բարձք լինին զուգահարթ ,
 Մերկ մանկրտիս , հասակս անկար անտերունչ
 Հանգիսասցի սրճ՛նեալ ի տուրս նոցա զուարթ՝
 Զայս արքայիդ վառաց հանեալ ջերմ՝ մըրմունջ ,
 « Տես զոր յերկրի քեզ ձօնեցին ի մեր ձեռս ,
 Դարձն նոցա , տո՛ւր տոկոսի եւ զեթերս » :

ԲԱԶՄԱՎԷՊ Ի ԲԱՐԵՐԱՐՄՆ

- Ո՞ զցուրտ քոյին ջեռուցեալ ծոց եւ զամուլ՝
 Այս հընգերեակ յիմաստութեան զիս ի լոյս
 Վերածնանել օժանդակէ քեզ, մամուլ .
- Ո՞ զանբարբառ թերթս յարդարէ բազմավէպս ,
 Յափանց նըշգեհ թռուցեալ հընչել ըզխրախոյս
 Ի յերախանս ազգին սիրոյ անվըրէպս .
- Ո՞ զիմ արփիս խոնարհ ճըգնի համասփիւռ
 Ճառագայթել ստուերանըստացն Արամայ
 Զհայրենականն ազդեալ կենաց ըզգեփիւռ .
- Ո՞ ի պալատս ինձ եւ յանշուք տաղաւար
 Ասպընջական պատրաստէ հեշտ եւ կամայ
 Փարել զինեւ տնանկաց ճոխից հաւասար :
 Գիտէք երկինք . հասուցէք ձայն զայս գողղոջ ,
 Ձայն որ ի հրոյ հոգւոյ փայլակն անդր ի վեր
 Գոռայ զտարւոյս բարերջանիկ գոլ բողբոջ ,
 Ի սատարացն իմ հասուցէք սիրտ վըսեմ ,
 Եւ երախտեաց ասացէք խուն զայս նըւէր
 Յանձանց հեզոց յօժարընծայ զայս ձօնեմ :
- Ոչ ոսկեգիծ ոչ կըճէից սեանց ի տառ ,
 Ձեռամբ սրտի դրոշմեմ զանուանս իմ վէհից ,
 Որոց արձան կայ գըթութիւնըն պայծառ
 Եւ պատուանդան կանգնի դիտակըն Մասեաց ,
 Զաղնըւութիւն՝ առատութեան բարւոյն կից
 Ամմահ թողուլ ի սիրտ ու ի վէպս Հայկազնեայց :

ԱՌ ՔԱԶԱՔՆԱՐ

ՄԱՆՈՒԿ ԻՏԱԼԱՅԻ ՅՈՎՍԷՓ ԿՈՆՏԻ

Մի այլ քերդողք բարձր յԵՂԵՆՈՆ հետազօտ
 Ըզպատիպատ քննէք լար ,
 Այլ ի փոքրիկս այս ի քրնար բարեղօղ
 Գըտընք զամէն ձեր հընար .

Եւ մի յերկինըս մահացո՞ւք միայն լոկ
 Այդպէս անփորձ թուանիք շէշտ ,
 Կոնտեայ լուարուք , եւ ոչ նըւաստ ինչ արդեօք
 Եւ սորայս ձեզ թուիցի հէշտ :

Բայց դու առակ զարմանալի մըտատանջ
 Երկնից ու երկրի զուգադաս ,
 Ո՞ւմ առաւել՝ երկնի՞ թ' երկրի հիասքանչ
 Իցես , մանուկ դու տըհաս :

Անշուշտ մանուկ եթէ կոչիս տակաւին՝
 Դու ոսկեփայլն երազոց ,
 Կամ թէ սըտոց ճըշմարտագոյնն ես բնաւին ,
 Ո՛վ մեծդ ի փոքրը արիոց .

Եւ կամ թէ ստոյգ սրբոյն հրեշտակ Ուղիւմսկայ
 Ծածկիս քօղով լուսաթոյր ,
 Այլ յոյժ նըրբին՝ առ ի լինել գերակայ
 Ոգւոյդ ձըրից՝ վարագոյր :

Սակայն դու ինքն ասա , ոգի զուարճ , ո՞վ ես
 Յայդ պարուրեալ ձեւ համեստ ,
 Որ զմահացուս ընդ անմահիցն խաբես
 Գողով զուարթնոց համարուեստ .

Ասա՛ , մի՞ զքեզ ծընաւ երկնիցն այն Քընար ,
 Կամ յաստեղաց ուսաւք դաս .
 Ո՞ր կարկառեալ ձեռն ի ճակատ քո պայծառ
 Զերկնաւորացն ուսոյց դաս .

Ի հայրենեաց բընկէն իջեր յամերամ՝
 Թովել ըզմեր կայս նըժգեհ ,
 Եւ կամ թուչել իբր արուսեակ լուսերամ
 Յարեւելեան ի սուրբ դեհ .

Կամ թէ զքեզ Տէր եցոյց հանգոյն ինչ ասաւդ՝
 Ոյք յանկանելն իսկ ի վայր
 Գերաշխարհիկ յօրինուածոց իւրեանց մերձ
 Թեւապարեն գերածայր :

Այլ դու ժսրտիս լոկ . եւ քաղցրիկն այն ժըպիտ
 Քաջ իսկ ահա վըկայէ՛
 Զի եթէ այս թէ այն՝ քո զոյգ երաժիշտ
 Յերկինս ըզբոյն կայկայէ :

Ի մանկագոյն անշուշտ զուարթնոց ոք յանօթ
 Ետ քեզ զաչկունս իւր կապոյտ ,
 Եւ ըզբընար եւ զհերս եւ զայտ անաղօտ՝
 Խաղաղութեան վայր անքոյթ :

Հակիրճ պատկեր իմն այդպէս լեալ քո երկնից
 Զ իմրդ կապես զմեզ հրաշիւք ,
 Յորժամ աչաց հօրդ յանդիման սիրալից
 Խաղաս ի լար գեղաշուք .

Փորձել առնուս . ո՛հ , եւ այն փորձն իսկ հակիրճ
 Քաղէ զոգիս մեր ի վեր ,
 Եւ մինչ քո չեւ ածեալ զմատունս ի հանգրիճ՝
 Նախարձագանգք թրուչին մեր .

Իսկ ըզփափկիկ մինչդեռ ծըղիս լարէ՛ լար
 Շարժվարժենիս փոփոխես ,
 Բաժըշտութիւն ինքըն վազէ յերկնից վայր՝
 Քընար շարժուն առնու զքեզ .

Եւ ի յերկնուստ հնչիւնք հեղեալք ի դործիդ
 Ի բիւր փոխեալ կերպարանս ,
 Զարմանս ածեն՝ զիմրդ տըղայդ աղարծիդ
 Զայդքան ըզբռամբ ածես ձայնս .

Եւ բամբն եւ զիլ , եւ ոչ մին քեզ հակառակ
 Լընուն զկամացդ ակնարկին ,
 Եւ ի բըղխեալն առ ի սըրտէդ ներդաշնակ
 Շունչք եւ անշունչք ստարփակին .

Ըզսիրունակ կլափդ ի գործին եղեալ մերձ ,
 Աչքդ եւ ահանջք , վարսք յոլոր
 Ի նոյն մածեալ , քաղցր սրտիւ քով հանդերձ
 Մըխիս ի զմայլու բոլոր .

Թեթեաշարժ լարեալ ըզկիրթ աղեղնիկ
 Յանհուն գընաս ասպարէզ ,
 Դաշնակցութեանցդ ըզհետ անվարժ մեր հոգիք
 Չբաւեն փոխել քայլ ընդ քեզ . . .

Խոտվիմք . . . շունչք յաչրս մեր եւ աչք ի թըրթիոս ,
 Եւ սիրոք գերեալք թըռանին .
 Քան զԱմփիտովն ճարտար՝ սրտից դուն ըզծիրս
 Արձան կանգնես քեզ յերկին :

Ո՛վ իշխեցող դու քաջ քնարին սրբոորսակ ,
 Թէ գիտիցես՝ զի դու միայն
 Դու տաճարիս տիրես , լընուս բովանդակ
 Որ ինչ ի մեզս է ունայն .

Թէ գիտիցես՝ զ՛ ի զուարթ քոյին դոյզն ի դէմս
 Ըզքո զԱստուածն ընթեռնումք ,
 Եւ յերթեւեկ մատանցդ ի սարս գեղաճեմս
 Յերկին ճախրեմք դողդոջունք .

Թէ գիտիցես՝ զի անդ մերձեալ յարամրի
 Ունկն անմահից հետազօտ
 Լըսէ զնըւագ՝ զոր ինքն հընչէ յեթերի .
 Եւ հարկանէ ծափ քեզ յօդ .

Թէ գիտիցես՝ զի զառաջին քել ճաշակ
 Հոգիքս առնուն զեթերին ,
 Եւ անդ ի յայսմ՝ հետէ՝ սո քէն ստոյգըդ գուշակ
 Վըստահագոյնք դեգերին .

Թէ գիտիցես՝ այժմէն յաննիւթ իմն ի լար
 Որպէս ըզուճչ ընդ շրթունս
 Այնպէս զոգիս մեր կապեցեր յաստեղց պար՝
 Յորմէ չկամին գալ ի տունս :

Բայց դու լռես . եւ դեռ մոգիչքն սրտից
 Հարժին մատունքդ՝ իբր ալիս
 Զորս եթող հողմն . այլ որ ի քէն սիւգ երկնից
 Մի՛ լռեսցէ վաղ յոգիս : . . .

Ո՛հ , ես ըզմատն օրհնեմ՝ վեհին՝ որ ըզքեզ
 Աշխարհի ած ի զարմանս .
 Իցի՛ւ յաւերժ թէ եւ յանձայրն ասպարեզ
 Գոյր քեզ լինեւ ի սքանչանս :

Բաժըշտութիւն քո ո՛վ վըսեմ՝ ինձ մանկիկ
 Թափ ի հոգւոց մըտէ խորս .
 Զանմեղութիւնդ ծըծեմք նովաւ ըզքաղցրիկ
 Լարից քոց սերտ դաշնաւորս .

Եւ այնպէս միտք ի քէն զատեալ բաժանին ,
 Իբր աղօթիկեր թողու զբեմ ,
 Կամ ցայգախոհ պըւէտ զափունս առուակին
 Ուր հան երդէր լուսնին դէմ :

Անմեղու-թիւնդ՝ որդեակ, եւ նուագըդ սիրուն
 Յերկնից ու երկրէ սաշտին միշտ .
 Հրեշտակաբար ընր ինձ յամայր տէր նոցուն,
 Լիցիս յաւերժ երաժիշտ .

Եւ եղիցին կեանք քո միշտ քաղցր եւ փափկիկ
 Որպէս ձրգանքդ են անոյշ,
 Եւ ընդ երկար՝ որչափ քոյին դայլայլիկ
 Անմոռաց մեզ թողու յուշ .

Միասցի՛նդ լարս եւ շունչ հոգւոյդ անտրխեղծ
 Իբրեւ փեսայ ընդ հարսին ,
 Մինչեւ հրեշտակք բարձեալ ըզքեզ՝ հուպ աս-
 Կարգեսցեն դէմ՝ Արարչին : (տեղց

Եւ դու Կոնտէ զիմոյ քնարի զերգս ընկալ,
 Եւ ի քումէդ անբաժան
 Անակընկալդ յիշատակաւ ըզսա կալ,
 Արդեօք կեայ քումըդ նրման :

Ի ՄԱՆԿՈՒՆՍ

ԶԲՕՍՆԼՈՎ Ի ԴԱՇՏԻ

Չեռն բնութեան շարժէ զպար
 Յասպարիզիս ծաղկապար ,
 Մինչ աւասիկ մօտ զինեւ
 Սահին մանկո՜ւնքրս թեթեւ ,
 Ըստ երակացն եռանդուն
 Գըլին կանգնին եւ ոստնուն ,
 Ծաղր ի շրթունս զիրերօք
 Պատին կայտառք եւ անհոգ ,
 Ի մանրաքայլ գարշապար
 Կարծեն 'դոտնեւ բնաւ զաշխարհ ,
 Ոմն Ասայել ոմն Աբնեք
 Յաղթեն յաղթին անվէհեր ,
 Մինչեւ ի խինդ ու ի խաղ լի
 Ծառոյն ըստուեր խնդրեսցի ,
 Եւ խոնջութեան վարձք արդար
 Աւցի դինեակ զուարթարար ,
 Եւ կերակրիկ դուզնապէտ
 Ըզքաղցն հարցէ կենսաւէտ ,
 Գառանց հանգոյն վեր ի վայր
 Շարժեալ ծընօտ կարմրածայր :
 Կենդանութիւն ընդհանուր
 Ունի զպատկեր զայս մաքուր .

Դարձուածք աչաց շուտափոյթ
 Ծաղկունս թափեն լուսանիւթ,
 Եւ շուրջ լայնին փայլ ի փայլ
 Ոլորտք աւուրս այս բերկրեալ:
 Անմեղութիւն դու անբիծ
 Է՛ջ ի մանկտիս խնդալից,
 Գործեա երկայն զայս վայրկեանս
 Զի փախըստեայք են ի կեանս

1845



Մ Ա Ղ Թ Ո Ւ Ն Ի

Յ Ա Ն Կ

Ա՛անորաբեր	5
Ա՛ն Նորընծայ ճանկունն սփեճառուն	6
Ա՛ն Նորընծայ Վանական	7
Ա՛ն ուխտանուէր եղբարս	13
Յասսուածունուէր ուխտ կրօնաւորի	14
Յուխտ կուսանի	15
Ի Նորընծայ Քահանայս	18
Ի Յփեւեան քահանայութեան Տօր հոգեւորի	22
— Տ . Դաւթի Վ . Ծ	23
Ա՛ն Նորաիւրոս Վարդապետս	24
Ի Նորընդիւր գահակալ Միսիմարայ	26
Ի Գարշնորին յաճառ իւր	29
Ի Յփեւեան կենաց հոգեւոր Տեառն	32
Ա՛ն Նոյն Ընծայական	33
Ա՛ն Վրոյր ի հոռով Գարշ առնելու	34
Ի Բաժակ հրաժեշտի	36
Յանակնակալ յեպարարշ	37
Ուխտ հոգեկից սիրելու	38
Ա՛ն հարազատն ծովալուս յԱմբիկս	39
Ա՛ն Նոյն	44
Ա՛ն Բանասէր ու խնդրէր զսերտաստ	48

Առ Կերտոշ երէկապատ	52
Առ Յովնանէն ամերայ Տապեան	55
Առ նոյն , Ի քան զաւելիս Մարտիբասայ	56
Առ Յակովբ սեպոսն Տիւղ Ի Ս. Ղազար	59
Առ Նոյն սեպոսն	61
Առ Աղանուր սեպոսն արտաքելու յօրհոն	64
Առ Նոյն , Ի քարեկանի Ռոմի նորա	65
Ի հարսանիս Վերգիլեայ Ա. Պ.	62
Ի հարսանիս Տ. Մ.	73
Ի յաղթանակ ժառանգաց Պ. Եռնագեան	74
Մաղթանք քնանկաց յամենայն	75
Բաղձալեպ Ի Բարեբարս Ի-ր	77
Առ Կաղապար ճանոնի	79
Ի ճանկանն Ղբանու ի Դաւիթ	79



21
13

22
23
24
25
26
27
28
29
30
31
32
33
34
35
36
37
38
39
40
41
42
43
44
45
46
47
48
49
50

ᐅ ᐅ ᐅ ᐅ ᐅ ᐅ ᐅ



ԲԱՂԴ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

Երջանկութեան անձկոտ ու աւուրց անբապա
Մահկանացուն ի կառս կենացն անկայուն՝
Զանմիաբանս լըծել ընդ հետըս վարուն
Ըզժամանակ եւ զբաղդ ճըգնի վայրատար .

Նա ի ստորեւ թափով դիմէ անդադար՝
Սա վերձեմել անժոյժ յեթերն ի բարձուն .
Յորմէ տագնապք ի կառավարն զարթնուն ,
Եւ տատանին կառքն եւ քստմնի անդրուվար .

Մերթ ժամանակ կտրեալ՝ ըզբաղզըն մատնէ .
Մերթ բաղզն անկեալ իբր երկվար շանթակէզ՝
Միւսն ըզտաղտուկ ընթացս յումսկէտս երկայնէ :

Բայց որ վարէ բարեաց գործովք զ՝ամանակ ,
Եւ գոհ սրտիւ սանձէ զբաղզին յահուր թեւս ,
Նա զճանապարհ կենացն հատցէ անսայթաք :

Ա.Ռ. ԺԱՄԱՆԱԿ

Ո՛ր որ գընասդ անդուզ անխոնջ ժամանակ,
 Ու անհուպ սըրտիս՝ քարշէս տանիս զիս համակ,
 Կայց առ մի վայր... այլ կարոյ չիք քեզ հընար .
 Հարկ է դքո հետ, կամ քեւ լինել սըրտվար...
 Տէս ուրեմն յիս, տէս որսլիսիս ի սըրտէս
 Կորզեալ տանիս յաւիտենիցն յասպարէս :
 Ո՛ւիս յարահոս, մաշէս զանցիդ իսկ ըզհուն .
 Զամէն մաշէս, եւ ընթանաս դու յանհունն .
 Մաշեալ անկցի 'նդ հուպ եւ սրտիս ազուգայ,
 Եւ դու իբր հողմն ընդ փուզս՝ անցցես եւ ընդ սայ :
 Այլ յորժամ ոչ եւս ըզգայցեմ ըզքո թեւս,
 Երթեալ գըտից զոր արդ յինէնքս թափես .
 Ա՛ռ տա՛ր վարեա՛ հաւատարիմ առ ծովն այն
 Ըզյարածուփ վըտակս՝ որ լայն եւ եռայն
 Մինչ ընդ խոժոռ կենաց թափի վախուտ դահ .
 Երթեալ գըտից ողջ զիս եւ զիման անդր ընդ մահ :
 Տա՛ր ժամանակ, ի յաւիտեանըն տա՛ր զիս .
 Երթամ խաղամ ընդ անըսպառս ընդ ալիս .
 Եւ մինչ մաշողդ հանուրց մաշիս եւ դու անդ՝
 Սիրտս այս կեցցէ՛ անմաշ, անմահ, անվըկանդ :

ԿԵՆՍԱՎԱՐ ԺԱՄԱՆԱԿ

Կայց մահացուդ, տես զն՝ խորհիս,
 Զի ոչ արևան միտք ընդունայն.
 Ըզմէ յոգւոց ելեալ խոռովիս.
 Ահա ի դուր է ամենայն:

Ունայն են վիշտք եւ խընդութիւն,
 Ունայն եւ հոգք են եւ վայեղք.
 Սուա է եւ սէր՝ որ չէ կայուն,
 Եւ բնաւից հուսւ կան անդարձ ելք:

Յորորս ամաց հիւսեալ քեզ ձաղկ
 Վարէ անդուլն այն ժամանակ.
 Անդո՛ւլ յառաջ, վազո՛ղք եւ կաղք,
 Ի չու կամք, չեմք հաստատաբնակ:

Հայպա բարձցուք անհիւթ ոռճիկ
 Յաւերժադնաց ճանապարհին.
 Քանզի ընթացքս են վաղանցիկ,
 Անանց են կայք որ հանդերձին:

Կայց մահացուդ, տես զն՝ խորհիս.
 Գնաս աս՝ աստի թէ վաղ թէ ուշ.
 Հոգի անմահ ի քեզ տանիս,
 Յաւիտենից միշտ կաջլիր ուշ:

ԿՐԹՆՔ ԵՒ ԺԱՄԱՆԱԿ

Մըրցողք անհաշտք զերկիրս եղեալ ի միջի՝
 Կուսան կրթօնք եւ կնճուարէմ ժամանակ,
 Կովեն անեղ սուր գերանդի 'նդ կուս խաչի .
 Եւ ի կուսէն ընի դոռ ծերրն ծանակ :

Այլ ցերբ ճըգնիս է ալէփեռ ծերունի
 Խարդաւանել զաշխարհ ի վնհ սանդարաց .
 Չիցէ քեզ շատ հունձ մանդաղոյդ չարժանի,
 Հիմ ընդ կենացն հոսես եւ զկայս մահացուաց :

Դարու դարու զիզեալ սնտօլք ու եղերունք՝
 Ինքեանց բեռամբն իսկ ընկրրկեն զայն ի վայր .
 Նեցուկ կանգնել՝ զուր փորձեցին խմաստունք .
 Զուր փորձեսցէ մահացու 'նել պինդ զաշխարհ :

Երկնածընունդ աստուածաղգեաց կուսանակ
 Միայն կրթօնք՝ կան աշխարհի ասլաւէն .
 Յաղթի 'նմանէ ամենայաղթն ամանակ .
 Ընդդէմ 'նորին՝ ամենայն ջանք ոչ բաւեն :

Քանզի բարձեալ զաստուածաբարձրն լըծակ՝
 Ըզխաչըն մեծ՝ արձանոցեալ կայ հաւատ
 Ընդ մէջ երկնից ու երկրի, ու երկուցըն կըցակ,
 Եւ նիդ եդեալ պահէ զաշխարհս այս հաստատ:

Նա կարկառեալ բազուկ գըթոյ մայրենի
 Ի մըրըրկայոյզ վնճակ որդւոց Ադամայ,
 Տարածանէ զաստուածահաշտն հովանի՝
 Զամուրն հոգւոց՝ ի թըշնամեաց շուրջակայ:

Քեզ ասեմ, ծեր, փըշրեա զգործիդ՝ հա՛ր ընդ խաչ.
 Կամ երթ փախիր ընդ դաշնակիցըն քո մահ,
 Կամ լուռ ժուժեա՝ մինչեւ կըրօնք դէն իւր յաջ
 Կոխեսցէ գբեզ յաճիւն երկրի ցիր եւ սահ:

Իսկ դու զգաստ լեր ո՛վ մահացու երկրավար,
 Կաց զինուորեալ կրօնից զինու յաղթակիր.
 Զ՝ ի հուսկ աւուրն երկրի՝ լիցիս երկնապար,
 Եւ մի տապաստ ընդ ժամանակն ի մոխիր:

ԽԱՉԱՐՉԱՆ

Ո՛վ որ զբաղեալքդ էք յաշխարհի հեթեթանս
 Ի կենցաղոյս միսիթարուծիւն եւ սփոփանս,
 Ճանաչիցէք բնաւ զի՛նչ արձանդ է անարի՛
 Զոր սրանդըխտեալ յերկնից կառոյց Տէր յերկրի՛:
 Լքքէք զերկիր, ըզբաղցրուծիւնդ խաբուսիկ
 Տի նա լքքեալք լերուք՝ ու ասլա գիտասջիք:
 Յորժամ սիրտ կորուսանէ զամենայն
 Վիշտք յաճախեն, եւ յոր հըսլին՝ գառնանայն,
 Յորժամ ի բաց խուսափիցեն խընդալք
 Եւ ուծացին թերահաւատ սիրելիք,
 Կողկողագին աչս արձակեալ հայի շուրջ
 Եւ ոչ մի դք մատչի, եւ ոչ մի դէմք լուրջ.
 Յայնժամ խեթկեալ սիրտ՝ հասանէ ի վերայ
 Եւ ճանաչէ զխաչ, եւ խնդրէ եւ խնդայ.
 Աչքն նուաղեալք վառին, վառի հոգւոյն կայծ,
 Շունչն կերկեր փոխ՝ ի հառաչ սիրախայծ.
 Իղձք ոլորեալք մանեակ յարձանն անկանին,
 Յամենայնէ՛ բաց ի նմանէ անմեկին:
 Յորժամ մեռեալ է բնան ինքեան, ինքն առ բնաւ
 Յայնժամ միայն խաչիւ դեռ կեայ կենդանեաւ.
 Եւ մինչ համայն համակեալ՝ լոկ թըւի խաչ,
 Խաչն ապաստան սրտի՛ միայն չէ նմա խաչ:
 Ո՛վ սիրտք կոծեալք եւ զառածեալք յաշխարհի
 Չիք զօրավիգ քան զխաչարձանդ անարի:

ԱՐՉԱՆ ՅԵԶՐ ԱՇԽԱՐՀԱԾՈՎՈՒՍ

Արձան տեսի՛ համատարած ծովեր
 Ի բերաբեր ալեաց կոծոյ աներեր .
 Խարխիս հաստոյր չորեքկուսի ամրակուռ ,
 Եւ ըզնովաւ մըշտադալար սուրբ մամուռ .
 Եւ ընդ նովաւ կայր պատուանդան ահագին ,
 Հիմըն տարեալ գոգ ի սանդարըս ներքին .
 Ի խարրսխէն ձրգիւր սիւն շեշտ սրբատաշ ,
 Երկնից հըպեր եւ սիուէր հուր գերահրաշ : —
 Հաւատք էին պատուանդան , Յոյս խարխիսն էր ,
 Եւ բոցածայր սիւնն ըսպիտակ՝ ինքըն Սէր :
 Ըզտաժանեալն յալիս կենացըս նաւակ
 Հաղիւ յանբոյլթս հասուցեալ վայր՝ խոնջ վաստակ ,
 Ամաշ մանեակ սիրա՝ ի խարխիսն հարըստեմ
 Եւ յունկանէն ըզլար նաւուն իմ կապեմ .
 Թող գոչիցէ այսուհետեւ ծովըն մեծ ,
 Ես աներկիւղ ի քուն լինիմ յարձանս յեց .
 Եւ զարթուցեալ՝ գրտանիլ անդր ակն ունիմ ,
 Ուր երջանկաց նաւահանդիսս , ուր Սէրն իմ :

Կ Ե Ա Ն Ք

Չինչ իցեն կեանք մարդոյ յովտիս անձկութեան...
 Առասպել յառուրց նախնեաց առարկեալ,
 Եղծանելով առեղծանէ եւ ոչ դք •
 Շունչ մ' ի շրթմանց լալահառաչն Ադամայ
 Ընդ ամենայն անցեալ հադագ հողածնաց •
 Բան մ' ի լեզուէ յանդարձ փախուստ երադեալ
 Աման թափեալ զոր չեք հընար ամփոփել •
 Բոց փայլական շոյտ ի շողալ ու անցանել •
 Ծուխ բարձրացեալ եւ առժամայն ըսպառեալ •
 Յօղ ցայգական անդիմակաց արեւու •
 Սունկ, ոյր գիշեր մի դայեակ, ալւ մի դահիճ •
 Հող դըրուագեալ դառնալ ընդ հուպ ի փոշի •
 Յաւերթութիւն համառօտեալ ի վայրկեան •
 Սուր թաւալումն ընդ ասպարոյն եւ ներկայն :
 Մարդ մահացու 'նդունայնութեանց է շահապ •
 Զան եւ վաստակ եւ յար ընթացք ի քրրտան,
 Որոյ վախճան յելլոս մահու բալաձիգ :
 'Նէտ որ զերծումն յաղեղանէն խնդրէ յար,
 Եւ զերծանի եւ չըդառնայ յաւիտեան :

ՍՇԻԱՐՀ ԱՆԿԱՅՈՒՆ

Հողմին մեղմիկ որ արդ զծաղկունս ծածանէ
 Խրոխտ շառաջմամբ վաղիւ ըզմայրս կործանէ .
 Այսօր մաքուր դործէ զգաւառս օդային ,
 Վաղիւ ընդ նոյն ամէ զմըթերս օրհասին .
 Մինչ խոնարհեալ արեւ դառնայ ի մայրն իւր՝
 Զուղեւոր խոնջ կազդուրէ զով ի զեփիւռ .
 Ըզգիշերայն որոտայ շփնդըն մըրըրկաց
 Բոցածաւալ ճայթեն շանթիբ կայծակաց :

Յառաւօտին , ի ցոլ վառեալ արփենի
 Ծաղիկն հովաին գեղածիծաղ տատանի ,
 Ընդ երեկոյս հարեալ տապով ճաճանչից
 Թարշամանայ թափ՝ ի գունոցն երփենից :
 Ատ յարեւուն ցըրտահալած ճառագայթ
 Նըստեալ մաղթէ զլէր ծերունի գայթ ի գայթ .
 Անդ տօթահար տարաշխարհիկ ուղեւոր
 Ըզհովանիս խնդրէ զըլխոյն քրանաթոր :

Զովկիանու սերճ՝ մըկանամբք ի մայիս
 Նաւակ թէթեւ ճախրէ սահեալ ընդ ալիս .
 Իսկ ի շընչէլ աշնան յեղերըս ծովուն
 Ի թուխ կոհակ ծըփին նըշխարք բեկ նաւուն .
 Ի զուր մըրցեալ ի կապուտակն աստարէս
 Աւ ծովեզերքն հեծէ նաւաղն հիգասէս .
 Այրիացեալ հարսին ի զին ակընկոր
 Լացուցանէ զափունս ի կոծ աղէկտոր :

Ո՛ր որ դիմէք յուսոյ ի գիրկըս պատրաստ ,
 Տեսէք մի թոյլ իցէ կամ բնաւ անտրմատ .
 Քանզի բազում նեցուկք խըլին ի հողմոց
 Եւ խնդութիւն ի տխրագէմ շքրջի կոծ :
 Որ պերճ սիգայր երեկ իշխան աշխարհի
 Այսօր անձուկ շիրմին դընաց ի գերի .
 Արդ ո՛ւր բաժին կենաց , հրճուանք իւր եւ դեղ . . .
 Ի սուգ դարձաւ ու ի դառնագին մահագեղ :

Բաղին կոհակք եւ լուծանին ի փրփուր .
 Բուքք մըռնչեն , ճաճանչք դընան թաքթաքուր .
 Կեղերջական սօսիւն երթայ 'նդ ծառաստան ,
 Եւ ինքն ասէղն հերձեալ խոտլի ովկեան : . . .
 Ո՛հ , մեծամեծք երկրի անդարձ անցանեն
 Իբր հողմավար փռչի կամ ցիր ըղհիւլէն : . . .
 Մի է միայն որ անփոփոխ միշտ մընայ .
 Սէր՝ կենցաղոյս յաղթական , սէրն յարակայ :
 (Հետեւողաբար) 1842

ԾՈՎ ԿԵՆՅԱՂՈՅՍ

Յոց եղերաց ոչ գիտեմ
 Ընդ ծով կենցաղս տարագէմ
 Սահեալ կամ դոյզն ի տախտակ ,
 Ահեղ տարերց նահատակ .
 Ափունքն հեռի , լոյս է նուաղ ,
 Շուրջ՝ շանթք , մըրըրիկք , ժայռք , աւաղ .

Եւ ես անփորձ անտեղեակ
 Ի յառադասան եւ ի դեակ :
 Եւ ահ՝ աստեղք խաւարին
 Աղբնկալեացս աշխարհին .
 Խեղք արէտանջ ընդ կողին ,
 Հաստուածք բնութեանս կողկողին .

Կապի ճրգանցս առադաստ ,
 Ընկճի մարմինս՝ հոգւոյս լաստ .

Եւ ի չարեացս այս փաղանդ
 Ո՞ր մնան ինձ հետք անվրտանդք :

Ո՛հ, չլք աստ չլք ծոց անքոյթ ,
 Չլք փրկութեան ձեռն եւ փոյթ : —

Այլ դու, հաստիչ, եւ յոյս ծուփ ,
 Կարես, ծագեա՛ զլոյս մետուղի ,

Կարկան զլուսոյդ զառասան
 Զկապն իմ միակ անսասան ,

Կառս զսիրոյդ աստղ անշէջ
 Որ յորձանացս յածեալ մէջ

Հանից ըզկեանս ըզգուշեալ
 Ընդ մահուն լայն հովանեալ .

Թուուցից զհոգիս ի քո ծոց
 Ո՛վ Տէր , հանգիստ ծրփելոց ,

Զոր ընդ արտօսը արդ դիտեմ
 Յուզող կենաց ծովաճեմ : ...

Ա՛հ, երբ անցից ընդ կոհակս
 Պսակահամբար ի նաւակս :

Յ Ո Յ Ս

Յոյս ցուպ եղաւ յանուծ կըթոտ մարդկուծեան ,
 Եւ կիսաբող լուսնեակ մըտացն ի մըլծարս .
 'Նա զմըկանամբք սահէր պատէր զլաստ նոյեան
 Եւ զեօթնամեայ ծառայուծեան Յակովբայ՝
 Սիրով լըծեալ, զերկար տաղտուկն ամփոփէր :
 'Նեղ եւ սրկար է սիրտ մարդոյ 'նդդէմ վըշտաց ,
 Չուժէ ժուժել, թէ չըկայ յոյսն ամբարտակ .
 Ամենայն շունչ կենացն յուսով հոլովի ,
 Աւանց յուսոյ ոչ աչք շարժին ոչ շըրթունք .
 Եւ բընուծիւն անբան՝ յուսոյ սպաս հարու .
 Յուսով մըջնիկն համբար կուտէ հիւսիսոյ ,
 Յուսով ճնճղուկ բունէ ձագուց անծանօթ :
 Յուսով ծեծէ տասար ըզմայրս երկնաբերձ
 Եւ զապառաժն՝ յուսով յանդրի կոփէ մուրձ .
 Սերմն ընդ յուսոյ մշակին նընջէ յանդաստան ,
 Եւ յոսկեծայր բողբոջըս հասկ ամբառնայ :
 Յոյս ախօսէ զանդընդախորն ուկէան ,
 Մըրցի 'նդ ոլորտս , հըսկէ ի վախս եւ ի խորս ,
 Լապտեր կանգնի յեզը ալէկոծ կենցաղոյս .
 Յածի զվըճօք , ձըգի կամուրջ ըզբետովք .
 Սահի 'նդ որմունս բանտից , կապէ զխիտաշղթայս :
 Եւ վըշտահար սիրտ ցորչափ կեայն՝ յուսով կեայ :

ԱՌ ՈՐՍ ՎԱՐԵՆՆ ԶԱՇԽԱՐՀ

Յանձանօթից յափուճա ուղղեալ յանձանօթ
 Որք դեգերիք յաստարիղիդ համառօտ,
 Յանուի շրջիք, մի զկայս աւնուլ գիջիք ջան,
 Եւ մի գբաղնուլ զորովք տրւանն ի յանօթ.
 Իջեւանել եւ ոչ բնակել է հրաման:

Զինչ տատանեալ ի կենցաղում աստ՝ կայուն,
 Յոր բունն հարեալ ոչ զըջացի մահացուն.
 Յանցաւորէ ս՝ ժողովեաց ինչ անանց.
 Դարձիր եւ հարց ըզգրնացեալնն ի հերուն,
 Ըզքո նմանիս, զօր կրրեցին հակ բեռանց:

Դիզեցին գանձ, տաճարաց հիմն յեցուցին,
 Ծաղկամբք զեղերս նոցուն ու այգեօք տրնկեցին,
 Զարմանազան լուցին մըտաց ըզլստաբերս,
 Եւ վերելեալս հնարիւք փառաց կանգնեցին...
 Յանկարծ բնաւէն ամփոփեցին ունայն ձեռս:

Ո՞վ որ անգէտ դիւրածախի կենցաղոյս,
 Այլ ո՞վ զսրբախն ոչ կառուացէ յայն ըզոյս.
 Զուճայնութիւն՝ օրէնս աստեաց որ կարծէ՝
 Կամ չբբաւէ զողի ընտրել ի մարմնոցս,
 Ունայնացեալ զանձն իւր, աւանդ, գիտացէ:

Յուղից ազանց գետահեռեալ աշխարհիս
 Հունս յարգարունս սահունս եբաց ներկայիս.
 Եւ եւս հուժկուք ժամանակին թըւին թեւք.
 Սիրտ լքարրծուա, մի ջուրցն յաղթել ժպրհեացիս,
 Մի այնց հողմոց հակառակել միտք թեթեւք:

Դու քաջդ ի վեր յաստղն հայեաց հինաւորց
 Միայն անփոխ յօդոց փոխանունս եւ ի ջուրց .
 Յաստուած հայեաց, չիք նորութեան առնա փորձ .
 Նովաւ յաշխարհս այս անըրջոց ուշ ի կուրծ ,
 Նովաւ արկցես ճըշմարտութեան ջան ի գործ :

1846

ԱՆՅԵԱԼՆ

Չէր սին պատկեր, չէին անուրջք անէակք
 Որք յանցանէն իւրեանց թողին զխշատակ .
 Մի զթեւ ընդ օդ թռուցիկ, մի զէւղ ի միանունս ,
 Մի զվայրենին նրման ասեր ըզձաղկունս :
 Այո՛ նոցին գունակ սահին ամբ մարդկան
 Այլ չըձածկի հոգւոյ շաւիղն ուրուական :
 Ո՛չ . Աստուած, խիղճ, եւ անցեալք՝ չեն մուացիկք
 Ոչ քօղարկէ զնոսին ոչ հեշտ ոչ կարծիք .
 Ո՛չ խակ հընչի սիրտ երբ թըռչին յիւրմէն ամբ
 Զարմանալի արձագանգօք՝ Գեղ մընամբ :
 Տունկ գիւրանցիկ յաջոյ արնկեալ անեղին՝
 Բոց արմատոց ոչ դաշտ ոչ սարն է տեղին .
 Այլ յեզբ ի նուրբ յորկոր ծովուն առեալ տակ
 Այն ի յափնէ անդափոխիս անընտակ :
 Ո՛վ ծոցք , ս՛վ ծուփք ամանակաց ահագինք .
 Գօգէք, յոր խորս խառնեցան ամբ սուաջինք .
 Ելեալք յինէն, ըզգամ, չթողին զես ունայն ,
 Բայց խաւարաւ փոխեալ ըզկերպ սըւրնջեան .

Ո՛ւր վերացայք ո՛ւր յածիք յոյսք գեղազուարճ,
 Իմ թերակազմ բաղդք՝ էր չդգայք դուք յառաջ:
 Ծագիկ տիոցս, ո՛հ, հասակիս դալարն անց,
 Անցանէ ոյժ, անցանէ սիրտ ընդ գեղձմանց.
 Եւ ինքնին ես յետ այնքանեաց անցելոց
 Անթերթ ծաղկան սէս անցանեմ հողմակոծ:
 Ահա ծածկին ոլորոք յետուստ, ներկայս կէտ
 Է անկայուն ինձ սրտուանդան ոտընխէթ:
 Ահա գայթեալ ի կենաց... ո՛ւր անկանիմ...
 Ի քեզ, հանուրց ժամանակաց Աստուած իմ:

1845

Ն Ե Ր Կ Ա Յ Ս

Ո՛ր, զի՛ լըսվի՛րձ նըրբաշաւիլ արահետ
 Կայ խորանդունդ կրկին վըճից անջըրսէտ,
 Որ զմարդ բոլոր յուսով, փառօք, մեծութեամբ՝
 Բարձեալ բերէ իբրեւ օդ թոյլ՝ ըզթոյլ ամբ:
 Բա՛րէ՛ կամուրջ գնալեաց՝ եւ ինքդ իսկ գնայուն.
 Ո՛վ նորասքանչ ներկայք, անկեանք էութիւն.
 Ի յասպանոյն ծովէ թափել յանցեալն այն,
 Ծնանել ի մահ, անուն ունել ու ոչ իրան,
 Այս են ներկայ, այս վայրկեան, այս ժամանակ
 Յոր կեղակարծ մարդ վըստահի նոյնդունակ.
 Աւա՛ղ յուսոյն, աւեմ, կենացն եւ դործոց
 Որ յայդպիսիդ առերևոյթ յանձնի ծոց:

Ըզծեր հարցին, Քանի են ամբ հինաուուրց .
 Ասէ, Անմի . գրնաց անցեալն հանգոյն ջուրց ,
 Զոր ըմբըննէլ ձեռամբ զուր ճիգն եւ անմարթ .
 Իսկ յապագայն ո՞ արկանէլ իշխէ կարթ :
 Անցեալն՝ ի քէն ել, զապագայն վարձեալ չես ,
 Տես յանուանեալ ներկայումս իբրր գործես ,
 Որ քան զերազ եւ քան զըստուէր, քան ըզոյս
 Սուտ է եւ ճոխ ի հաղբ ի լար ի հրատոյրս .
 Լայնածաւալ զանձըն սահման ցուցանէ .
 Ըզգօն՝ ոչ սերմն, ոչ հիմունս անդ արկանէ .
 Այլ իբր արծուի յօգոյն կոհակ կախ ի նա՝
 Մերթ ընդ անցեալս, մերթ յապառնին յառեչկայ .
 Եւ իբր ըզնեա՝ ոյր չիք ի լարն առնել դարձ՝
 Ընդ շեշտ շաւիղ մըխի յուրա վերամբարձ .
 Ալլին ըզինամս Էին գիտէ, զտէրն ի լար ,
 Եւ նրպատակ՝ զարքայութիւն նոր՝ անձառ :

Ա Պ Ա Գ Ա Յ Ն

Վաղիւ, եւ այլ վաղիւ, յամիս, յամս ի գալ...
 Եւ մինչեւ ցերբ ի ժամանակն ակընկալ,
 Արգեօք հասցես ի կարծական ասպանիդ,
 Թէ ոչ քան զոյս մերձ կացցէ սահ տասանիդ,
 Կամ թէ լիցի գալին սայծառ եւ հանգարտ
 Բերող բարեաց, իբր յերազելըդ քում արդ,
 Արգեօք լըցցին երբէք անօթք ըղձից ծակք,
 Եւ ժամանեւ յակընկալեացդ իցես ծագ:
 Տես մի խաբիս. ոսկեճամուկ վարադոյր
 Զասպագայն դէմս թուեցուցանէ լուսածոյր.
 Իբր ըզձաղիկ խըլէս ըզժամս թերթ առ թերթ,
 Եւ երբ աօես գայ ժամանակն անձկաւէտ:
 Եւ նա եկեալ խի է, եւ դու չմնացար.
 Սըրտիւք ակին չհարցեր ղերկնի ճանասարհ.
 Զանմահն, ըզմին, գերաշխարհիկ զհողին այն՝
 Ի մուրացինի առուրս առնես ասպաստան:
 Արդ քեզ ըստոյգ ոմն ասպանի հասեալ գայ,
 Կեանքդ ի ժանիս ժամանակի սղոցեալ կայ.
 Ում մընայիր եւ որում ոչ ահա մահ...
 Զի զանգիտես ընդսուաջել դու վըստահ.
 Անկարծ ղիշեր զանվերջալոյսն ունի կեանս.
 Վայ որ գալոցն յուսով խոտէ վտուն վայրիկեանս:
 Քեզ քան զամէն ասպանի ստոյգ մօտալուս,
 Ըզմահ ծանիր, մի զհեշտ վայելս հոսանուս.
 Հաւատք յանցեալն, յոյս յասպագայն, սեր այժմէն՝
 Քեզ ի սահնակ կենաց լիցին եւ ի ղէն:

ՀԱՆԴԵՐՁԵԱԼՔՆ

Առօրէիւ չափին աստէնքս ամենայն ,
 Չարն եւ բարի , ճիգն օգտակար եւ ունայն .
 Մեծ են մարդոյ 'նդ արեգակամբ խորհուրդք իւր ,
 Շքրջապատեալ սակայն ունի զմահ տըխուր :
 Իսկ յետոյ զի՞նչ . . ի վեր զհոգւոյ տար զաչկուան ,
 Հաւատացեալդ , հայեաց ընդ մահ անդրադոյնս .
 Հեղեղագնաց կենցաղոյս դու չես գերի ,
 Ճակատագրեալ յանմահէն բնակ եթերի .
 Իբր ըզլըտակ բարձանց պանդուխտ՝ չունչդ ան .
 Ի խորաձոր ճընչի յանձուկ հետս ըզգոյշ , (ժոյժ
 Ձի բարձրագոյնս ցայտեսցէ ջինջ երկնապող .
 Այժմիկ դրակից որդանց յերկիր դետնասող ,
 Աստղակաճառ խորանք երկնից են քեզ յարկ ,
 Յանմահութիւն , ի սէր , յԱստուած պարափակ .
 Ըզկէտ վըշտացդ երանութիւնք անվախձանք
 Եւ ըզրոպէդ՝ յաւիտենից փոխեն կեանք .
 Եւ այնչափ սիրտըդ տառապեալ կալցէ վայր՝
 Որչափ ծանեաւ Տէր յէութեան իւր յամայր :
 Այս հանգերձեալք քո , բայց ջանիւ թէ խընդրես .
 Թէ ոչ՝ կան դառն հանգերձեալք քեզ ի ստորեւ .
 Հարց ըզհոգիդ ընդ ո՞ր ուշիւ յերկուցն այն ,
 Ձի մահացուի 'նդմիջնաշաւիղք ոչ ցուցան :

ԾԱՂՐ ԹԷ ԱՐՏՕՍՐ

Ո՛հ մարդկային արարուածք
 Յեղաղեղեալք թիւս յանթիւս,
 Եւ յարափոխ նորակերպք,
 Անհասք ի միտս եւ յանմիտս .

Ոչ այնպէս տիւ եւ գիշեր
 Կամ լուսնացոյց փոխի քարտ,
 Որպէս շեղեալ հակառակ
 Յանկարծագէտ շրջի մարդ :

Մին յար ի սկիզբն, ոմն յաւարտ
 Ներակրք թին հանապազ,
 Եւ ոմն ի վէմ կոթողէ,
 Միւսն յանցատակ ի յաւազ .

Նա եւ որ հիմն է սորա՝
 Լինի միւսոյն ի ձեղուն,
 Եւ լուսանցոյցք՝ ընդ դարանս
 Փոխանակին երկոցուն .

Նա զմըթնագոյն սիրէ զկերպ,
 Ընդ լոյս յառեալ սա պրշնու .
 Նա որպէս հողմ՝ թափառիկ,
 Սա որպէս ժայռ տակ առնու .

Սիրեն ըզկեանս եւ ծախին .
 Զինչս՝ եւ ի բանտ արդեւուն .
 Ի թագ ի բարձ նըկըրտին
 Եւ անկանին ու ընկենուն .

Ընդ սուղ շաւիղ դարձադարձ
 Ըջրտառապանս երկայնեն .
 Փոխան միոյն բիւրս բարձեալ
 Հոգովք յերկրէս ելանեն :
 Ո՛հ , յարարուածս այսգունակ
 Յեղաղեղեալ մահացուս ,
 Քրքի՛ն բարձից ըղծաղու՛
 Թէ արձակեմ արտասուս :

1818

ԱՄԱՆՈՐԱԲԵՐ ՈՂՋՈՅՆՔ

Ընդ անսահման արփայագնացն ճանապարհ -
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր ,
 Եւ աստեղաց ոսկեծըլին ընդ գարշապար ,
 Զկենսունակին անձ երկրիս ըզջեր :

Ընդ քսամնածայր ծիծաղագնաց ծըփինս ծովու
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր ,
 Անդընդահերձ սահարկեւոց ղեզերբք մահու
 Հանգըրուանս մտղթեւ աներեր :

Ընդ նրբատարրը նուադասոյլ հողմոց հնչմունս
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր
 Ընդ հիւս օդոց ընդ թիւս թեւոց ընդ ցիր բուրմունս
 Բերկրանաց տալ համբոյր հրաւեր :

Ընդ սկզաշարժ յուզմունս հասկաց արտից խար-
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր, (տեսաշ
 Եւ մարմանդից ծաղկաղգեցից ընդ այսս ալուսաշ,
 Բազմարդիւն հաստել տոհմաբեր :

Ընդ դայլայլիկս օգտարիցն երաժըշտաց
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր,
 Եւ ընդ խոխոջ քաղցրահարկաշ խաղից առուաց
 Զերկնայինն իջուցանել սէր :

Օ՛ն, ընդ սրբարից հեղահառաջ հրաշունչ հծծիւն
 Ե՛րթ ողջոյն ամանորաբեր •
 Ե՛րթ ընդ ծաւալս ծաւիկ աշացըն ցօղածիւն,
 Ե՛րթ հանգիւր առ սրտիցըն տէր :

1840

ԱՌ ԱՄԱՆՈՐՆ

Ողջոյն ընդ քեզ նոր տարի,
 Յամանակաց ծածկելոց
 Լիցի գարուստ քո բարի,
 Եւ արգասեօք լիածոց •
 Յանպարագիծ դարուց կէս
 Քայլ մի է քոյդ ասպարէզ,
 Ոյր չերեւի անգամ հետ •
 Սակայն այլաղգ չափիս մեզ՝

Աւօրէիցս հողածնաց ,
 Զորոց շրջանս համօրէն
 Սակաւք ի քոց նրմանեաց
 Յարչան երազ հատանեն .
 Ժամանակին կէտք եւ քայլք
 Եւ նօսրագոյն իւր վայրկեանք ,
 Այս զաղփաղփո՞ւնք եւ անփայլք
 Այս մահացուաց կոչին կեանք .
 Եւ ողջունեալ դու ի մէնջ
 Ո՛հորահաս ժամանակ ,
 Անլուր առ կամս եւ առ տենչ՝
 Սանձեալ զերկիր բովանդակ ,
 Իբր ըզտրմուղ ինչ կրմուղ
 Եթէ կամօք թէ անկամ
 Վարես ըզմեզ յանդարձն ուղ ,
 Ո՛ ինքնահաճ՝ բարեկամ :
 Զ ի այս օրէնքդ են՝ դընամք .
 Այլ այս քեզ յուշ , ո՛ սարի ,
 Զ ի յաւիտեան մէք մընամք
 Կեւով ըզկէս մեր բարի :

Ի ՏԱՐԵՊՆԱՅՆ

Այսպէս ուրեմն հակիրճ եղեր
 Զարեգական շրջանս, ո՛վ Տէր,
 Որ չափէ զկեանքս մահացուաց
 Ի մէսն անշէղ ըսպէս ճըշդած .
 Ո՞չ եւս նոքա դարձցին առ իս
 Ըստ փոփոխման ամանակիս :
 Ծիծաղադէմ ժրպտէր դարուն,
 Բոց թօթափեաց տուան առիւծուն,
 Կապեաց աշուն սրտուղս ի փունջ,
 Հընչեաց յերկնից ամբոց շրշունչ .
 Մըռընչեաց հողմըն հիւսիսեակ,
 Զիւնացաւ դաշան ասրաքատակ :
 Թըւ' ինձ շրջանս այս արեւուն
 Բոլորեցաւ երագագոյն .
 Խորդեանն ի սար ամպպղնաց
 Ի ջերմն եհաս բոյս հայրենեաց .
 Հատոյց երկիր զարգասիս իւր
 Դու մահացու, անցցես թափուր :
 Զեն քո աստէն հայրենի կայք,
 Անձըն նըժդեհ, ուղւոյ զաւակ .
 Շոյտ քան զընթացս արեգական
 Անցեալ ի կառս հընձող դաժան՝
 Ըզգերանդոյն բերան անկուշտ
 Յիմ նրմանիս կըշռէ անշուշտ .

Վաղեալ յանկարծ խիստ ծերունին
 Արձանանայ ի հիւղ հիւքին ,
 Ըզնորահաս մանուկ չք. քնտղ
 Ընդ սրբածայրն հանէ մանդաղ .
 Դընի տապաստ ի մահու յարկ ,
 Շուրջ դան կոծողքն ի հրապարակ :
 2 որ յերեկին փունջ վարդենեայ
 Վարսից պըսակ դուստրըն քաղեայ ,
 Առեալ ըզնոյն մօրըն գողգոջ
 Սըփոէ զչիրմաւ սիրտ ի թընդոջ :
 Ո՛հ , գընայ մարդ յանդարձ վըճիւ ,
 Մէք լալադին պշնուֆ յակճիւ :
 Ո՛հ , ո՛հ , քանիք քան զիս յառաջ
 Թարչամեցան ծաղկունք զըւարճ .
 Նըման խըռուի ես հողմահար
 Սարսուեմ լերին յամայի սար .
 Ի գիլս անուտց շողաց մանկաղ ,
 Բաղխին դըրունք , տիրէ զըմբաղ : . . .
 Ո՛հ , ժպտաչափն հընչեաց պըղինձ . . .
 Ու ահեղ կրկնեն արձագանգքն ինձ :
 Ամն յանցելոյն մուտ յովկիան ,
 Պատկեր կենացս անդարձական :
 Այլ հիմ կարծել անձին վըտանդ .
 Յաւերթու թեան չիցեմ ժառանգ :

ԱՆՅԵԱՂՆ ԱՄ

Հազար հազար հազարաց
 Առուրքք խմովք նրբանիւթ
 Ոստայն անկեալ դամագիւտ
 Մահկանացուացըդ կենաց ,

Իբրեւ ըզգորդ բազմածաւ
 Վերջապարուկ ի սանդեր
 Ծրարեալ եւ ես հուսկ յերեր
 Բացընկեցիկ ամ հնացեալ ,

Յաւիտենից ծովն ի լայն
 Ընդ նախեկեալ ծընընդոց
 Եամանակացն անցելոց ,
 Իընիմ անդր ուր եւ ծընայն :

Ո՛ր որ ընդ իս սուր սրացայք
 Մասունք կենաց տարեւոր ,
 Զերդ զիս պատանա ընկալայք
 Եթէ ի զգեստ պըճնաւոր

Ի ՏԱՐԷԿԱՊՆ

Եւ դու երթաս ամդ ընկողմնէլ անյարիր .
 Եւ այս յեախն ձայնք ողջունիցդ են յերկիր .
 Յաւերժականն ովկիանոս լայնալիճ
 Մոռացութեան քեզ հանդերձի խոր մահիճ .
 Իսկ ինձ որ յերթ քոյին ըզգամն ըզսարսուռ
 Եւ կամ ի ծուփս յիշատակաց բազմաբիւր ,
 Ձինչ ինձ ի քէն մնայցէ տարիդ փախըստեայ ,
 (Թէ արդարեւ դու՝ ու ոչ ես գնամս ի բացեայ) . . .
 Ահա հրնչէ անխոնջ ու արդարն այն սրբիւնձ
 Որ զամն ողջոյն մըշտաքարող չափեաց ինձ ,
 Եւ սրտագինս ի հուսկ յեախն յայս զօղանջ
 Զօրհասական թըւի գոչել զիւր թառանչ . . .
 Ո՛հ , ճնշի յայսբան յիշատակս հոգիս իմ
 Եւ յակամայս ի յարտասուս թաթաւիմ .
 Ոչ ըզտարին՝ այլ զամանակ զոր գընաց
 Ողբամ ըզգին յաւերժական զիմ կենաց :
 Քանի՛ շրուայք մէք ի վատնել վայրասար ,
 Քանի՛ ակամաք զերթեալն յողբալ կծծաբար . . .
 Կաց կաց . . . ահա՛ ժամն այն , գիշեր հասարակ . . .
 Ո՛հ , վերացա՛ւ թըռեաւ անց գնաց ամն արագ :
 Այսպէս փոխին ժամանակին հուսլ յաջորդք .
 Եւ զինչ բերին ինձ բարդք՝ յաջող թէ ձախորդք :
 Բարեաւ անկիր յաւիտենին դու ի ծով
 Ա՛մ՝ որ ծաղու գաս , եւ երթաս մեզ կոծով .
 Եւ քո լիցի փոխան գալուստ բարենշան
 Ո՛վ զուգասահ ժամանակին նոր իշխան :

ԱՆՅԱՆԷ ԵՒ ԱՅԴ

Եկն եւ էանց ամ . անց ձըմեռն , անց գարուն .
 Հըրձուանք եւ վիշտք անցին ընդ սիրտ անապատ .
 Եւ թէ բարեաւ գայ թէ չարեօք սրտատրուն
 Նոր եղանակ եւ նոր զգացուած սրտապատ ,
 Անցանէ եւ այդ :

Չիք ինչ կայուն . որ թըւին յամբ եւ որ շոյտ ,
 Յանց հաճոյց ոսկեակ եւ թուխն որոգայթ ,
 Ամառատեսակն ու ամառտեւակ յուսոյ կոյտ
 Բաղդ արագոտն յերթալ , ի գալ գայթ ի գայթ ,
 Անցանէ եւ այդ :

Փարեաց զերկրաւ որքան բաւեն գիրկք անձուկք ,
 Յիւղ եւ յուղեղըս փափկացիր անընդհատ ,
 Ըզհեշտամիտ գըլուխ սըճնեալ նոր վարդուք՝
 Խաղա խընդա ի տխ , յոսկի եւ յերկաթ .
 Անցանէ եւ այդ :

Եւ որ ի սուգ նըստիս համակ վըշտատես
 Բընճաւորաց խաղալիկ յայտ եւ անցայտ ,
 Եւ որ կամաւ կամ ահամայ զլաւն ստես
 Յանգորրութեան շաւեղս եղեալ խութ եւ խայթ ,
 Անցանէ եւ այդ :

Ո՛վ բարձրաձեմ միտք, ձեռք երազք, սիրաք շրտայք
 Որք հետս հորդէք շահու յանկոխ սողոտայդ,
 Հայեցարո՛ւք յոր քան ըզձեզըն նախ այլք.
 Եւ թէ ի գիւտ յաջողեցա՛յք նորհայթայթ՝
 Անցանէ եւ այդ :

Ե՛կ սիրտ ժուժկալ, ամբարձ ի վեր զաչքս դու...
 Եւ ահա զի՛նչ որ ի քեզ քաղցըր տեղայդ :
 Տեսէր զերկին, քանի՛ սփոփանք քաղցրատու .
 Մեծ է անդ սէր, մեծ էն անդ վարձք յապագայդ,
 Եւ չանցանէ այդ :

1854

Ե Ս Յ Ո՞ Հ Ա Ն Գ Ե Ա Յ Յ

ԵԹԷ ՈՉ Ի ՀԵՉՍ

ԵՍԱՅԻ

Օրհնեալ արեւ՝ որ հուր աչօքն ըսպառէ զմութ,
 Յարուցանէ զբնութիւն թաղեալ լոյս կենսանիւթ .
 Օրհնեալ գարուն հարաւաշունչ որ ցընդէ զձիւն,
 Դաշտ ըզգէնու գալար եւ սիրտ զըւարձութիւն :

Օրհնեալ է սիւգ միջօրէի որ նուաձէ զտօթ
 Որպէս խորհուրդ հանդարտ՝ անկեալ ի միտք ջեռոտ .
 Օրհնեալ է ամպն երեկորին ժամու սրարայ
 Որ յորդորէ զձեմն ի մարմանդ ցօղատարափ :

Օրհնեալ ի սարն եւ ի բայի լայն հովանի
 Որ ի խոհուն գլուխ մենաւոր տարածանի .
 Օրհնեալ զնայուն բաժակըն զով ընդ անաստ
 Որ կազդուրէ զուղեւոր՝ տանըն սիրակաթ .

Օրհնեալ ծաղիկ այր յեափն բոյր կըրթէ յապուշ,
 Եւ որ ըզբխմբս պարարեն պրաուղք անուշ .
 Օրհնեալ հաւուն գիշերւոյ ձայն զուարթնոց ընկեր,
 Օրհնեալ գուպարքն հաստատութէ դրդուք ըզսէր :

Օրհնեալ լերանց ոլորտախառն գունդ վերան
 Որ յուշ ածեն ըզհայրենիս երկնախորան .
 Օրհնեալ անծայր ծովն յարածուփ յարածիծաղ
 Պատկեր կենացն այն մըշտաշարժ մըշտախաղաղ .

Օրհնեալ յեափն գիշերոյ աստղ՝ այգուն գուշակ ,
 Որպէս ի սիրտ ծըփեալ յեափն յոյս անուշակ ,
 Օրհնեալ ճաճանչն հեզ որ յարասր ամսոց խառնի,
 Օրհնեալ անդորր որ յետ միգաց մըրըրկաց ծնանի .

Եւ առաւել օրհնեալ են ձեռք բուժիչ ցաւոց ,
 Օրհնեալ շրթունք որ հաշտ առնեն զամբոխս հո-
 (գւոց .
 Օրհնեալ է սիրտ որ խաղաղէ զսիրտս ընկերաց .
 Եւ յաւիտեան օրհնեալ սիրոյ սփռիչն Աստուած :

Զ Ո Ւ Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

Զուգութիւն է մայր բարեաց,
անզուգութիւն ծնող չարեաց:
ԵՂԻՇԷ.

Ի սկիզբն հանուրց զարմանահրաշ ի վախճան
հոյք համագոյք գընան ի նոյն միութիւն,
Կամ սիրայինք ի կեանս, կամ զոյգք ի մահուան.
Երկնից խորան զերկրաւ փարի համբոյր հեզ,
Ծուկիք ի ծաւալ ճարմանդ կրցեն երկոցուն,
Իբր անդամանդ երկթերթ սըրտից սիրակեզ.
Թեւախառնեալ սպրեն օդոյք եւ տարերք,
Ներգաշնակեալ աստեղական հուր դասուն՝
Զուգաձայնեն սանդարմետաց եւ ընդերք.
Աչք ցօղացայտ անմահ հոգւոց դան ընդ հող.
Արձանանան վէմք շիրմի գհեա արեւուն,
Շանթք ծընանին նոր ծխածանս շող ի շող.
Շաղկապ խարխիս յերկինս յերկիր ինքըն սէր՝
Որ քաղցր ի լուծ ըմբռնէ զ՛նն իսկաբուն,
Համանմանեաց ըսպաս տանի զուգարեր:
Զուգութիւն զոր չածէ բարիս աշխարհի.
Անզուգութեամբ՝ ոյց նա չեղեւ չարեաց բոյն.
Ի՞նչ խաղան տես յառաջագէտ ազգք երկրի:
Օ՛ն, ձեռն ի ձեռն համակարծիս համասեր
Զօղիմք եղբարքըս զուգակրօնք զուգարիւն,
Եւ համաշունչ ելցեն աղերսք ընդ եթեր:

ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՉԱՅՆ ՀՆՉԵՍՅԻ

Ի սըրաահար սառամանեաց
 ըզձեզ կարդամ աշխոյժք ջերոտ ,
 Ամահուութեան է ի ձեզ սիւգ ,
 արի՛ք ի գահըդ սպառգամաց
 Զընդոյրն մուսայից
 զհետ շարժելով շունչ հեզագնաց ,
 Վընարասաստ բախամաբ՝ զալիս
 նըսաուցանել մղձկուտ սըրաից
 Յուզելոց ի կրից բերմանց
 եւ ժանտաժուտ ժամանակաց :

Ագոնավար աթենական
 քան արիսեան պարող թընդից ,
 Հանձար թէ ծաղը ըզհամօրէն
 արձակելով գլորդմամբք երկրի՝
 Ի շկահիւնս հանուրց զինուց
 հակամարտից՝ գնայցէ անահ ,
 Այլ զըզձական ծըղիս հարեալ
 զհամբուրասերըն հաշուութեան՝
 Զուարթագին ականողաց
 հայցէ շարժմունս հեզայածիկ ,
 Թէպէտ եւ ցօղս ինչ աղուականս
 կայրակեսցեն թարթից քնքշանք :

Ո՛հ , գըթութիւն Տէր , գըթութիւն
 այց արասցէ մահկանացուաց .

Բանդադուշեալք եւ խակագործք,
 այլ են որդիք, քեզ ասեն հայր.
 Հայր առաջին անուն է քո
 Ի մենջ, դարձո՛ աչս հայրենիս.
 Եւ ջերաջերմ թէ ի մերոցս
 այսքան ցընդե՛լ ծուխ արտասուեաց,
 Եւ կենսախառն ճապարհեաց
 վերադարձեալ արեան ողի,
 Եւ քան ըզմահ դառն երաշխեպք
 սիրափափագ որբոց անձանց,
 Թէ հրացընցուղ այսքան տարալիք
 երկնասլացիկք բողոսին ընդ քեզ,
 Թօթափեւցին շարք շանթաշարժք
 յաստուածեան քոց արտեւանանց.
 Դարանակալն յաւիտենից
 խաղաղութիւն՝ դարձցի առ դահ.
 Դարձցի հեզն այն, դարձցի հաստիչ
 դարձցի սիրուն խաղաղութիւն,
 Որ սասանեալ յաստուածամուխ
 իսկ սրբէկիցդ ի սրբակապան՝
 Դաստ ի կըթոտ մատրուուակէ
 արդարութեանդ անաւորի,
 Զբաժակն արեան, բաժակ լալեաց,
 բաժակ խանձից եւ սրածութեանց,
 Զոր ի հերուն քամեաց յերկրէ
 վըճիւ ահեղ կամ սարսք մեղաց,
 Եւ այժմ, էհէ՛, դարձեալ ի նոյն
 ծըփան տազնապս աշխարհածով
 Ազգք եւ ազինք՝ չարեաց հաղորդք,
 իէթք յապագայց, ելիցն անդէտք :

Կէսք սանձակոծ եւ այլք անսանձ ,
 վարիչք վարեալք յապշոպ ի նոյն .
 Ոչ զըրկեալն հանդարտէ ,
 ոչ զըրկահար խնդայ՝նդ հարուած .
 Ամաչէ յաղթական ,
 փառաւորի յաղթեալն յամօթ ,
 Կապեալն ոստուցանէ ,
 եւ որ կապէն՝ զինք վարակէ .
 Որ տապալէն ու որ տապալին՝
 դէմ ընդդէմ կան ըզզողանի .
 Անհասիցըն ձեռնարձակք
 եւ առձեռնեայց աստիտաւորք :
 Արդարութեան կէտն ի միջի կայ ,
 մահացուաց աղգ երկպառակ՝
 Հանդիպածիդ արձանացեալք
 տարածըգեն միշտ անդրագոյնս .
 Յամառութիւնք բազմակարծիք
 անհաշտ ոտիք բաղխին յիրար .
 Շարժեն սուսեր մանկունք խաղոյ ,
 թըզկաց դոռան՝ արք կորովք .
 Լերկ մանկութիւն ուրացաւ
 զԱթենաս , զէն ընդ ուս եբեր .
 Հոլոնեցան դէմք ամօթլեած ,
 հրազինեցան աղու աղջկունք .
 Գրրգասուն ելք կենաց՝ ի խիտ
 խոնարհեցան մոռտս օրհասին .
 Բոմբիւնք մահու , շոխնդն արհաւրաց
 վերապատուեալ եղլւ քան լոյս .
 Հարաւ յամօթս որոտահուրս
 աստուածաբարձ զէնն հաշտարար .

Գձըձեցա՛ր եւ դու հարսնեակ նազելի
 ո՛վ քրիստոսեան կրօնք :
 Զայն տեսեալ ըզգօնութեան՝
 արտասուեաց ելիք զերկիր .
 Արտասուեաց հրեշտակն երկրի ,
 շարժլեաց գըլուխ կայծակնավարս :
 Ի խուճապել հանճարեղին
 իմաստնանալ կարծեաց պանդոյր .
 Լարեցան լեզուք , լըցան
 աղեղնաբանք ի հրապարակս ,
 Շատիսուութեամբ եւ սրտութեամբ
 ողողեցին առ հասարակ .
 Ամենայն ոք քաղաքագէտ ,
 իւրաքանչիւր ոք հնարիմաց .
 Բանասէր երիկեան
 յեց ի ջախջախ փետուրն՝ յողայ
 Թող թէ զքաղաք՝ փոքրր միւս եւս
 երկնավարել քեզ ուսուցէ .
 Յասպարէզ կարգայ՝ որ զոսն յոտանէ
 այն ինչ չէր փոխեալ .
 Լըռեսցեն ծերք , զ՛ ի համբակաց
 խելապատակ զեղաւ հանճար .
 Ամաչեսցէ իմաստուն .
 լուռ լիցի արդար , զի նոր է դարս ,
 Եւ նոր տեսին լոյս , նոր աստեղս՝
 որոց ի վիհս երթային ոտք .
 Ազատ է մարդ , հայթհայթեսցուք
 զազատութիւն , եւ որպիսի՞
 Այս են ո՛վ Տէր , այս համախոռով
 երկրի տագնապք ջերմնասարսուռ ,

Ընդ որ հարկ հասարակաց
 դընես հորդել զանձնիւր շաւիղ՝
 Յանմատուցից մինչ ի բարձանց
 աստուածու թեանդ ծիծաղիս դու
 Զկամահաճոյ եւ զաղփաղփուն
 իրակու թեամբք մահկանացուաց ,
 Ոչ անցասումքն դիտելով
 եւ ըզժըպիրհն աղակատանս :

Այլ եթէ , աւանդ երկրիս ,
 պարտք անհրաժեշտք կարդան ըզլլեժ ,
 Եւ տակաւին սուր վերացեալ
 է քո ի խրատ որդւոց մարդկան ,
 Արկ աղէ արկ , եւ իշխե՞ զայս
 աղերսարկու մաղթել բերան .
 Արկ ըզսուրն արդարութեան
 յանօրինի դասուն նըժար .
 Կորացի իրունկն արիւնհաճեմ
 յանպարտահոսն ճապաղւօջ .
 Համբուրեցէ բերան դոռող
 զոտն անմեղին զոր ընկըճեաց .
 Հեբբեցի հողահանուն
 մարդակոտոր եղջիւր կոկող ,
 Ընդոստուսցէ զնա հեշտհոլով
 բաղդին անիւ՝ եւ ճմլեսցի . . .
 Եւ ի քթը թեւ քում փայլական
 համառօտեալ ըզլլեժ երկրի՝
 Արձակեսցես յուխտիդ բաղնէ՝
 յերկնակարկան Այրարատայ
 Զկամարն յաշտից՝ ի կայծս արեան
 եւ յարտասուս շափիւղափայլ .

Եւ լրօնեցեն հրացանութիւնք,
 լրօնեցեն խօշ ամբօխութիւնք •
 Եւ յընդհանուրըս ցանկալին
 Խաղաղութեան ձայն հրնչեացի :

1849

ՍԻՐՏ ՍՈՒՐԲ ԵՒ ՀՈԳԻ ԽՈՆԱՐՀ

Ոչ ընդ հաստուածս հրակայի
 հաճեցաւ Տէր, ու 'նդ կորով,
 Ոչ որ յըղձից բընամուղ
 բնութեան վաղէր ըղջափով •
 Անդոհք զանձանց նրկըրաին,
 եւ անժամանք՝ յոր կան դէս՝
 Զանձն եւ զերկինս վայրապար
 ողբովք առնեն դատափետ •
 Այլ ընդ խոնարհըն սըրտիւ
 որ վերասըաց տածէ սէր,
 Յիշատակաւ յաւերժից
 ճենճերելով անձնանուէր :
 Բաղդի հիբի յարարէն
 վիճակեցաւ եւ ոչ որ •
 Բայց թէ տուէրցըն շնորհաց
 անփոյթ Եղեւ իւր կամօք •

Վամաւ է մարդ, իւ գըթեաց՝
 գիտէ նովին եւ յանել,
 Յարուցիչ զինքն ունելով
 ըզբարեսէր տէրն ընաւէ :
 Փոքրիկ հաստուած է սըրտի
 յերկթաղանթեան սուղ անկիւն,
 Այլ ի փոքուն բարձեալ կրէ
 զանբաւատար զօրութիւն .
 Մեծ է երկիրս, այլ հազիւ
 հաստչին ոտից սրատուանդան,
 Աթու անձուկ է նըմին
 եւ երկնավայրն անսահման .
 Հանգիստ ահեղ զօրութեանցն
 եւ հաճութեանցըն դադար՝
 Յուզեաց քնընեաց եզիս Տէր
 ըզմահացուաց սիրտ խոնարհ :
 Մինչ էրն ինչ չեւ, եւ միայն
 տարածանէր յընդհանուրս՝
 Յանչափական ոչընչից՝
 աշխարհս անչափս ած ի դուրս,
 Ուր գումարեալ ներգործէր
 անդորրաւէան էութիւն,
 Եւ զօրութեանցն ահեղից
 ոչ հանդուրժէր բնաւ բնութիւն .
 Իսկ վէհագոյն մինչ էած
 զաշխարհարար կամս ի գործ
 Մեծ իմն աշխարհ յաշխարհի
 կառուցանել նոր ու անփորձ,
 Տեղի յերկինս ոչ դրասաւ
 եւ ոչ յոչինչորն թաքուն,

- Այլ ի կուսի միում սիրտ
 փոքրիկ, ցած, հեղ եւ սիրուն:
 Ոչ հրամանաց ձայնս հասոյց,
 ոչ զահեղ ձեռն անդ կարկառ
 Որպէս երբեմն ի հաստել
 զտարերս եւ մարդ՝ յիւր տխար:
- Այլ զինքն համբուն խողացոյց
 չափաւորեալ յանբիծն այն .
 Ոչ եւս հաստուած, այլ զհաստիչն
 աստուածութիւն՝ անդուստ հան:
- Այսքան սիրտ մեծ է ի մարդ
 խոնարհութեամբ խորացեալ
 Եւ մըշտեռանդըն սիրով
 անդուլ յինքեան ընդլայնեալ:
 Ճարտարապետըն սրբոյց
 ի հալոցացն երկնայնոց
 Կայծակ մի վառ սիրասուն
 յամենեցուն կարկ ծոց .
 Զանբիծ ըղձից դիր լուցկիս,
 յոժար կամօքդ արծարծեա՛ ,
 Եւ կայծըն խուն՝ քան զերկինս
 ընդարձակեալ յորանայ:
 Յայնժամ շրթունք քեզ շարժին
 ոչ ի բարբառ ճարտասան,
 Այլ սրովբէկց հանդունակ
 փոխեալ ի լար հրաթերթեան,
 Ոչ եւս լեղու յողածայն
 ճըգնի զսրբաթիգ խնացուած՝
 Այլ յառաջեալ ինքն հողի
 պատմէ զանճառս լրսէլաց .

Հողի ունիս հրեշտակի ,
 ստացիր եւ կամս , զի կարես .
 Կոխեա զհրասպոյրս աշխարհիս ,
 եւ սուրբ է քո ասպարէս :
 Յիշեա զի մի սիրտ է քեզ ,
 եւ ստեղծողիդ զայն սրբաբախ ,
 Սափոր սիրոյ հրածորան ,
 կարկան հասաչին զոր ունիս :
 Ո՛հ , խաղացո յայն աղբիւր
 զաղնըւական հիւթ սրբախդ ,
 Եւ մի նդ երկիր վայրաբեր
 վառնես զկենաց քոց առիթ .
 Յաստղակոհակ ի ծովէն
 հատեալ վըտակ դու սիրուն ,
 Մի այլուր մի , այլ յաղբիւր
 քոյնն դարձիր , երթ յայն հուն .
 Ե՛րթ ուր հանուրք սրբազանդ
 երթան լինին սրբաավէժ :
 Յաստուածութեան ոլկիան
 զուգածըփեւ միշտ յաւէժ :

ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ

Ընդէր տարեալ ի վեր գրլուխ բարձրաձաղկ՝
 Երկնից հմայես ակրնկալեօք անէակ •
 Դարձիր ի վայր սիրտ գուռոզ, որդնըդ աղկաղկ,
 Ճանապարհ դիւր կայ քեզ առ ոտնն համարձակ :
 Շաւիղ բարձանց շեշտ է, գրժուար ամառայք,
 Թեւաւորաց է ճախրել անդր անվրտանդ,
 Տրկար ոտից դեղեւաց հեղ լիցին կայք •
 Յերկրի վարժեաց, զերկնից ցանկաս թէ խոյանք :
 Խոնարհութեան եւեթ շաւիղ անկասկած,
 Ընդ որ երբէք ոչ խանջեսցի ուղեւոր •
 Ո՛վ սիրտ շուարեալ, հայեանց այր վեր յԱստուած,
 Այլ ընդ խոնարհ հետրս գրտցես զիւր շընորհ :
 Խոնարհութիւն, դու մոյթք կենաց կամրըջոց,
 Ընդ որ Աստուած արար ուսոյց ելեւէջ •
 Խոնարհութիւն, լեր դու սրբախ ցուլ ցաւոց,
 Եւ անվրտանդ անցցէ կրրից նա ի մէջ :
 Յորժամ խորհուրդք հրպարոք անդան հուր եւ
 Թեւօքդ հեղիկ լէր դու հողւոյն հովանի • (մուխ,
 Եւ յորժամ բեռնն ծանրացցի՝ սիրտ արբմուլ,
 Ե՛րթ լրծակցեաց, եւ զամենայն քեւ տանի :

ԱՐԻ ԱՐԱՆՅ

Արի արանց էր եւ երթայր ,
 Եւ յերթն առնուլ՝ աշխարհ թընդայր :
 Բարձրաճակատ բարձրահայեաց
 Զաչօքն առեալ հիւ հըրճուանաց ,
 Եւ սիրա ի ծոց ուրախալիբ՝
 Հաղիւ ներէր կոխել զերկիր .
 Շուրջ ոլորտիցըս բոլորակ
 Սահման թըւէր խուն ու անարձակ .
 Այնքան յուսով էր պատարուն ,
 Այնքան սիրով էր եռանդուն :
 Արի արանց էր եւ երթայր
 Եւ յերթն առնուլ՝ աշխարհ թընդայր :
 Եւ կորովի եւ քաջալանջ
 Ի վըտանդաց դոռ աննահանջ ,
 Դիմագրաւեալ անղէն անզրահ
 Ըզբանակաց իսկ մերժէր զահ .
 Զարիութեան զգեցեալ արբուն
 Արհամարհէր զհասակս համբուն .
 Մանկութիւն՝ սէզ էր առաթուր ,
 Ծերութիւն՝ խալի ինչ թաքթաքուր .
 Ինքն եղեւին յաղթահասակ
 Հովանաւոր մայրեաց պըսակ :
 Արի արանց էր եւ երթայր
 Եւ յերթն առնուլ՝ աշխարհ թընդայր :

Աշխարհս համայն՝ ինչ ոչ արժէր ,
 Զամէն զնրնէր զամէն մերժէր ,
 Արժաթ ու ոսկի կայր արհամարհ
 Առ սիգաշարժն այն գարշապար ,
 Ոչ մի գոհար ակնասրտիդ
 Շողայր շարժէր զաչսն շափիւ :
 Նրմա թափուր են թանգարանք
 Նոր ինչ չունին վաճառականք .
 Ոչ ոք ճարտար հընարագէտ
 Բաւէր ըզնա՝ ոնել հակամէտ :
 Արի արանց էր եւ երթայր , իօ :
 Տիեզերաց յառեալ ընդ ծիր
 Միում՝ լոկոյ արար ընտիր .
 Կարթեալ ըզսիրան ի մի եւեթ՝
 Ըզնա միայն ձրգէր ըզհետ .
 Ի միջակէան եղեալ սրտի
 Թըւէր ամէնն այլ սընոտի .
 Սէրն ի սըրտին էր բարձրագահ
 Եւ յոյս առոյգ փարատէր զահ :
 Տեսեալ ըզնա՝ երանեցին
 Եւ երանէր անձամբ անձին :
 Արի արանց էր եւ երթայր
 Եւ յերթն առնուլ՝ աշխարհ թընդայր :
 Թեթեւ թըռչէր բաղդն իւր վառ վառ ,
 Կարապետեալ փառաց ի փառս ,
 Եւ վարդագոյն ոլորտն հանդէս՝
 Լայնէր աեղի տայր ճեպ ընդ ճեպ .
 Ինքն ըզսրտին յիշէրով սէր
 Շողայր շարժէր ճակատ վըտեր .
 Եւ ծածանեալ գիտակս ընդ ուս

Թօթափեւելով բոց ընդ աչկունս ,
 Իբր երիվար ուղղակի փորնչէր
 Եւ խոյանայր եւ յառաջէր :
 Արի արանց էր եւ երթայր... ,
 Եւ երթլցէ մինչեւ ցո՞ր վայր :...
 Գամ մ'իջուցեալ զաչս ի գեաին ,
 Եւ զինչ ի տես գայր առ ոտին :...
 Ընդէր պաղի փաղփուն ճակատ ,
 Ընդէր մածնուն վարսք ոսկեհատ...
 Որպէս փայլակըն խաղաղի ,
 Սէրն ի սըրտին մէջ նըւաղի .
 Յոյս վերջոտնեալ տասն ասպարէս ,
 Եւ մոռանայ զքնաւ զիւր հանդէս :...
 Ա՛հ , անփախուստն հանուրց սահման ,
 'Նրմ' անջրբակա կայր՝ գերեզման :...
 Արի արանց էր եւ չերթայր .
 Ոտն ի յերեր սիրտըն թընդայր :...
 Արեւն ի մայրըն խորասոյզ
 Լուսին ու աստեղք ամպրոպայոյզ ,
 Հողմըն ցըրտին , եւ բնութիւն լուրջ ,
 Խաւար խոնաւ տարածեալ շուրջ ,
 Երկինք մածեալք իբրու քարայր
 Եւ սօսափիւն մահու գոռայր :...
 Յոգւոց եհան , « Ո՛հ յոյս , ո՛հ սէր »...
 Ի ոչինչ դիտէր , ոչինչ լըսէր :
 Վաղէլ զվրհիւն այն ոտն ամբարձ...
 Եւ վիհն անեղր էր եւ անդարձ :
 Արի արանցն այն ոչ եւս էր...
 Ո՛հ , ոչ եւս յոյս , ո՛հ , ոչ եւս սէր :

ՃԱՆՍՊԱՐՀ ԵՐԻՏԱՍԱՐԳԻ

Երեք եւ զորս անհետք է ինձ իմանայ,
 եւ զչորրորդն ոչ ձանաչեմ. Չհետս արծուոյ
 բռնացերոյ, եւ զձանապարհս օձի ի վերայ
 վիւնի, եւ զչաշիրս կաւի ընդ ծով զնացերոյ.
 եւ զձանապարհս ասեւ երիտասարդի:

ԱՌՅԿԳ

Հողաթեւեան լայնասիւն

Խոյսխաղաց եւ վրսեմ
 Սաւառնայեալ սուրանայ
 վերանայ շէշա արփաձեմ,
 Վարազաջեղ կըռակոռուց
 լիամագիլ հուրաչեայ,
 Յերկինս յեթերս յարձակի,
 Թողու զտըրաս ի բացեայ.
 Արհամարհեալ ըզէրամբք,
 դրնէ եւ զամպըս նըկունս.
 Պարտասին աչք հետազօտք
 ըզսլացելոյն ի բարձունս.
 Նա թեւաբախ յառաջէ
 համառօտեալ ըզսահմանս.
 Եւ ոչ բաւին գըծիլ հետք
 յարագարագըն խոյանս:
 ԱԾՐՈՒԻ է սուր. ի կարկառըս
 լերանց բոյն իւր ի կախ.
 Ինքըն ղերկնիւք քերելով,
 եւ հետքն անհուն եւ խաղաղ:

Զարհուրագին է սարսուռ
 եւ սոսափիւնք մըկանանց .
 Սոսկալիթիար ու անարի
 յողն եւ ի պորտ ու ժապանձ ,
 Գալարագեղ եւ ճապուկ ,
 օղ ընդ օղին քընթըռնեալ
 Զհասակն հարուստ կանգնաշար
 կըռեալ ձուլէ միաքայլ .
 Շքէ շքէ եւ շարժի ,
 տարեալ ըզտուան առ գըլին ,
 Եւ ըզգըլուի բարձրաճօճ
 սարսեալ ձրգէ բացագին
 Փայլակնաձեւ ի թըրթիռ
 ծամածըռեալ ըզվիմաւ ,
 Կողէ ի կող ճապատի
 սրատի զլերամբ եւ զանձաւ :
 Օձ է վիշապ , շանթեղով
 սուգէ ի սորըս խաւար ,
 Եւ ի սողան՝ ըսպառի
 ստուերակերպն իւր ճանապարհ :
 Ընդ համափիւռ հոլանի
 տարածութիւնըս նամէտ
 Ծիածաւալ ծով անծայր ,
 որրան ծըփանց յարավէտ ,
 Ճեղքեալ ճեմեալ ճօճ առեալ
 ըզմըկանամբք անփետուր
 Թըռուցեալ գայ լաստափայտ
 սրաստառալիւր կողամուր .
 Օգասարիկ եւ լուղակ ,
 մըրըրկաթեւ եւ հրաշունչ ,

Տոհորակեալ ընդ տարերս
 ամէհիս խօլս յարամնունչ .
 Կառք եւ կամուրջ գընայուն ,
 փրփրայարոյց ասպատակ ,
 Պատըշգամեալ զանդընդովք՝
 յուսոյ տաճար անյատակ : —
 ՆԱ՛Ւ է, հնարից ու արգասեաց
 ըշտեմարան ակաղձուն ,
 Վարգի յալիս բովանդակ ,
 եւ շաւիղք ոչ են նորուն : —
 Ամբարձի զաչս ի բարձունս ,
 եւ խոնարհեալ էր արծուին ,
 Ի լայնալիճ աղեղանց
 թափեալ թօթափք թըռչանին .
 Աննակապիճ իւր շիջեալք ,
 եւ հողմ՝ ձըրձէր ըզփետուրս :
 Տեսի զվիշապըն վիժեալ
 ի սորամուտ ծակագուրս ,
 Իբրը կաղնի ոստաբանց ,
 եւ անրակք տուռն տունն անդ ,
 Օղք եւ լեզուն եռասայր
 վիմատառեալք եւ կաշկանդ :
 Ո՛հ, եւ զծովուն շահատակ
 տեսի զնաւ՝ հուպ ի հանգիստ ,
 Նենդեալ յալեաց եւ հողմոց
 կողքըն կռածոյք բարձրանիստ .
 Թեւակապուտ եւ կարկամ՝
 ի խիթ ու ի խիճ խաղալէք ,
 Զըրապարպատ եւ ջախջախ՝
 մերկ թափուր կայր բացալէք : . . .

Երկառասարդ քաջաւոյգ
 գեղեցիկագէլ եւ հուժկու,
 հանձարաշատ խորագէտ,
 ու առ ամենայն սիրարկու:
 Որ բարձրագլուխ բարձրայօն
 եւ բարձրաքայլ ընթանաս,
 Բաղդ ի բըռին, յոյս քո զքեւ,
 եւ շուրջ վայեքք ձեռընհաս:
 Յանձնապաստան ի կորով
 մըտաց եւ յաջ եւ ի լանջ,
 Փառք եւ համբաւ, շահ եւ սէր՝
 վարեն ըզսիրտդ աննահանջ:
 Արհամարհես զառաջնովք
 վըստահ յեռանդն եւ յաւիւն,
 Ընդ բարձր, ընդ խոր եւ ընդ լայն
 անդունդա՝ հորդել նոր քեզ հուն,
 հայեաց ի բարձր արծուին,
 յօձ խոր, եւ ի նաւըդ հարուստ,
 Եւ ծանիր քեզ ճանապարհ:
 Չիք ինչ անբոյթ ու անկորուստ:

ԱՌ ԲԱՐՁՐԱՄԻՏ

Չըկտեալդ ի վեր քան ըզլայի՝
 ս՛վ կարծեցեալ չափահաս,
 Աշխարհի ունչս արարեալ
 որ բարձրակոխս ընթանաս,
 Դարձիր հայեաց ս՛ւր կոխես,
 հայեաց ի յետս եւ յառաջ,
 հայեաց յանցեալսն եւ գալիս,
 եւ ծանկցես ըզքեզ քաջ:

ԱՌ ԲԱՆԱԳԷՏ ՅՐՏԱԲԱՆ

Լեզուս խօսի Սիմոն, գիտէ եւ ճառ եւ տաղ,
 Բազում եւ այլս: - Զքիչ սրտիասէ. - Վըրտի եւ աղ:

ԵՐԳԻՉ ՎԱՏ

Ամենահնար է Սահակ յերգ, չէք խըտիր ինչ
 Ընդ նըւագեղն ընդ որոտալն եւ ընդ զըռինչ:

ԱՌ ԿԱՔԱԻԻՉ

Ճարպիկ ճապուկ կըռես, Սիդա, զոտք գեղապար
 Ընդ մի գըլիոյ կայ քեզ երկու զգօն գարշապար:

ԱՌ ՊՃՆԱՍԷՐ ԻԻՂԱԳԼՈՒԽ

Վա՛շ գեղադէշ գըլուխ հերօք պաղսպաջուն ,
Խեւքդ անդ հանդէս առնէ՝ թողեալ զներքին սուն :

ԱՌ ԼԿՏԻ ՔՕՂԱԻՈՐ

Քօղածածուկ շրջի Շամիկն ամօթխած ,
Ում յամօթոյ՝ միայն սրաստառն այն մընաց :

ԱՌ ԱՂԱԶՈՒՐ ԲԱՐՉՐԱՅՅՆ

Վասն էր Ղազար յօնըս պուրջաեալ կոկող կոկող : -
Զի բանադէտ է , վարժապետ , այլ եւ քարող :

ԱՆՅՈՒՆՆԵՐԻ ՈՐՍՈՐԴ

Միջօրէի բարձր ու սրայծառ կամօրէն
 Կայծակ թափուէր զինչ ի դարբնի բարկ փրուէն .
 Չորս դին այրած դեղնած էր լայն անսպառ ,
 Տաք տաք շողի երնէր յաւղէն անընդհատ .
 Մէջ տեղն անտառ էր թանձրախիտ եւ ծառուտ
 Ինչ փուռն մի մազ ի ճակատ կուճառ ու կաշուտ :
 Ժամ հանգրսափ էր բընու-թեան ու անտառին ,
 Դադրէր էր հով ջրբին , դադրէր հով ծառին .
 Ի զով ջրքին քընէր ամէն կենդանի ,
 Բայց անու-թի կուշարն միայն քուն չունի : ...

Հանտառին ծայրէն ժաթերով կու գար
 Մէկ երևտասարդ մ' յոգնած ու մոլար ,
 Երեսով կարմիր , ճակատով դեղին ,
 Մազեր թուխ ու թաւ , մօրուք սեւագին .
 Մասներըն մազոտ , երկայն ու խաղուկ ,
 Աչքըն՝ կէս մարած կըրակի խարուկ .
 Այսերըն թուամած զեա կաշի նըռան ,
 Ծընօտըն կախուած , կիսաբաց բերան :
 Խուրճ մը նեակերու ի շաղակն ունէր ,
 Ձեռաց գաւազան լարթափ աղեղն էր .
 Որսորդ էր կըրարիճ , այլ ուժէ ընկած ,
 Զօրն ի բուն որսիկ զարնէլ չէր կըրցած .
 Տաքն ու յոգնու-թիւն եւ անօթու-թիւն
 Սիրտըն քաղէին եւ ոյժ ծընկներուն .

Հասաւ զինչ հարբած բեւեկիտոյն ներքեւ,
 Մարմնրած աչօք նայեցաւ յարեւ.
 Չըզէց ըզկապարճն յուսէն ի դետին,
 Փրօուեցաւ ընկաւ նրման իւր նետին,
 Չըզէց անիծեց զաղէղն անպիտան.
 Քրնանամ, ըսաւ, կու սպասէր մահուան,
 Անշարժ ու դեղնած գէմքին վերեւէն
 Կ'անցնէր արամուժիւն՝ ինչ շուք տերեւէն : . . .

Օրհասրակն անցեր, յետինքն էր մօտեր,
 Դադարած տարերքն յանկարծ արթընցեր.
 Հոյն յանապատէն հասեր էր յանտառ,
 Տերեւէ տերեւ շարժ ու դող կ'երթար.
 Ի ծառոց ծայրէն փրչեց շունչ զովիկ,
 Երիտասարդին զըսաւ պող հովիկ.
 Բացաւ նըւաղած աչերն ու թըմրած . . .
 Տեսաւ իր նրման մէկ մ' հոն մօտ կեցած.
 Նրման կերպարանք եւ նրման հասակ.
 Բայց փափուկ մարմնով գունուլըն ճերմակ,
 Մաղերըն խարտէշ, լուսերըն կապոյտ,
 Բոլորն հեղուժեան անոյշ երեւոյթ :
 Չեռքն ի կախ ունէր փայտեղէն սընակ,
 Թեւին տակ տաքուկ լաւաշ ըսպիտակ,
 Երիտասարդին շարժէն որ տեսաւ,
 Կանչեց անուշիկ, « Եղբայր իմ Եսաւ » :
 Եսաւ մարմնրած աչերըն շարժեց,
 « Այ եղբայրս Յակոբ » . . . կէս շքնչով կանչեց :
 Չեռք տըւաւ Յակոբ, կրթնեցաւ ծառին.
 Պընհակըն տեսաւ, գոյն եկաւ գէմքին.
 « Բեր տեսնում, ըսաւ, եղբայր, ինչ ունիս »

Թէ զԱստուած սիրես՝ սպրեցու գերիս .
 Զօրն ի բուն դարտակ ժուռ եմ եկեր հոս ,
 Քաղուէր է հոգիս , ու չեմ գրտած որս ։

Եսաւ նըստած կու նայէր

Աչերն աղբիւր վազցընէր .

Լացաւ Յակոբն ալ սիրուն .

Բայց ձայն մ՝ առաւ իր հոգուն ։

« Հաց ունիմ տաք և ոսպնածան ,

Ինձ ու հովուիս բաւական .

Զիս ու զհովիւքս զըրկեմ ,

Հացիկ թանիկ քեզ ձըգեմ ։

— Հացիկ թանիկդ այս անգամ

Տուր ինձ , ինչ կամքդ՝ էս քեզ տամ ։

— Հացիկ թանիկ քեզ ըլլայ ,

Կեր ու քո սիրան ուժովայ .

Բայց փոխարէն այս աւուր

Անդրանկութիւնդ ինձի տուր ։

— Ա՛հ , էս մեռնիմ ու կ'երթամ ,

Կարճ են օրերըս , կարճ ժամ .

Անդրանկութիւնս ինչ պիտի .

Եղբայր , ահա քեզ տըւի ։

Թօթիկեց Յակոբ զաջն Եսաւայ .

« Հացիկ թանիկ թող քեզ ըլլայ ,

Կեր , ըսաւ , կեր եւ ուժովցիր

Եւ անդրանիկ զիս քեզ ճանչցիր ։

Գըրկեց զեղբայրն ու պագ տըւաւ ,

Հացիկ թանիկ թողուց թըռաւ ։

Եսաւ յողնած քաղցած բացաւ լայն բերան .
 Կերաւ լափեց եւ ուժն եկաւ ի վերան :
 Ելաւ ցատքեց , բայց բան սրահսեր ի սրբտէն .
 Անդրանկուծեան շնորհքն ելէր էր իրմէն :
 Կուշտն որ լըցուաւ , աչքն բացուաւ , իմացաւ .
 Բայց ինչ օգուտ , խոստմո՞ւնքն իր դէմ կանգնեցաւ .
 Խորոցուց աչքն ու դարձուց հեռ Յակոբայ .
 Ոչ Յակոբ , ոչ անդրանկուծիւն կը դառնայ .
 « Այսպէս , խաբող եղբայր , կանչեց յուսահատ ,
 Անդրանկուծիւնս առիր տալով սոսկի մ'հատ » . . .
 Կոտրեց պընակն , զարկաւ կապարճն ի շալկին ,
 Քաշեց զաղէղն , ու ծածկեցաւ յանառակն :



Ո՛վ դու պարծող յաղէղ խելաց , լեզուիդ նեւ ,
 Որ թափառիս գիշեր ցորեկ որսոց հեւ ,
 Անտառ մացառ շարժես՝ անդուծ թափ տալով .
 Անցած անդերդ աւեր դառնան սոսկալով .
 Փախչին որսերդ ի քէն ի ձոր եւ ի սար . . .
 Բայց այն սուր սուր նետերն որ տաս վեր ու վար՝
 Քանի՛ քանի՛ անմեղաց , ս՛հ , զեան բերեն ,
 Քանի՛ որբեր կ'ընեն , քանի՛ բոյն կ'աւրեն .
 Քանի՛ անձագ մայրեր ճուալով կը թըռչին .
 Լըսէ Աստուած , ցրրուէ նետերդ մէջ օգին :
 Հրպարտ արուեստդ ըզքեզ թողու անօթի .
 Անդրանկուծիւնդ առնու եղբայրդ հեղհոգի .
 Դու գեռ բերանդ ի հով աղեղըդ լարած
 Անտառ մացառ շարժես կ'երթաս թափառած :

Դարձիր դարձիր որսորդ, աղեղը թող տուր,
 Գրնա դառնուէ հովուէ ի դաշտ ու ի բլուր -
 Խոտն է դաշար, առուակն է զով, օդ պայծառ
 Որսորդ, եկուր ի դաշտ, թող զայդ սեւ անասաւ -
 Հոս շքիկ կայ, հոս ծործորիկ, հոս լերինք,
 Թող տուր հայ հոյ ձայներն՝ եկ առ հրնչէ՛ սրինդ :
 Գառներն են հեղ, ուլերն հրլու, շունք ըզգասա,
 Հովիւ եղեր, ամէն բան հոս քեղ պատրաստ :
 Որսորդ, դարձիր յանտառէդ, նետըդ թող տուր,
 Ա՛ռ ցուպ հովուի, ու հին ցաւերն մոռցուր :
 Երկինք միշտ հաշտ են, միշտ արեւն է պայծառ,
 Ա՛հ, սիրտք մարդկան, ինչո՞ւ դուք այդչափ յա -
 (մառ : ...)

Ի ՅԵՍՈՒ ԵՒ ՅԱՐԵՒ

Դեպան օրավար ի շող շաւղիդ հիմ՝ ճեպիս -
 Անդո՛ւլ արեւակ, դըլա՛ ծուլա՛ ինձ այսօր,
 Եւ մի դու լուսնակ՝ գիշերավար խուճասպիս :
 Յայդք եւ ցերեակք գոն բիւրք ձեզ նոր -
 Ի գործ՝ մընայ ինձ այս մի օր :

Կացէք ի կայիդ ձերու՛մ արեւդ եւ լուսին,
 Եւ մի զսակ լուսոյ խանդայք ու՛մ պէտս ունի ձեզ -
 Մի հեւան արջնաթոյր սփռէսցի ցուրտ գիշերին,
 Մինչեւ հաաից անցից անգէզ,
 Հատից եւ ես զիմ ասպարէզ :

Յերկինից առեալ ազգ՝ կրրթիմ ի կուռ նրապատակ .
 Ունիմ եւ ես գործ մի յաշխարհիս կատարել .
 Ընդդէմ թրչնամեաց Աստուծոյ կամ նահատակ .
 Մինչեւ կենացս անուի գլորել
 Գործ մի ունիմ ես բոլորել :

Ունիմ եւ ես վրէժ մ'առնուլ եւ Տեառն իսկ է վրէժ .
 Եւ սիրաս է համբոյր, հաշտ եւ հարուած՝ զոր ածեմ
 Չարի գիմամարտ՝ ի բարին դէտ կամ յաւերժ :
 Արեւ, լուսնակ, յուշիկք ի ձեմ ,
 Զի զգործ զի վրէժն իմ լուծանեմ :

(փոյթ ,

Այլ ո՛հ, կեանք խաբկանք՝ ինձ քան զաստեղս ի սահ
 Խիթամ թէ զիմ գործն ու զվրէժ թողում կիսա

(ւանդ . . .

Բայց մի ոչ երթամ յանմահու թիւն . եւ զի՛ փոյթ .
 Օ՛ն լուսնակ դու 'նդ արեգականդ
 Կացջիք վրկայս ինձ ի կայդ անդ :

ՆՈՐՈԳԵՍՅԻ ՈՐՊԷՍ ԱՐԾՈՒՈՅ

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ՔՈ

ՍԱՂԾՈՍ

Թափեալ զընի արծուոյն փետուր .

Ինքն ի վիժին նըստեալ տըխուր՝

Ընդ սար եւ ձոր հողմաւար

Դիտէ զթեւոցն իւր աւար : —

Եւ ահա կողք իւր նորոգին .

Աշխոյժ կայտառ վառէ զհողին .

Եւ խոյանայ նորաթեւ

Յարեւ ի լոյս սուր թեթեւ : —

Ի մանկութեան տիոց կասուտ

Յեզր ի վիժիդ նըստեալ եւ դուդ ,

Ըզվերացեալ ամաց շար՝

Ո՛ւր գըտցես , ծէր սըրտահար : —

Բա՛րէ , ոչ եւս դառնան քեզ ամբ ,

Այլ նորոգին կեանք յամերամբ . —

Հողի յանխոնջն յեցեալ սէր՝

Յանմահութիւն թըռչի վեր :

1853

Ո՞ր առեկր զիս շատ արևոց առարցն առաջնոց ,
յորս Աստուած պահեկր զիս .

ՅՈՒԲ .

Էի եւ եմ . այլ ո՛հ , ոչ եւս որ ի սկըզբանն .
Ո՞ւր են աւուրքն իմ առաջին ,
Մինչ խայտայի յաղբերս ու ի մարդ ծաղկազան .
Արդ աչքս աղբիւրք ցօղեալք ի դէմս՝ որ թառամին .
Ո՞ւր են ծաղկունքն իմ առաջին :

Ո՞ր զինչ զըւարթ , զինչ գեղեցիկ քան մանկու թիւն .
Ո՞ւր են աւուրքն իմ առաջին .
Թախիծ եւ հոգ հըպեալ սըրտիս՝ հալէր իսկոյն .
Ընդ մըկանունս հըրճուանաց լոյզ գայր իմ հոգին .
Ո՞ւր մանկու թիւնն իմ առաջին :

Յարբունս հասեալ՝ ծանեայ զիս մարդ , զազգ սի .
Ո՞ւր են աւուրքն իմ առաջին , (րեցի .
Զի հընապանծ սիրով ստացայ սիրտ հայեցի ,
Եւ չէր յաղինս անփառունակ տոհմ իմ նախկին ,
Ո՞ւր հայրենիքն իմ առաջին :

Զի՛ գոհ զի՛ սէգ սիրտ՝ որ եզիտ բարեկամ սերտ .
Ո՞ւր են աւուրքն իմ առաջին .
Մըտերիմք յեցք՝ թ' երկիր գրդուի ճեմին նըպերտ .
Այլ նուաղի սիրտ ի զիւգակցէն տարաբաժին .
Ո՞ւր բարեկամքն իմ առաջին :

Չարդուն հասակ զարգանալեաց կանդնէր նեցուկ .

Ո՛ւր են աւուրքն իմ առաջին ,

Չի հովանեակ խնամոցս ի տիտ ամուսնի փափուկ .

Չըզգայր կեանք զիւր նըւաղէլն , յայլս հոսեալ զը .

Ո՛ւր սիրասնունդքն իմ առաջին : (գին)

Ժյրեալ են ժամք քարձեալ իմքն , ս'հ , բառնիմ եւ ես .

Ո՛ւր են աւուրքն իմ առաջին .

Հայլմ յայս կոյս եւ յայն , ու ահա լինիմ անտես : .

Դոյր սըրտի չեք սասա . . . Ո՛հ Աստուած , սրահեա՛ զհո .

Ո՞ր ես վերջին յոյս ու առաջին : (գին)

ՀԱՅԵՅԱՐՈՒԹԻ Ի ՇՈՒՇԱՆՆ

ՎԱՅՐԵՆԻ

Հողք ըզհոգեաւս հեղեալ բազումք՝ նեղէին զիս ,
Թողի զգադարս եւ անգադար էր եղկելիս .

Անցի 'նդ Թատերս , ընդ հրապարակս եւ տեսա .

Եւ ոչ գըտի հանգիստ սըրտիս : (բանս ,

Թողեալ ըզէնն ի դաշան ելի ես բացավայր ,

Ի շունչ հողմոյն գամ մի Թընդաց սիրտըս վեր վայր .

Այլ խորհըրդոցս հանդոյն դահճի զնովաւ խըռ .

Դէմք բընուԹեանն անհետանայր : (նեալ՝

Դանդաշելով իբր յանըզգայս հաս՝ ի հովիտ

Եւ ընդ ծառով միով նըստաց ես կորսափիտ .

Ժամք ոչ գիտեմ քանիք արդեօք անցին զինեւ .

ՅափշուԹեանս անդ վարանամիտ ,

Մինչեւ սաղարթ մի փրթութեալ ի հովանոյս,
 Հեզիկ սահեալ քերեաց զայտիւք տրխատեւոյս,
 Եւ ի խորին թմբրութենէ սթափեալ զոգիս
 Զաւս իմ դարձոյց յայս եւ յայն կոյս •
 Եւ տեսի՛ բունձ փոքրիկ գոգ տասըն քայլ հեռի
 Բարձրացողուն եւ խայտագեղ շուշան վայրի •
 Ըստ խաղ հողմոյն նա մերթ ցածնոյր մերթ ամ
 Եւ հարկանէր վառ ըզվառի : (բառնայր
 Խոհք իմ կասեալք՝ գրլխովին ակն եղէ ի նոյն,
 Զխորդ ասեմ անտես կայ տունկս այս գեղագոյն,
 Եւ ընդ խրոան խոտոց հընձեալ ի հնոց մասնի •
 Եւ յիշեցի զբան տերունւոյն :
 Բա՛րէ, թէ այսքան պերճ սլըճնէ զվայրին ծաղիկ՝
 Որ այսօր կայ, վաղիւ լինի բացընկեցիկ,
 Աստուած՝ որ զայն արար առնէ՞ ն՛ անտես ըզմարդ
 Յոր զիւրականն եհար կընիք : • • •
 Ո՛վ բողմահոգ մարդ անցաւորս յաւիտենի,
 Ե՛կ եւ հայեաց դամ մ՛ ի շուշանըն վայրենի
 Հաստիչ նորուն եւ քո առնէ քեզ մասնանիչ •
 Եւ ասի՛ արա՛ սպասասխանի :

ԱՐՏԱԼ ԱԾԻԿ

ՍԱՂԱԹ ՀԱՃԱԹԻՈՅՆ

Ի մենաւոր բըլրակի
 Կայր քաջուղէշ հաճարի ,
 Ի սիւգ հողմոց շէշտակի
 Արձակելով ձայն քնարի .
 Կայր իւր սաղարթ մի յառեալ
 Յոստոց բարձանց ընդ հովիտ ,
 Յարեգականն ոսկեփայլ
 Արձակելով ըղժըպիտ .
 Շուրջ ըղնովաւ խաղային
 Բազում ծառոց անկեալ զարդ ,
 Զերծուլ խաղալ ընդ նոսին
 Բաղձայր խարտեաշն այն սաղարթ :

ՀԱՃԱԹԻՆ

Ո՛ւր դու յոստոցըդ զանխուլ
 Յուզեալ ի յոյզ բազմադէմ՝
 Լուծեալ զհանդոյց՝ տարադէմ
 Սընհաս սաղարթ իմ խարխուլ :

ՍԱՂԱՐԹՅՆ

Յերկիր բաղդին անծանօթ
Տարուբերեալ էս գընամ,
Հեռացեալ դամ քան ըզգամ
Մինչդեռ կարծիմ լինեւ մօտ :

ՀԱՃԱՐԻՆ

Եւ էր սաղարթ իմ՝ ի զուր
Իբր յաշնանի սրգազգած
Հողմնակապուտ արտալած
Երթաս լինիս թաքթաբուր :

ՍԱՂԱՐԹՅՆ

Հողմնակոծեալ ծուփ ի ծուփ
Երթամ ուր իղձք զիս վարեն,
Եւ հեռաւոր ի վայրէն
Դառնամ հայիմ հուպ առ հուպ,

ՀԱՃԱՐԻՆ

Չիցէ տեսեալ քո զտերեւս
Ոստոց տըւեալ ըզհրաժեշտ,
Թափառ վարել կեանս անհեշտ
Անցողս անջերս անարեւս :

ՍԱՂԱՐԹՆ

Սակայն հեզիկն այն սուղոս
 Որ ի հովտին՝ շատ տերեւա
 Բարձեալ գրգուէ գիրդ ի Թեւս,
 Ի յայն եւ ես խառնիմ տող:

ՀԱՃՅՐԹՆ

Դիւր խաբուսիկ է հովտին •
 Են են անդ վարդք եւ շուշան,
 Այլ առ նոքօք որդք դաժան
 Եւ ձոր մահու առ նրմին:

ՍԱՂԱՐԹՆ

Յերբ կախ ըզքէն սեաւ տրխուր
 Տատանիցիմ տրրումասուդ •
 Մինչ այլք յերանդ պերճաշուք
 Ճախրեն ազատք յօդ մարուր:

ՀԱՃՅՐԹՆ

Ի վայրկենի դան ձմերուցք
 Արտալաճիկ տերեւոյդ,
 Եւ յառաջին երկոյդ
 Ըզքեզ պատեն բիւր մահուցք:

ՍՅՂՅՐԹՅ

Գոնեա երթամ, թող մի ժամ
 Ի ճեմ հովտին հեշտավայր,
 Ազա ի թեւ քո յօժար.....

ՀՅԾՅՐԻՆ

Դառնալ՝ չէ՛ հնար միւսանդամ :

Օդ հանդարտիկ ծաւալանայր լուսաթոյր,
 Պատէր զերկին կապուտագոյն վարագոյր.
 Զեփիւռք քաղցունք անցանէին հեզաշունչ
 Որպէս սրբաից ըղձաւորաց դաղտ մրմունջ.
 Մինչդեռ երիր թոյլ եւ տարաամ տատանմամբ
 Ի հաճարւոյն հատեալ սաղարթն եւ ընդ ամբ.
 Վերասլացաւ շէշտ ուղիղ նախ ընդ եթեր
 Զանմահութեան կարծեաց ծրծել լի մրթեր.
 Յեցեալ ի թեւս թեթեւս հողմոյ դոգաւոր
 Թռուցեալ գընայր հեշտից ի հեշտ նորանոր.
 Պարք օդաչուք ճախր առեալ յերգ դայլայլիկ
 Յայերս ի վեր հարկանէին ծափ քաղցրիկ,
 Առուաց ընդ նոյնս սիրակարկաջ համուձայն
 Ընդ սաղարթին սաղապաճեմք թրււցան.
 Եւ թեւք յարփւոյն ծոցոյ կարմիրք եւ քնքոյշ
 Զնովաւ ձրդեալ գրգռէին ջերմն եւ անոյշ,
 Յերանաւէս մինչեւ եհաս յայն հովտ
 Ուր փախրստեայք կային անկեալք տերեւք խլտ,

Ի հոյլ կահուղ հարսնամատանց առ խաղին
 Թերթից ի Թերթ մերթ հրճուաբար սահէին ,
 Մերթ ի պայծառ բիւրղին ի գիրկ հեշտընկալ
 Մակուկէին չիչսեալ յափանցն ի բաց կալ .
 Եւ ի հողմունս մերթ հանգուցեալ յեւեւէջ
 Ծածանէին զիրերօք յօդ լուսառէչ :
 Անդ ընդ նոսա խայտայր սաղարթ հաճարին ,
 Հալուէ , նարդոս , բրբու՛հարծէր զինքն յԱղին ,
 Ի ի մատնաչափ նրբբին գրրկացն ասպարէս՝
 ԶերանուԹեանց Թըւէր տանել բիւր հանդէս :
 Եւ ահա շող կաթէր վերուստ կիծ խարշափ ,
 Եւ ընդ ճապուկ խաղայր Թաղանթըս սարսափ .
 Զիւք Թուլացեալք խորշակահարք ի սրբոն
 Թըմբիր անկարծ ոչ անախորժ գայր նըմին : —
 Եւ մինչ քարշէր արեւ զարփիսն հեռագոյն ,
 Ի զովագին ընդոստ յարեաւ սօսափիւն .
 Այլ գեղն ի բաց կայր Թօթափեալ եւ կորով
 Շուրջ շարժէցաւ եւ չեկրն դք ի գորով .
 Յիւր ի դալուկն անձնիւր տասպատ ազազուն
 Եւ ամփոփեալք գային ի գիւ դալարուն .
 Ըզմըկանամբք լըճակին ոմըն զովայր
 Ոմն երկրամած պարզել անդամ չունէր կար ,
 Եւ խըմբովին կեղերջական ի շըշունջ
 Ի ստուերամած դնային ի ձոր հողմնաշունչ :
 Յոգւոց եհան եւ հաճարխոն ի սարսուռ .
 « Յիս Եւրէ , սեաւ ծմակին մի տաս զիս ի կուր՝
 » Տընկոց հովտիս չեմ ես ծընունդ դատասպարտ ,
 » Այլ հաճարոյն վեհի զերծեալ եմ սաղարթ :
 » Լուր ինձ հողմիկ ի սէր ըզբեղ չընչողին ,
 » Թէ խաղալիկ քեղ մասնեցայ դըլսովին ,

Թէ յոստ նախնին ոչ շնորհ՝ ինձ վերագարձ ,
 Թ՛ անշուշտ կորուստ մընայ ինձ յով եւ բերայց •
 Ա՛ն բարձ վարեա՛ զիս առ բընիկն իմ կանաչ ,
 Ըղգօս մաշկիս անդ տաց զյետիննս թառաջ •
 Գուցէ տեսեալ այլոց զայսքան զիմ աղէտ
 Մի դք բերցի խաւար շաւղիս իմ ընդ հետ ։
 Ընդ հովանեալ դաշար կողից եղբարցն իւր
 Սաղարթն անզուսպ կայր տարածեալ եւ խամուր •
 Նորեկ բողբոջ արձակեցան յոստոյն ծայր ,
 Այլ ընդ նոսին տեղի նրմա , ո՛հ , ոչ կայր :

Այս քեզ բաժին խաչալէք
 Ո՛վ քրիստոսեան դու մարտիկ ,
 Որ սուտ յուսով ըղձակերտ
 Ընդ սեաւ նեցուկդ հայիս խէթ ,
 Ընդ կենցաղոյս լայն շաւիղ
 Մըխիլ յանելն բաւիղ •
 Զոր դեռ կոխեալ՝ եւ զըջաս ,
 Ասեա դարձայց ի յիմ կայս
 Այլ ընդ խոտոր ճանապարհ
 Մոլեալ մաշիս յուսաաստ :

ԱՓ ՅԱՓՈՅ

ՅՈՐՍԻԿՆ ԻՄ ՎՐԻՊԵԱԼ

Խո՛ւն դէտ.ք՝ երկայնք ի զգացուած՝

Ի վայրկենի 'նդ իս անցին.

Ճար եւ ճարակ չըմբնաց

Իմաստասէր իմ անձին.

Ձողենըկար արդ փետուրս

Առեալ մըխեմ սիրտ ի խորս,

Ձարի՛նս մեռեալ տալ ի դուրս՝

Ձոր եդ որսիկն իմ անորս:

Մինչ նըստեալ կայ՝ ի դահլիճ՝

Ի խորհրդոց սահեալ լիճ,

Եւ Կամենայց ղինեւ շուրջ

Պարն յաւերցր իմաստ լուրջ.

Եւ ես յածեալ խորասոյղ

Մինչ ըզմտաց քամեալ հոյզ

Թուէի հանել ընդ Որմոս

Ձինչ մարգարիտ ցողահոս,

Սիրտ իմ թընդաց... յանկասկած

Ընդ լուսամտան ի կողաց

Ձայնիկ լըւայ սըրտասէր՝

Ծաւի՛նս ծաւի՛նս՝ ինձ ասէր:

Ըզմուսայից թողեալ դաս

Եւ թօթափեալ ղԱթենաս

Յարեայ ճապուկ յոսն ի մասն,

Ըզու՛նչ գէլեալ անընդհատ

Ի սրբապարտօք յիմ ի լանջ,
 Լեալ ակն ողջոյն եւ ականջ .
 Վարագուրին ընդ բացուած
 Տեսի զքեզ, տես անմուաց . . .
 Պատըշգամացն անդ ի ծայր
 Կացեալ ծաւիւնս որոճայր
 Ամենեւին նազենիկ
 Ի գոյն ւ ի տես՝ զեղձանիկ .
 Վազէր կոչկօք ծիրանի
 Բրբուկն ընդ նիւս ծածանի ,
 Յարփւոյն ի շող ի ճաճանջ
 Էր ոսկեգոյն պատմուճան ,
 Եւ Թիկնամէջս ի խոնարհ
 Շուշանտփայլ ճանապարհ
 Ճերմակ փետրոց իջանէր ,
 Մինչ ի գաւակ ժամանէր .
 Իսկ զոյգ բրբերն ոսնիաղ
 Քան զարեւակն աննիաղ՝
 Որ տային փայլ ըզփայլն՝
 Տրաշից ինձ վեհ հայելի ,
 Ձի՛նչ վրձիտք զն՝ փոքրրկունք
 Թըխատեսիլ իմն աստղունք :
 Ձի՛նչ յիս բաղձումնն մընայր
 Բայց վայելէլ յայն յամայր .
 ԵրջանիուԹեան անձնատուր
 Բազումք դարձան լոկ Թափուր ,
 Թերեւս մըլԹար մօտաղուտ
 Ձըգէ զբաղդիւ մէկ բալուտ . . .
 Այլ խորհրդոց զննչ ինձ պէս ,
 Հաւորս եղէ , չեմ պրէւ :

Հանապ ի գործ լեր աշխոյժ
 Մատիր յուշիկ եւ ըզգոյշ,
 Թեթեւ ընդ սեամսնն սահեալ՝
 Ձի կայ հեռի լոկ մի քայլ...
 Կայց կայց կարճեան զձեռս ի քեզ...
 Մի խրանուցուս հաւիկ հեզ.
 Տես զի դողով առ քեզ դամ
 Վըստահ լեր յիս, չեմ չարկամ.
 Ահա քան զաչքդ երերուն
 Սիրտ իմ ի քեզ՝ հաւ սիրուն.
 Ե՛կ դեղձանիկ եկ յիմ ձեռս...
 Բա՛րէ, եթող զայն դերեւս.
 Եթող ըզձեռս եւ թըռեաւ
 Այլ չասէր կայց դու բարեաւ.
 Ես՝ հուպ մատչել մանաւանդ
 Թըւէր՝ թեւեալ աստ եւ անդ.
 Մինչ ընդ քըւաւ խոյակին
 Իջեալ նըստէր լուսամտին,
 Ընդ երկփեղկի փըղոսկրեայն
 Ձծաւիւնն հընչէր լըռելեայն,
 Պարանոցիկըն չըքնաղ
 Ուռուցեալ յերգ եւ ծիծաղ,
 Եւ հանդարտիկ անմըռունչ
 Կայր դադարէր ի մի քունջ:
 Արդ ասեմ՝ ժամ է, ըզգուշ.
 Թաշկինակաւս իմ հանգուշ
 Մատչիմ մատամբ ի յերեր.
 Յո՛յս, մի յամօթ զիս ասներ.
 Ո՛հ, թ՛ էր, ոք զիս անդ դիտել՝
 Ձաշխարհ ի վարմն ոսկեթել

Ասէր՝ դ՛ այժմիկ ըմբռնէ .
 Ա յնքան տենչ՝ կիրթ զայր առնէ :
 Իսկ աստ . . . աւանդ զիս աւանդ .
 Յոյս իմ մընաց անսրւաղ .
 Ըզվարմն ածի քաջ ճարտար
 Խիղճ՝ իմ թողու զի արդար .
 Բայց անգգ հաւուց թեւածիքք
 Որսորդախաբք չարճըճէք .
 Քան զամէն ջանս իմ հարուստ
 Ժիր նա գըտաւ ի փախուստ .
 Ես մինչ յափիկս որոնեմ ,
 Նա զգագաթամբս օղածեմ
 Տայ թեւ թեթեւ ի թըռիչ
 Եւ հեղ ծաւիւն մ՛ի քըրքիջ .
 Եւ զյոյս իմ յ՛օդ սին հանել ,
 Անկաւ ի բանտ սիրտս անել :
 Պատըշգամին առ ի շեղ
 Արդ խոտորեալ ի գեղգեղ ,
 Ազատ ըզնոյն գեղգեղէ ,
 Մինչ ես որսոյս որս եղէ .
 Զհետ յիմարեալ հաշմ որսորդ
 Հատկըլեալ շունչ ի սոսորդ
 Վարկսարազի շուրջ բոլոր
 Շըրջիմ աղէքս ի յոլոր .
 Խընդրեմ ըղձայնն այն ի զուր
 Զոսկեղինիկն ըզփեատուր :
 Ծաւիւն ծաւիւն գըռընչէ
 Յունկն իմ , այլ յոյս ոչ հընչէ .
 Թաշկինակաւ սուտ ցանցոյս
 Կալեալ զաչոյս արտասուս

Նրա տխր ի վայր գլխակոր
 Իբրու զբեկեալ մի սափոր
 Յայն ինչ հանել ջուր անձուկ՝
 Որ ոչ բուժեաց ըզսասուբ :

Ա յլ՝ մինչ ցաւոցս եմ գերի,
 Տակաւին սիրտ իմ բերի
 Ուր բերան իղձքս անժաման,
 Կարծեմ [Թէ դայ [Թըռչունն այն,
 Թէ տայ ճրնձուղ ճըռուողիւն
 Ասեմ, Ահա իւր ծաւիւն .
 Ճանձիկ բրզգէ յասակին,
 Ասեմ, Չայնիկ դեղձանկին .
 Յառնեմ ընդոստ՝ եւ ընդ օդ
 Թըռչնոյն լինիմ հետազօտ,
 Մինչեւ յա[թո՞ւ՝ զոր լըքի
 Դառնամ անյոյս ի սրգի :

Ի դիւր սրբօտիս աղեկէզ
 Ու ի դեղ ըղձից կանխատես՝
 Յեղի զգէս սեաւ սոփեստիս
 Ձեզ՝ որ լըսէքրդ խրատիս .
 Մի՛ ձրգէք ձեան ի [Թըռչուն
 Որ ի յերկինս գիտէ զչուն .
 Մի յամենայն ի վայելս
 Չըկտել կամ մօտ մատչել եւս .
 Եւ մի՛ ստ ըղձից հակամէտ
 Յանձեռնընհասն իշխել դէտ,
 Յանակընկալ բարւոյ տենչ
 Չըւառ գործին շատք ի ձէնջ :
 Դեղ դեղձանկիս ձեզ ի փորձ,
 Մի՛ ոք կըրկնէ զիմբս գործ :

Ի ՍԷՐՆ ԱՐՏԱԴՐԱԽՏԻԿ

Ո՛հ, ես ըզ՝մէ՞ թողի զփանդեան իմ եղեմախօս
Յանմահից սիրոյ՝

ի մահացուաց թարթափել կիրս․

Յողեջերս՝ խանդից

ի ցըրաադինս արտասուաց լիճ․

Ի հրալար ծըղինն յայն

վազեր սերն եւ հրճուենայր․

Յայս սեւակ աղիս

վայք վազվազեն եւ տիրենան ։

Աւաղ ժամուն յոր անմահութիւն ելիք ըզմարդ․

Աւաղ, ելիք ընդ նըմին եւ սէր զազգ հողածին՝

ելիք ժըպիտ ըզդէմս,

բերկրութիւն ծորեաց յաջաց․

Ոչ եւս յեղեմ դրախտ փափկութեան,

ոչ եւս ծառ կենաց․

Քերովքն հրատուեր

բոցածօճակ շըրջածութեամբ

Մերժէ՛ տարադիր,

խաղառ մերժէ՛ ճեան Ադամոյ ։

Ա՛հ, ընդ չարուսոյց

ճաշակ խարոյն հրաժարական

Սերմին մահառիթ

ապականեաց զազգն անմահից․

Անթ դաղկահար խորի վիշապին զըժոխաշունչ

Եօթնագալար պորտապլտոյա
 մըմկեալ ըզմարմին
 Էջ քըստմնասարսուռ
 կալաւ զօթեակն անմեղութեան .
 Իբր ըզբէհեզ աստուածահիւս
 զերծեալ ի մարմնոյ՝
 Ձոր մաշկըն մեռեալ պատէր
 պատանրս մահագոյժ ,
 Բըռնազբօսեալ էրթայր
 եւ ողբայր ամբիծըն շնորհ :
 Ըզհետ փափկաճեմ
 գարշապարացն անմեղութեան
 Եւ զուգակիցն իւր սէր անարատ
 եւ եւ փախեաւ .
 Փախեաւ թըռեաւ թափուր թողեալ
 ըզսիրտքն անմաքուր՝
 Ձոր խարդաւանողն ունէր
 հրապոյր ընդվայրազօտ .
 Եւ գիտութեան բարւոյ՝
 չարին փոխանակէր խիղճ :
 Ընդ փախուստ սիրոյն սարսեաց Ազամ ,
 սարսեաց Եւս ,
 Փոքըր միւս եւս եւ հոգիքն
 յանձանց ուրանային
 Եւ անմըխիթարն , անլոյսն ,
 անյոյսն հասանէր մահ :
 Ո՛հ ձեռն ըզգիմօք ընդ գիրկ մըտին
 կուուփս հանելով .
 Վիսակոյր աջօք ողորմն ի վեր ակնարկեցին ,
 Վողկողեցան կըկոցեցան անկան կըթուցեալք .

Յարեան՝ եւ յանձանց
 արտափախչել խնդրէին զուր :
 Յոստ ծառոյն կենաց՝
 անդ կային սէր ու անմեղուծիւն .
 Հայեցան ըղձիւք եւ հալեցան
 սիրաք յաչս իւրեանց .
 Կրդկաթէին , կաթոգնէին , դիմեալք գըլթէին ,
 Եւ քերովքն հրաճօճ՝
 չըտայր յուսոյն համարձակել :
 Յըրտասարսուռք կորաքամակք
 ձեռն ի ձեռն հարեալ
 Լըռինք իբր ըստուերք ելին զանխուլ
 ընդ դուռն Ադին .
 Հայեցան միւս անգամ ,
 ըզհուսկ նուազն հայեցան , ա՛հ .
 Ոչ եւս զուարթնեակ կենսատուին
 բարամամք հով ածելով ,
 Ոչ եւս սերուբըն սիրաձայն
 ի փանդեռն հրաթել ,
 Այլ քերովքն հրաճօճ՝
 սուսերաձիգ շառափնաթափ .
 Եւ սըրտաբեկեալ ընկըրկեցաւ
 յոյս մինչ իսպառ :

Նըստան լալով յովիտ սըգոյ . անդ ծընան ըզմարդ
 Աչք ընդ արեւէլս ըզհետաջինջ Ադէն շաւղաց ,
 Ուր անմեղուծիւն եւ սէր
 կային յանմահուծեան :
 Զըրկեալ յերեցուն մարդ
 ի հովաի ծնաւ սըրտմուծեան .

Եւ այն ինչ լեալ անձնագէտ՝
 ըզգայ զթերին սիրոյ,
 Տապեալ տոչորի յիւրում բնութեան,
 խնդրէ զոր չիք.
 Աչք ընդ արեւելս կայ
 հետահան գրրգարանին,
 Եւ քերովբն հրաճօճ՝
 սուսերաձիգ շառափնաթափ
 Անհամարձակ առնէ մինչ ի սպառ
 ըզլաւելն այն :
 Յայնժամ լայ զգօն զերանազուրկ
 բաղդ անդարձական,
 հեկեկեալ հեծէ հոգին յովտիս հառաջանաց .
 Իսկ անմիտ՝ փարի զըզգալեօք,
 սէր զայն վարկուցեալ .
 Չըւառակա՞ն, եւ հիմ՝ փորձով
 ոչ ըզգաստացաւ :
 Սէր . էհէ, սէր անց ըզմեօք .
 ըզձայնն ունիմք ոչ զիսկ .
 Անաղտ գրգուանս, սուրբ առագաստ՝
 ի դրախտն եւեթ էր :
 Ո՛վ արտադրախտիկ ծընունդք,
 ոյց ծաղը՝ արտասուք են,
 Ագարակք՝ փըշուտ,
 հանգիստ գլխոյ՝ քրրտնալաստակ,
 Մահկանացո՛ւք մահկանացուի վիճակեալ սիրոյ,
 Մի՛ տայք գերի զանձինս լըծոյդ .
 դառն է ստըրկութիւն .
 Այլ լե՛ք լըծագիրք սանձահարեալ
 զառձեւն ըզսէրդ :

Մեղրաբերան է դա ձեզ
բաժակ դառնայատակ .
Առ ի զմարդկութեան սերել ըզկեանս
տըւեալ ի դեղ,
Առ ումս առ ճաշակ եւեթ,
որդեակք , յայդըմ սիրոյ :
Ո՛չ է դա վայելս , քանզի եւ չէ՛ անմահութիւն .
Այլ ձեր ըսկիղքն է յանմահից ,
յանմահն ի սիրոյ .
Եւ երկոքեան կան մընան
ձեզ սէր ու անմահութիւն
Յանձառ գրողարանն
ի բնադաւառն ի հրեշտակաց :
Անմահութեան ոչ որ հասցէ՛
չեւ ընդ մահ անցեալ ,
Ի՛նչ առ իսկըն սէր՝
Թէ զայս տըրփմամբս ի բաց չվաղէ :
Այլ տակաւին խորհուրդ մեծ
պաշտի յամուսնութեան ,
Մի որ անըզոյշ արատ դիցէ սկըզբնատըսին :
Իմաստնոց է զսէր վարել ,
յիմարք վարին սիրով .
Մին բորբոքեալ վասնի նովին ,
Միւսն անծախս վառի :

ՄԱՐՄԻՆ ԵՒ ՀՈԳԻ

Մարմին դանդաղ միայն փոյթ
 Փարի զերկրաւ հողանիւթ .
 Հոգի աննիւթ եւ անժոյժ
 Ի վեր մարդէ զթեւս անոյժ .
 Ներկայքս ածեն ըզբաղանս ,
 Աստ անդ ձրգեն իղձք յունայնս .
 Յափըշտակեն յիշատակք ,
 Գերի վարեն սիրունակք .
 Եւ տրամուծեան խէթ հասլճեպ
 Տագնապս ածէ ստէպ ըստէպ :
 Դիմէ յաղբերս սիրտ ծարաւ ,
 Տոչորի հուր ըղնովաւ .
 Յօժարուծիւնք յարաժամ
 Ձրգեն յովպէտ եւ յուկամ :
 Տիրական ձայնն ի վերուստ
 Հընչէ մերթ մօտ մերթ հեռուստ .
 Իսկ իմ ափշեալ ընդ ձայնն այն
 Եւ ընդ երկրիս ամբօխ լայն ,
 Մինչ աչս յերկուս ածեմ կոյս՝
 Ընդ ո՞ր առնել զհետս հոգւոյս ,
 Հանապազգնացն ամանակ
 Անդուլ առնէ շրկօթակ .
 Գամ քան ըզգամ մերձի մահ ,
 Սասանի սիրտ ահ ընդ ահ .

Եւ երեւին յաւիտեանց
 Ափունք ու անդունդք անթափանց :
 Եւ հիացեալ մինչ կամ դեռ
 Գողով յանձին տարուբեր ,
 Այլագունին մարմնոյս տիպք
 Եւ նըլաղին տեսոյս բիբք •
 Եւ ի կարծել միշտ նոյն զիս ,
 Բնութիւն, յինէն դու թաքչիս : ...

Փոքրը միւս փոքրը միւս եւս

Եւ ապա զինչ եղէց ես ...

Զինչ եղիցի յեա փոքու

Աստուած , սրբախա այս փոքու :

Խ Ո Հ Ո Ի Ն Ի

ՅԱՆԿ

Բարձր է- ժամանակ	91
Ան ժամանակ	92
Կենսազար ժամանակ	93
Կրօնք է- ժամանակ	94
Խաւարձան	96
Արձան յեղբ աշխարհածովան	97
Կեանք	98
Աշխարհ անկայուն	99
Ծով կենցաղայն	100
Յոյն	102
Ան որս շարեն զաշխարհ	103
Անցեալն	104
Ներկայն	105
Ապագայն	107
Տանդերձեալքն	108
Ծանր բե արքայ	109
Ամանորաբեր ողջոյնք	110
Ան ամանորն	111
Ի քարեփնայն	113
Անցեալն ամ	115
Ի քարեկնայն	116
Անցանէ է- այդ	117
Ես յ՞ հանգեայդ	118

Չափանիւն	120
Խաղաղութեան խոյն հնչեացի	121
Սիրք սուրբ եւ հոգի խոնարհ	126
Խոնարհութիւն	132
Արի արանց	133
Ճանապարհ երկրասարդի	136
Աստուծոյ քարոզութիւն	140
— Բանագէտ ցրտաբան	—
— Երգիչ Չար	—
— Կատարիչ	—
— Պճնասէր իշխողութիւն	141
— Լիպի Ժողովուրդ	—
— Աղաղակ Բարձրացում	—
Անօրի տրտիւն	142
Ի Յետեւ եւ յարեւ	146
Նորագեացի սրբաբան արժանաց ճանկութիւն	148
Ո՞ր աստուծոյ զիս ըստ աստուծոյ ամսոցն աստուծոց	149
Հայեցարժէքի շնորհակցում շնորհակցում	150
Արքայազնի սաղարթ հաճարան	152
Արի յատուց յարմարիւն իմ շնորհակցում	158
Ի սերն արքայազնի	163
Մարտի եւ հոգի	168

130
131
132
133
134
135
136
137
138
139
140
141
142
143
144
145
146
147
148
149
150
151
152
153
154
155
156

A B C D E F



ԵՐԳԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԱՅ

Ա

ԱՌ ԶԵՓԻԻՌ

ԸՆԴ ԸՆԴՈՒԶԵՆԵՍԻ

Ի մամուարմատ ընկուզենույս դալարակ
Յախորժալուր տերեւաշարժ հովանիս,
Երգել կամիմ Ի տարփալիս ագարակ •
Զըւարժ զեփիււ, կարկառ Ի քնար նուրբ ծղկա •
Ի զուարճ թըռիչ եւ Ի հծծիւն հեշտաբեր
Անցեալ ընդ ծալս ծիրանազգեստ օդեռանդ՝
Զովացո՞ զտապ արեգականս ոսկեհեր •
Յօղատարափ թեւօք փարեալ Ի մարմանդ :
Ի բացօթեայ՝ նդ հաստչին աչօք համասփիւ
Զհանգրբուանաց երգել Ի քնար շինական ;
Մուսա կարդամ ըզքեզ միայն ինձ զեփիււ,
Որ զովաշունչ՝ եւ վառես իսանդ բոցահան :

ԶԵՓԻԻՌՆ ԱՅԳՈՒՆ

Լուսոյ սուրհանդակ
 Տըւընջեան պըսակ
 Ի թեւս սըրավար
 Սուրայ սիրաբար
 Զեփիւռ զըւարթուն
 Կարապետն այգուն .

Փետուրս աղանեաց
 Ճանճկէն թեւ թիթղանց
 Կարծեմ էս թըրթուալ
 Յանկարծ ոստուցեալ
 Ըզքեզ զով զըւարթուն
 Կարապետ այգուն :

Աւետիս ձեզ՝ վարդ ,
 Կարկաջ երփնազարդ ,
 Մեղու ոսկեթեւ .

Ահա գայ թեթեւ
 Զեփիւռ զըւարթուն
 Մարդաց կենսատուն :

Անկարօտդ ի շունչ
 Ընկալ էւ զմըրմունջ
 Սրտից սիրաբուխ
 Ի պահուց կանուխ ,
 Եւ ծաւալեա ափիւռ
 Ուր յածիս՝ զեփիւռ :

Ելցեն բոլոր ըստ քէն ,
 Իղձք ըստ նոցանէն .
 Ու արդեօք սիրելեաց
 Ի թուփ վարդենեաց
 Հանդիպեալ նոցին ,
 Ըղբէն գոհացին :

Գ

ԱՐՈՒՍԵԱԿ

Ոչ կապոյտ , ոչ սեաւ ու ոչ սպիտակ ,
 Այլ արդ երկինքս են մանուշակ .
 Ոչ արեւ , ոչ աստղ ոչ լուսնակ ,
 Այլ լուսաբեր մի անուշակ .

Նուաղին աստեղք , նուաղի լուսին ,
 Տիւ պատրաստէ զղարզն երփնաղցեստ .
 Եւ արուսեակն ի դեղ կուսին
 Գողանայ զբիքս յառեալ համեստ :

Անխոնջ՝ նրման յուսոյ սպասեակ՝
 Յեա գիշերոյն կալոյ ի սնարս ,
 Զխարդ չքքեղ , ո՛վ արօսեակ
 Նաղիս յայդուն յանամոյ կամարս :

Ի յեօին սահ խաղաղութեան
 Ես միայնակ դիտեմ ըզքեզ .
 Յիս դու վերուստ հայիս միայն ,
 Խաղայ զեփիւոն ընդ իս եւ քեզ :

Արդեօք սրտիս իմ մենասպաս
 Վացցէ որ դէտ լուռ մենաւոր . . .
 Այլ զինչ . եւ դու նուազեալ գընաս . . .
 Միթէ նուազի՞ եւ սիրտ հրաւոր :

Դ

ԵԼՔ ԱՐԵՒՈՒ

Ոսկեճամուկ դորգք ագեմնեան
 Ջրզին ի սեամ Տիտանին ,
 Ճօճուն կամարքն արեւելեան
 Փողփողենէջ տատանին .

Գողանայ մէջն ի լոյս պայծառ .
 Նուրբ շամանդաղք երերուն
 Առէչ առէչ շուրջ առնուն պար . . .
 Աւազիկ ելք արեւուն :

Եւ ի գոգոյն ի կենդրոնի
 Փայլ արձակի դերալոյս . . .
 Ծագեաց արեւ գոյն նըռնենի ,
 Երեւեցան զէմքըն կոյս :

Բողորի ջահ շեկահարմիր
 Ելեալ ի գիրա երկնն թաց,
 Բըխէ ջերմիկ ըզբոցոյն ծիր
 Պատրոյգ նորին միշտ անանց .

Իբրեւ հրնկէց շուրթն լերանց
 Գըլուխ բըլոյն գուն՝ ի հուր .
 Կողբ ծաղկածինք առնուն ըղխանձ
 Ըզլոյսն արբեալ կենսատուր :

Թեթեւ յամպոց դէմս հանդիպոյ
 Յուպք ու աղեղունք ծիրանի
 Խըտածաւալ դան մի՛ սո միոյ .
 Նախկին ըստուեր ծընանի :

Խաչապըսակ աշտարակին
 Փայլէ գընտակ վառ ի վառ,
 Բաժակ ծաղկանց ըզցօղ նըրբին
 Քամէ ի շունչ զովարար :

Սիրտ ի ծոցի լեալ յայլ յայլէ
 Զերանգա յինքեան նըկարէ,
 Եւ որքան յեւ արփին յամէ
 Ինքն ըզհրճուանս յերկարէ :

Ե

Ա Ռ Ա Ի Օ Տ

Չեռն ի ծնօտի յեց ի կամար
 'Դ որով զեռայ հեղեղ սրավար,
 Կամ ի կողից դաւարազգեստ
 Ուստի առուաց իջանէ վէտ,
 Լայնածաւալ հովիտ ու ի դաշտ
 Կամ յանտառաց նըսեմասպատ՝
 Դիտել զեմբող քաղցր է յայգուն
 Ըղլուսադեղ ակն արեւուն .
 Մինչդեռ հողմոյն առեալ շրջան
 Մարգարտաշար տեղով ծաղկան
 Որ ի թերթից խընկացողիկ
 Արբուցանէ զմարգա հանդարտիկ .
 Մինչ ընդ հոտոց քաղցրաբուրեան
 Եւ զարտասուս գիշերական
 Փոխանակէ պերճ դարեւանդ .
 Ընդ շողս արփւոյն տեղեալ ի յանդ :
 Ծաղկունք դատերք առաւօտու
 Մըշտազըւարձք՝ յայգուն պահու
 Խընդասարտար շրջըւրջէն բիբ
 Յաւերժհարսանց պրճնեալք ի տխր .
 Լայնեն ըզգոգ յերփնէրանդ ծիր ,
 Ուղղեալ բաժակս հիւբէլեանց ժիր .
 Որոց բըզղեալ ի թեւ թափանց ,
 Յոսկետըտուն ծայրս եւ թիկանց

Ըղնեկտարին ձուլեալ ծրրար
 Քաղցրիկ բեռամբն յուլիղ ի շար՝
 Ի վեցարդեան ամբարանոց
 Տանին կուտեն ղերկն իմաստնոց :
 Յահուր սահեալ զալեօք գետոյն
 Ի դիւր սակաւ խոնջեալ թեւոյն՝
 Ծիղ ի բերան յերդն հիւրատուն
 Պարզէ ծիծառն ըզլայն տըտուն •
 Յոստ մի ցամաք կաղամախոյն
 Ուսով յեռեալ սամուրագոյն՝
 Կարմրագրլետակ փոքրիկ թըռչուն
 Կոչէ զընկերն ի դէտ սիրուն :
 Նորափետուր նըրբակըտուց
 Բաժանեն ձագք ըզմարցրն բուծ •
 Եւ ի ծառոց ամբարձաձիգ
 Զորոց գիտակ կոծեն մըրրիկք ,
 Նըւագածուաց սլար քաղցրաշունչ
 Ողջունէ զլոյս եւ զծաղկանց փունջ :
 Յերկատամնեայ ծընօտ մաքին
 Զսլարարտ սէզն ի տուարածին՝
 Կաթին փոխեալ քաղցր յօշարակ
 Պըտկամբն անոյշ դիէ զգառնեակ •
 Բեռնաւորեալ յերկաթ խեթկիչ
 Թեթեւ ոտամբ յազգու զըռինչ
 Յըցուեալ զականջս երկայն եւ սուր
 Անակնածու գոչէ սարսուռ :
 Եզըն դանդաղ զուլ խըստերախ
 Սովոր լըծոյ տայ անխարդախ •
 Եւ երանէ մարդ ի վառտակ
 Զաւուրն հայիկ հնարել ի յագ ,

Բզճին ցամանց Տեառն վրձիւ

Զոր նախահօրն էած ոճիր,

Փոխեալ ի պարտը զիւրասար

Զի եւ սաստ Տեառն է բարերար :

Զ

Ա Ռ Ա Ի Օ Տ

Լըռէ նոտոս ի շառաչող շրնամանէն,
 Մայրիք հնացեալք թառանջ տրկար արձակէն,
 Մարտիկք անդոյք ի կասուտակ խորանին
 Գիշեր աղօտ եւ արշալուրջք 'դհարկանին .
 Բեհեղ օթոց յամսլըս մաքուրս անկանի
 Եւ արեւեք ածեն ըզքօղ ծիրանի .
 Հրնչէ բացուտ յաշտարակէն շողազգեաց
 Ողջունաբեր տիրամօր ձայնն աւետեաց .
 Եւ ցոլք խարտեալք հատանին յեւ արեւուն
 Ի քրքմագոյն լերինս ու ի մարդ պաղսպջուն ,
 Մինչ բոյսք խոնաւք գըլուխս ի վեր տատանեալ
 Պընդեն զանդամս ի նորագուարձն աւուր փայլ .
 Ծիր մարմանդից ու արտեւանանց ծաղկերանդ
 Քաղցրածաւալ բուրէ հոտոց ըղձամբակ ,
 Եւ քաղցրութեանց մայր ծաղկաքաղ մեղու թիր
 Բուրանոցացն ի սրահ ձեմի մրտադիր .
 Արտոյան անտուտ ի դալարիս յելեւէջ
 Ողջոյն ծիծուան տայ մրտերմի հիւրոյն դեղջ :

Հովուականին թափեալ ըզքուն անուշակ
 Աւաջնորդէ խաչին լերանց ի քամակ ,
 Յորոց անկեալ ի ձորս առուք վըտարակք ,
 Կազմեն ի դիւրս մանուածաւալ ջինջ վըտակ ,
 Գան լուծանին սպիտակափառ ի փրփուր
 Ընդ խորշխորշեայ անիւս՝ հոսողըս զալիւր :
 Ո՛վ քանի՛ քաղցր առաւօտին ժամ հանդարտ
 Յորում բնութիւն առեալ զանձամբ նորոգ զարդ ,
 Ըզհեզութեան եւ ըզցեղոյ սուրբ պատկերս
 Ազդէ ի սիրտ եւ ծաւալէ՝ նգ տիեզերս :
 Յեղանակին յառուգութիւն ծեր տարերք ,
 Եւ զլուծեալ սիրտըս պընդեն նոր քաջալէրք -
 Ամաչէ մարդ ի տես հաստչին բարութեանց՝
 Ըզվաստափօք նորոյ աւուրն առնել զանց :

1830

է

Մ Ի Զ Օ Ր Է

Հրակայն տըւընջեան

Յազաան յասպարէս

Շողեալ ըզվահան

Յընթացիցն ի կէս ,

Ընծայէ անոյշ

Ձբազմոց ըստուերին

Ի պրակըս քընքոյշ ,

Եւ ի ծմակ լերին .

Յերես քրանաթոր
 Ածեալ ըզդաստակ
 Վաստակողն յարօր
 Հայի յիւր տընակ .
 Ի շունչ ուռուցիկ
 Հովիւն ի սարէ
 Յեմակ խաղաղիկ
 Ըզհօտ իւր վարէ .
 Ըզկաթն եւ փոխինդ
 Յանսլաճոյճ սեղան
 Առեալ կըշտապինդ
 Առ աղբերական ,
 Յոստոց շառաչուկ
 Ի լուռ անտառակ
 Մըտանէ ի քուն
 Յանդէոց սլառակ :
 Երկիր ասթակէզ
 Ի ծարաւ դաշտաց
 Ամպոց մըրըրադէզ
 Մաղթէ հոսանաց :
 Երբ հարցի սլասուք
 Հայեկան ծոցին՝
 Ի ճէմն յարիցուք
 Յաստղափայլ սիզին .
 Ուր կացեալ յայթիւ
 Յուսնիս ճապուկ
 Հունչք կոկորդալիր
 Մեղմէն ըզաաղտուկ :

Լ
Ս. Ր Ե Ի Մ Ո Ւ Տ Ք

Հնայեալ լերանց տիպք ուրուական
 Սաղապաճեմ ի դաշտս անկան ,
 Ընդ որ առուք արշաւասոյր
 Փայլեն փաղփունք եւ թրխաթոյր :
 Չափեալ զերկին հրսկայն պայծառ
 Ձուսկի չափուն ամփոփէ զծայր ,
 Ըզկատարօք կաղնեաց մըուայլ
 Ճեմեցուցեալ զյետին իւր փայլ ,
 Անտուստ դիտեալ գալ էրկեղուկ
 Ձիշխան մըթոյն զիմօք դալուկ ,
 Ընդ գաղաթունս սահի խոնարհ
 Յարեւմըտից նըսեմ կուսար :
 Ձըրոյն կուտակք եւ բարձք երկնի
 Ի մի ձուլին ծով ծիրանի :

Ձիարդ սլ Տէր՝ մուտք արեւուն
 Ածէ սքանչանս եւ տիրութիւն ,
 Մինչ մերկանայ մի առ մի զփայլ
 Որովք նազէր պերճ յօրացեալ ,
 Եւ շառագնեալ ծագմանն ի տիպ ,
 Ի շողն յետին՝ ճըմլէ զիմ բիբ : ...

Իսկ եւ արփուոյն խմ անկերոյ
 Յորժամ համբաւ կարճի յուշոյ ,
 Տիպ իշխանի խաւար պահուն ,
 Ո՞ զարթուսցէ զլիշատակ խուն :

Թ

Լ ՈՒՍԻՆ

Բըլուրք փթըթեալք, ամպածըրար դագաթունք,
Սինք դալարիք, եւ անմահին եւ գեղջ տունք,
Դաշտ եւ հովիտ եւ ստուերամած կայարան
Խոխոջ առուաց, սոխակն յոստոց բազմարան,
Խընդրեն ըզլուսին

Լապտեր գիշերին :

Ժայռք անդեղեայք, ծործորք, նոճիք երկնաճեմք
Լիճք անկենդանք, շարք պուրակաց դէմընդդէմք,
Ընդ գընայուն անաստախն անեղբր
Եւ ընդ կապոյտ գընդիցն հրոսակ մըշտերեր՝

Օրհնեն ըզլուսին

Գոհար գիշերին :

Ընդ ձիւնալեառն անցորդին հետք թաքթաքուր,
Ծովահայեաց հիւլ, ձըկնորսին սահուն կուր
Աչք տըքնասէր որդեկորոյս ծընողաց,
Միտք իմաստնոց՝ խուզակք բնութե ու եթերաց՝

Գովեն ըզլուսին

Ըզքիբ գիշերին :

Պըսակ մըթոյն ըզքեզ արփի՛ ուղփաճեմ
Ըզքեզ սիրեմ եւ ես գըշխոյ եռադէմ.
Որ յաստեղջ բոյլս ըսպայագունդ զօրապետ
Եւ յօրիորդս ես թագունհի լուսաղպետ,

Չըքնաղըդ լուսին

Պարծանք գիշերին :

Մերթ եւ մեկնակ ընդ ուլկիանն օգաւոր
 Յանշարժ կոհակս ի տիպ նաւու գողաւոր՝
 Աւ նաւակայս՝ ուր ի մեր գունտ չեք նըշմար՝
 Յուղղեակ թաքուն ծովաջրէս անվրթար
 Պայծառդ լուսին
 Ուղղեակ գիշերին :

Ո՛հ, թէ ելցես դու ի ծովէ յերեկոյն ,
 Լեւնակուտակ թէ յանտառաց արջնագոյն ,
 Ի ծաւալէլ հանուրց ըզգէս ոսկէհեր
 Մի՛ զխ՛ լուսանցս ի ճաճանչից քոց զրկեր ,
 Աննրման լուսին
 Հոգի՛ գիշերին :

Այլ մի՛ եւ զվայրն ինձ անմոռաց մոռանաս .
 Որոյ բնակչաց չհարու արեւն այլ լսասա . . .
 Ե՛րթ ի տասարմա՝ ուր սիրավար բերի սիրա
 Դողալ բախիլ վերայ սրտից անխըլիտ .
 Եւ անդր երթ լուսին
 Փարոն գամբանին :

յ

Ա Ս Տ Ե Ղ Ք

Ատեղանիչ ոսկեճամուկ
 Վըսեմ ինձ երկին ,
 Քան բոցաթոյր ի փայլ ճապուկ
 Հարուստ արեգին .

Յաստեղց բուլից երկին թափուր
 Դաշտ է աւազուտ .
 Յաստեղց թափուր ամպ թըխաթոյր
 Կոհակ մըկանուտ :

Ատեղք նաւեն երկնածըրար
 Ի լոյս առագաստ .
 Բոյք աստեղաց զըմբուխտ դոհար
 Գիշերոյն են զարդ .

Անջատ անջատ թէ գնայցեն ճեմ՝
 Ղամբարք լուսերամ ,
 Թէ խըմբովին դան դէմ առ դէմ՝
 Ծաղկունք անթառամ .

Հային ի մարդս ու ի ջուրց ի ծուփ
 Յաչա երերաղին ,
 Եւ կայրակեն յերեզ ու ի թուփ
 Աչօք ցօղաղին .

Իսկ ի շիրիմ՝ կարկառեալ սիշ
 Բրբօք լուսալին՝
 Ասարը՝ հոգի է լուսանիշ
 Թափանց եւ ի կիճ :

Երկնից ու երկրի վարչին հըզօր
 Զօրք բանակեալք հիւ ,
 Դուք ծաղը առնէք զապիկիս խոր ,
 Կրթէք զաչս յակճիւ :

ԺԱ

Գ Ի Շ Ե Ր

Ահա՛ միտփին արեւմտեան ծիրանիք
 Ահա սրբոխն խաղաղական հովանիք .
 Ի շունչ հոգմոյ տըւեալ հովուի գհոսպոսիս ,
 Փող ի բերան տանի զանդեայս եւ զօղիս : ...
 Լուսին յուշիկ ցայտէ զճաճանչս արծաթեայ
 Ի հանդարտեալ միանունս ալեաց Մեդուակեայ .
 Յալուց խորոց քարանձաւացըն մըռայլ
 Գիշեր սողայ ի դուրս սեւոտն յամբարայլ .
 Ծաւալ յայերս աստեղք բանան զպատուհանս ,
 Լուսս այլ զըւարճս յօրինելով երախանս :
 Ո՛վ գարնայնի գիշերուոյ օգք անուշակք
 Ո՛վ ճեմք ակորժք ի յեւկանեանքս լեռնակ ,
 Որոյ բըլըոց ծաղկապըսակ դագաթունք
 Ծաղկին լուսով , լուսով լընուն ձորք անդունդք .

Ծաղիկի եւ ծովն այն ի սպառուած լերանցս այս
 Աստեղց ծընիւք ծըփեալ ի ծուփս յարակայս :
 Ո՛հ անսրբաոր խաղաղութիւն գիշերոյ
 Քաղցրացուցիչ անդորրաւէտըն քընոյ :

Քուն իցէ գիշերոյ

Ոսկեղէն զինաւոր ,

Մահատիպ վէրքն ազդոյ

Անէ զմարդ զօրաւոր .

1 Լռութիւն հինաւուրց

Կարկառեալ շրջթայ կուռ

Կաշկանդէ իբր անսուրծ

Չարարածս ընդհանուր :

Անդուն արձագանդք

Լռեն ի հընչմանց

Դադարին գազանք

Ի մորիս իւրեանց .

Ի խարձս անտառին

Նընջէ եղջերու .

Եւ ի ծերպ վիմին

Ճագար քուն առնու :

Հաւք օդապարիկք

Բունեն ի մայրիս ,

Ամպաչու արծուիք

Հըսկեն ի ժայռիս .

Սոխակ խոնջ յերգոց

Գըլուխ ընդ թեւով ,

Ի խիտըս թըփոց

Խաղաղի քընով .

Բըւէճ՝ մըթասէր

Դարանեալ զանխուլ ,

Վայէ տիրաբեր .
 Յամբէն կիսափուլ :
 Գալկանայ լուսին
 Հարեալ ըզըճաւ ,
 Նուաղի հովանին
 Ի մարմանդ խոնաւ .
 Յարուցեալ հողմոյ
 Յանտաւին կատար ,
 Ըզօս եւ սարոյ
 Կըքէ զուգաբար .
 Մընչէն մըկանունք
 Ի քարինս Թաւալ ,
 Շարժին եղեգունք
 Հողմոյն ի հիւ գալ . . .
 Նընչէն տաղաւարք
 Գոհք երկովք տուընջեան ,
 Կորով առնուն արք
 Ի վաստակ վաղուեան :
 Յանդորր ի պահուս
 Հանգչի ու անքուն սէր .
 Հանգիր ինձ յայժմուս
 Քընար տըքնասէր :

ԺԲ

Մ Ա Ր Գ Ա Գ Ե Տ Ի Ն

Ի գեղ գօտւոյն աստղականար
 Գան աչք զուարճ ի հիւ ,
 Մարգագետնոյն ի դէմք դալար
 Պըշնուն խընդակիր •

Կանաչադէղ ուր ովկիան
 Յուզեալ պահ ընդ պահ ,
 Շըրջըրջէլով կըքի տատան
 Եւ կանգնի անսահ •

Աստ խաղաղիկ յոյսք մարդակաց
 Դալարուտ գիսակք
 Ի սիւգ հողմոց անցաւորաց
 Գըգուին սիրունակք •

Ոմն աստ բուսակ վարեալ զերկրաւ
 Զուլամք մայրենի ,
 Զերկնաբերձ ոմն ըզկատարաւ
 Ելեալ տատանի •

Ոք վերձեմեալ յոստ բարձրուղէ
 Անարիէ յարեւ ,
 Ոք ըզխոնջ կողսըն գեղաղէ
 Յորդւոյն յենու թեւ :

Ի ձեւ, հասակ յերփն այլազան
 Համամայր բընաւք՝
 Յեմակ ու ի դաշտ միասէրք կան
 Ի թուամբ եւ սուրակ :

Թեթեւընթաց է ոտին մարդ
 Թինդ տուք մանկըտեակք,
 Յոյր եւ յուռթի են ասա դաւարք
 Թինդ տուք ուլք դառնեակք :

Փըքոցուոց ըզտիկ հովուին
 Ածէք ի մեր լուր,
 Դըուոյթ տացէ խոյն եւ մաքին
 Ի սէզբս մաքուր :

Սափորք աստեղց դուք ի մեր մարդ
 Յօղեցէք վերուստ,
 Արեւ լուսնակ դուք ի մեր մարդ
 Շղապէք հարուստ :

ԺԳ

ԾԱՂԿՈՒՆՔ

Ի ցօղոյ աստեղաց
 Յարեւուն շամանդաղ
 Պէս շարից մարգարտաց
 Ծնանին յար ի ծիծաղ
 Գըգուողքն ըզգարուն
 Փարազունք դաշտաց
 Ծաղկունք հովասուն :

Ոսկեծղի բարդ ի բարդ
 Յակրնթին ժըպտի սար ,
 Ծիրանի եւ գոհար
 Ըզգենու քընքուշ վարդ .
 Զէրկնից կապուտակ
 Շիկնելով առնու
 Համեստ մանուշակ :

Զրադեշտայ հանգունակ
 Սա ծնանի ձինաւարս ,
 Մանկութեան սա պըսակ
 Ածէ գոյնըս վառվառս .
 Նա ճամուկ ճանճկէն ,
 Նա խայտ եւ պիսակ
 Ժըպտի յանձաւէն :

Կէսք յանձինս սիրահար
 Բընակէն միայնակ .
 Ի ժողովս եւ ի սար
 Այլք յեռեալք յող մանեակ .
 Ի հողմոյն շընչել
 Պարողաց ի տխր
 Անեն ելեւել .

Կէսք գուռզ ըզճակատ
 Դիտակաց երկնածայր՝
 Ի զըմբուխտ շըրջասպատ
 Իբբ ի թագ ոսկեվառ
 Պըսակէն պայծառ
 Յըստորոտս ամնոց
 Ի տես պերճափառ .

Այլք մածեալք յառուաց թումբ
 Տան ըզգեղ , առնուն բուծ .
 Հովասէր փափուկ խումբ
 Զեմակաց առնու ծուծ .
 Հատացեալք ի խուն
 Յորմոց սատառած
 Այլք պըճնեն ըզտուն :

Այլ ո՞ զբոյր բազմազան
 Որ խընկէ զօդ զերկիր
 Զանուշիցն հէշտական
 Սփռելոցն յօղբս ցիր՝
 Պատմեսցէ բընաւ .
 Ո՞ թուեսցէ զնոսին
 Զոր բնութիւն ծընաւ :

Զուարճացիր ծաղիկ զուարթ

Ըզքեղ աչք հաստողին

Տաճարաց իւրոց զարդ

Տեսանէ ի բեմին .

Քո գեղ հրաշական

Մըրցի 'նդ անմահից

Դու տիպ մաքրութեան .

Դու գահուց ծիրանեաց

Ընձեռես սեթեւեթ ,

Ի ճակատ թաղուհեաց

Յաւելուս պերեւեթ .

Դու զտաճարս պըճ'նես

Պսակես ըղբաժակ

Խինդ ի խինդ զօղես :

Ո՛վ էից դու համայն

Խինդ վերնոց ու որ ի վայր ,

Եւ տիպ դու 'նայնութեան

Մահացուացս երկրավար .

Դու զերգչիդ մի ժամ

Պըճ'նեսցես դագաղ ,

Քան ըզքեղ թարշամ :

ԺԴ

ՁՈՐ , ԾՈՐԾՈՐ

Ըղեւնտուիւք ու առ մարմանդիւք ծաղկաճեմ
 Յերկուց սարից կամ ի կրրճից կից նըսեմ
 Իջանէ ծործոր
 Զուրբք դաշնակաւոր .

Անտի Ժայռք թուիք , որմեն աստի զնա բուսակք .
 Ի միջակին կայ իբր ի քուն անուշակ
 Զորակ ստուերամած ,
 Պուրակօք սլըճնած :

Քարակարկառ յանտաշ որմոց զարտուլի
 Մերթ մուրթ մերթ լոյս մըտեալ ընդ հունս գող
 Յորտապատ վազ (ուղի
 Վարեալ խոտ զաւազ ,

Յերթ գահավէժ արկանեն ուիք գիրկ դողդոջ ,
 Մատրուակեալ նեկտար ծաղկան որ յուղւոջ
 Ժըստի կարմրորակ
 Սորոց ի սենեակ :

Ի սահանաց ջուրց մէջ սբարդեալ ըզբազուկ
 Երբինտունակ հարսնամտտանց խումբ փափուկ
 Ծածանեալ մէտ մէտ
 Խաղան ի ջուրց վէտ :

Ծիծաղախա անդ նրնջէ հէզ նունուֆայր
 Վարս խրճնացեալ յեց մայրենին ի դալար ,
 Եւ ցօղ մանրակաթ
 Ի սպիտակ ճակատ :

Անդ սուրաչով եւ իմ զեփիւռ անդադար ,
 Խօսի յառուս , դառնայ ի ծայրրս դալար ,
 Ծանրացեալ թեւօք
 Ծործորոյն խրնկօք :

Անդ մենախօս սիրեն սրբոխ հառաչանք
 Զարթուցանել զծածուկ ծմակացն արձագանգ
 Ի խորս ծործորին ,
 Ուր կեան մեռանին :

ԺԵ

Ա Ռ Ո Ի

Արշաւասոյր մօր վրսեմ
 Դու գրատրիկ սաղասլաճեմ ,
 Մանուածաւալ սուրբ վրտակ
 Արծաթի մարգաց սլրտակ ,
 Որ ծաղկերանդ ի մարմանդ
 Մարդարտեայ դաս մեհեւանդ ,
 Կամար հովտաց լանջագեղ
 Ծաւ ի ծաւ ու ակնախրտեղ :

Քան յերկրածուփն ի Պոնտոս

Քան ի Նիւլ առատահոս

Ի հայելոջ քում փոքու

հեշտ հայի ակն արեւու .

Անմեղութեան եւ սիրոյ

հանգոյն հեզ են կուտակք քոյ .

Ի քէն ըմպեն ագարակք

Քեւ լընուն խընկոց բաժակք :

Մրտիմն ի քեզ նաւէ հարթ

Ձիւնահէր եւ սագ հանդարտ .

Ի քեզ թըրծեալ կաւ մանրիկ

Վազմէ զբոյն իւր ծիծառնիկ .

Ընդ քեզ սիրեմ զիմ զեփիւս

Անկանել ի խաղ ըսփիւս .

Սիրեմ զուռոյն քեզ շրշունչ

Սոխակին յեզըրդ մըրմունջ .

Եւ առաւել զըզձից շունչ

Ախորժեմ ի քո մըրմունջ

Դաշնակելով հեղաբար

Քեւ չափ խաղալ անդադար :

ԺԶ

Գ Ե Տ

Մանկունք հիւղից ի ջուրց ամուսնքս այս եկայք
 Յտուել յոչինչ մի՛ զոր ծընան մեծ հրակայք •
 Գեա՛ զոր յանդից մէջ տեսանէք եւ շինիս
 Պատել ըզգետոյս եւ ըզքաղաք՝ ոստանիս,
 Գըլուխ զօղեալ յամպածըրար լեառն հանգչի
 Յովկիանու անդունդս աւարտ իւր թաքչի :
 Ինքն ի միջի շարժլի հանդոյն իմն օձի
 Որ զեռալով զերկրաւ զատչել չկամիցի •
 Այլ թէ խաղաղ կարծէք ի քուն հանգըստի
 Իբր ալեւոյթ ծանրադանդաղ ի խըշախի,
 Կուտակք քանի՛ լըռինք հոսին ըշտապաւ
 Պահ մի ծընեալ զուրուս լերանց, մայրից թաւ :
 Մերթ ի համբոյր քաղցրը շրթանց թաթաւուչ
 Հեղիկ հեղիկ գըգուէ զերկիր վայելուչ •
 Ըզգեղաղարգ մարգաց շպարէ զկուս գիսակ
 Գաշտորէից ընձեռեալ գոյն եւ հասակ •
 Գարնանաղայր եւ մերթ ուղիսից ի զայրոյթ
 Լեռնակուտակ պուղեալ պտուաքէ սրլտոր կոյտ •
 Մինչ ձեռն ի գլուխ գուժեն տըղայքն ի յանդի,
 Վազեն զթըմբօք կանթեղակիր մանկըախի •
 Եւ ի խորուտ նըշան բըրդեալ սասաին խօլ,
 Ամբաւակոյտ ալեօք ընդ հողըն խորխօլ
 Դոփէ տրսփմամբ իբրեւ նըժոյգ ամեհի
 Մտրակ ի կուշտ փսընչեալ ի դաշտ յերերի •

Վայ վայ գեղջկաց . ոչ եւս ժուժէ թուամբն խոնջ
 Եւ ծառք ծրփին ըշմրկանամբք իբրեւ փունջ .
 Ընդ արտորայս մաւնչէ ծով իմն համարձակ
 Հիւղք ի նրմին կոծեալ սարեկք բարձրաձաղկ .
 Հին հովանոցք թիակապուտ նաւուց սէս
 Ու ապաւանդակք կռուին ի հէնն ալէգէս .
 Աղչեալ լուանին ի նորն ծով կարկառի
 Ուր ընդ ձրկանց գառն եւ երինջ դեգերի : . . .
 Որդիք հիւղից , կենաց է գետս այս սրտիկեր ,
 Ալքք զալիս վարեն ըղջուրց մըշտերեր ,
 Ա՛հ զամ մըղէ ի ծով ծրփուտ ծերուլթեան
 Եւ դարք ըղգարս յամանակին ովկէան :
 Թուխ թուխ կոհակք յափըշտակեն ըզմարդիկ
 Եւ յանապատս յաւերժս առնեն ընկեցիկ :
 Ո՛հ , ո՛ սայր մեզ ի տիպ հաւուց ջրրասէր
 Խուն գեգերեալ աստէն թեւել անգր ի վեր :

ԺԷ

Հ Ո Վ Ա Ն Ի

Ի ծործորս ի ծմակս հովատուն

Ի կամարս ոստոց շաւաչուն

Առ աղբերց խոխոջիւք

Առ բուրեղ նարդոսիւք

Ընդ սաւառնի ստուեր

Հովուին քընարեր .

Մենաւոր սփռի նա 'նդ կալնեաւ
 Հաստաձիգ կողերքն ըզգաշտաւ .

Ձեռն ի քիրան ըզգըլտով

Մաճակալ գայ ձեւով

Մաղթելով ծառոյն

Չհամբոյր զովութիւն .

Յեզր ատուաց , զուռեաւ երկրասպիշ

Ի շարժուն ի գորգ լուսանիշ ,

Ի բարբառ հեզ հողմոյն

Յերգս ալեաց կարկաջուն

Նընջէ մանկըաեակ

Ա յաիւք կարմրորակ .

Տարադէմ պանդուխտն թափառ

Չընթացից իւրոց ըզտիպար

Ըզգնայուն հովանոց

Վարսաւոր տերեւոց

Տըխրազգած խնդրէ

Ի ծառ ի ծառէ :

Հովանի՛ աղբիւր զովութեան

Հրուիրակ քընոյ եւ լուծեան

Գիշերէ ձիգ տարած

Յանկողինս անտառաց ,

Ուտոի ձմեռն եւեթ

Առնէ զնայն անհետ :

Յորժամ տապի սիրտ տապ սաստիկ

Կամ ի միտս յուզին մութ մըրըրիկք ,

Եւ ամբոխք քաղաքի

Ազմերկեն ըզհոգի ,

Քաղցր յայնժամ քանի՛

Ի լուխն հովանի :

ԱՐՏՈՐԱՅԻ

Վիճակ յուսոյ եւ մայր սննդեան
 Հանդէս երկոց ճոխ անգաստան ,
 Ոչ ծանկեղէ իշխողն ոսկւոյն
 Ըգբոց զիմաց գեղեցկութիւն .
 Այլ հինաւուրց բընիկ արնկան
 Կացեալ առ սեամն ի յերգ ծիծուան ,
 Սրբեալ ըզխաժ աչացըն բիժ
 Զանդն ողջունէ հայեցիւք սիշ .
 Յերկոցն ի յուշ ոչ մեղիցէ
 Եթէ եւ շիժ մ'արտօսը արկցէ :

Արձանացիւր ազատորդիդ
 Ի կատար բարձրը լեռնակիրդ ,
 Գեօղից լերանց սրբուեալ ընդ մէջ
 Մայրեաց գետոց բըլբըց զիւրէջ ,
 Աստուատ տեսցես զարտ սեւորակ
 Եզող ձեռին անջինջ զըրուակ .
 Անտուատ գեղնեալ կոշոք արգաւանդք
 Մշակին երկովքըն քըրանազանդք .
 Անդ բիրտ դաստակք փաստարեցան
 Եւ լայնալանջ մէջք կորացան .
 Անդ յեսանեալ անդէն բըթեաց
 Բահ եւ բըրիչ, տափան մաշեաց :
 Ի հանգիստոյ վարսաւոր արտ
 Բարձեալ զըլուխ ոսկիազարդ

Ի շունչ հարմոյ ակձեւիկ
 Յաջ եւ ի ձախ շարժիկ հեզիկ .
 Վէտ վէտ կանգնեալ բախին յիրար ,
 Ըզխոնջ ճակատս հասկք առնուն վայր : . . .
 Դառնայ հընձող բարձեալ զորայ
 Թողեալ յերկրի զյոյսն յապագայ ,
 Մինչեւ դարուն յարուցէ նոր .
 Կենաց սրտակէր խորհրդաւոր :

ԺԹ

Լ Ե Ր Ի Ն Ք

Ո՛հ , սայր ինձ դք հընարս թեւոյ սաւառանան
 Ի մի թըռիչ սլանալ յերկրէս դաշտավայր
 Թեւ թեւ կողիւք հերձուլ կորել ըզսահման ,
 Վերձեմել բարձր ի ծայր :
 Զխորդ դոփէր դեմնանախանձ դարչապար
 Թինդըս տըւեալ ի սար լերանց ամբուռոյց
 Վազվազելով ի գագաթունս երկնածրար
 Զանտառօք հինաւուրց :
 Հըսկայք երկրի յաղթահասակ տխտանեանք ,
 Յաւերժ բրբդունք , խրթնատեսիլք երկչոտոյց ,
 Դուք քան զարօտս եւ ծաղկաձեմ բուրասաանք
 Յանկալիք իմս աչաց .
 Չեզ երկնային են արագ գողով երկնամերձք .
 Վէհին այս հրաչք , առնել զվիթխարս սիրելի .

Դուք աշխարհաց կանգնեալ ամուրք բարձրա-
 Ո՛վ լերինք սիրալի: (բերձք

Ոտս արձակեալ յանդունդս եւ գլուխ ընդ եթեր,
 Տիեզերաց յաւերժական էք արձանք:

Շէնք լայնանխառք փարին զոտիւք, եւ աղբեր

Մըշտաբուխ դուք սահանք:

Պրսակազարդ կըշտիցդ է կող դեղաղէշ

Դրասանդ դրասանդ աղուրայնեացն բազուկ՝

Ի ծրար ծոցոյ սերտ գըրկածեն բարձրուղէշ

Ըզկրնձնեակսն ճապուկ:

Աստ է թիկանց սարք եղեւնեաց երկնադէղ

Տատանեն յօդս անկոր կատարս արջնաթոյր:

Յըստուերն է մուշլ մինչ սաղարթուց կոյտ է սէղ

Անդ ողբայ ծանրալուր:

Բարձր է վախից զօդոց կըտրեալ ասպարէղ

Իբր յուսահատ է թինդ ոտտէալ դահալլէժ

Մըշտատարափ նմանեալ հիւսից ձիւնադէղ՝

Ձեղանին գետք յաւեժ:

Ի խորածորս ծրնակաւոր եւ հովիտ,

Ուր ժիր բարբառք, կարկաջք առուացն է ծործոր,

Յուռթի մարմանդք, փթըթեալ թըփեր ծաղկա-

Եւ խորանք վարսաւոր: (խիտ

Անդ է խաշին մակազտտեղ խոտաւէտ,

Տըւարածից հովանաւոր բազմարան,

Ի սոյլ սրընգին դույթ տայ նախիր հեւ ընդ հեւ

Յայտեալ կաթըն ծորան:

Ի սար լերին գիտակ՝ արկեալ հովուի ոտք զոտամբ

Ձեռն է կահոյր, շուրթն յեղեղանց է մրմունջ

Դիտէ զխոնարհ քաղաք լըցեալ շրփոթմամբ,

Ու աննախանձ առնէ ունչ:

Անդ մըշակին զտիթն հոգոց անդաստան
 Ազբուրն ինքնին արբուցանէ յօշարակ ,
 Աճուսնաձիգ յեղըր նորին ծառք ճօճան
 Պատըսպար յարեակ :

Հաւք երկնընթացք անդ տուն ունին եւ դադար .
 Որդին օրոց յազատ բարձունըս ծնանի .
 Յափըշտակեալ ի դաշտաց զիւրըն սաշար
 Ամբարէ ի բունի : . . .

Լէրի՛նք լերինք , աչք իմ ի ձեզ յօրանան ,
 Կապոյտ գըմբէթ կարծեմ կապոյտ տաղաւար .
 Բերդք որ ի ձեզ եւ ըսպիտակ մենաստան
 Թըւին թեւք հողմալար .

Ո՛հ , ո՞ փետուրս ինձ տայր երագս արծուսպէս
 Գէթ մի անգամ յողջոյն վայրաց բարձրութեան
 Սարից ի սար կաքաւելով յանխոնջ թեւս
 Չըգէլ սիւզ նըրբութեան :

Երգմնեցուցից ըզձեզ բընակք լեռնոտին
 Ի կողս կանաչ ուր կառուցան խըրճիթք ձեր ,
 Թէ յուղւոյն կէս խոնջ կասեցայց ցաւագին ,
 Եւ սառէ զիս ըստուեր ,

Ձաճիւնացեալ ոսկերոտուոյս իմ աւանդ
 Եղեալ ի վէմ զորով գըթեաց դարշասպար ,
 Բարձրագունին լերանց ի խրոխտ դահուանդ
 Ի կոհակ ամպածրար ,

Յորոյ ատորոտս հօլովիցի հողմաղաց ,
 Եւ ի թիկանց ուխ քարավաղ խոխոջէ ,
 Չոր անգէորդըն մասնանիշ անցորդաց
 Ի հեռուստ արասցէ ,

Անդ ի խառնուրդ վոռեայ եւ ջուրց շառանջման
 Որդւոց թուանց յաւերժական յիշատակ ,

Ամպօխտազաց զինս ամբարձէք մահարձան

Սափորով սեւորակ •

Հընչեսցեն հողմք, սաւառնեսցին թեք արծուեաց,
Եւ դալկադէմ կարկառեսցի 'նդ նա լուսին •

Իշերք ըզվէմն արտասուեսցեն արոմաղցեաց •

Ես հանգեսոյց ի սարին :

Ի

Տ Ա Ղ Ա Ի Ա Ր

Խաղաղաւէտ մահկանացուի բնակարան

Տաղաւար ագարակաց •

Ոչ որ կըճիւք ի մուրճ կոփեալ եւ կըռան

Կամ ի մայր փայտից քերած :

Հանդոյն բունից հաւուց վայրեաց յասպլեր

Անարուեստ արկեալ հեծան ,

Չող ըզձողով աստ հիւսեալ տուն տարուբեր

Բընակէ մարդ անցական •

Պուրակածին ղեղնեալ ցողուն եղեգանց

Աստ իցէ տախտակամած ,

Չորով սիրեն իբրեւ բընուստ մի 'ստ միմեանց

Շարիւ շամբքն տարակաց :

Պըսակազարդ ըզձագ նորուն պըճնէ խաչ ,

Նըշան հաշտ եւ ահաւոր •

Եւ լուսանցոյց շողայ յերգիս անձաճանչ •

Կայ ծիծառն ի բարաւոր :

Խըրթնի բաղէղն ըղնովաւ պատ՝ ի թիկանց
 Պաշտարանէլ ի տարափոյ .
 Դարան լարեալ սարդին նրստի որսաճանճ
 Ծիղ ի ծիղ թէլ ըղթելոյ :
 Յաճախ ընդ այն գընայ ի վեր գըդմենի
 Պատաստեալ սարուրազարդ .
 Ոյր զայն տեսեալ ոչ յիշեսցէ զՆինուէի
 Գուժարկուն մաղձամակարդ :
 Փայլեն ձեղունք անդ եւ որմունք պարզունակ
 Զինչ քարայր դից բացօթեայց .
 Մական հովուի, բըրիչ, ցաքան, սանք, սապատք
 Զարդք եւ կահք են տընակաց :
 Կանթեղ աղօտ ջահէ ի ցայգըս ձմերան
 Ընտանեացն առ խարուկին .
 Հիւսէ տիկին, եւ գէպս զորդեոց հընութեան
 Պատմէ հայր՝ հըլու մանկին :
 Եւ թէ ամպրոպ ի մըրըկացոյդ ամպրոպաց
 Ի բացուստ կոծէ զանտառս ,
 Որդէք հիւզից օրհնեն ըղՏէր ի մահճաց
 Որ զանքոյթ ետ տաղաւարս :
 Պանդուխտ օտար տեսեալ ըղհիւղ՝ հարու զծափ,
 Անդ բուժէ զլատտակ ուղւոյն ,
 Բանի՞ մաստնոց եւ ճոխից իղճք սիրատարփ
 Հառաչեն առ սևտան հիւզոյն :...

ԻԱ

ԵԿԵՂԵՅԵԱԿ

Սնանց կոթող կենաց մարդոյ վաղանցիկ
 Յանմահութեան միջնաշաւեղն ամբարձիկ,
 Խաղաղական պանդոկի
 Ում կարօտի խոնջ հոգի,
 Փառք քաղաքաց, պրսակ շինից եւ լերանց,
 Հարսին վերնոց առագաստիկ սրբբութեանց,
 Միշտ մեծ միշտ սուրբ է տաճար,
 Այլ յագարակս՝ անտիպար,
 Դիմեն գեղջուկք, հեղուն փռեն իղձ ջերմիկ,
 Ուխտք հոգեթեւք լինին աստեղց վերանցիկ •
 Ձըրից իւրոց փոխանակ
 Անու Տէր տենչս անուշակ :
 Քանի մաքուր մաղթանք եւ խանդք սիրավառ
 Անդ թեւածեն քան զաղանիս սրբբափառ •
 Քանի վըշտաց մըխիթար
 Եւ արտասուաց անդ դադար :
 Քրիստոսազէն անդ զինուորի նորեկ մարդ •
 Եւ անդ կանգնի հրաժարեւոյն տըխուր զարդ •
 Անդ է հոգւոց քաւարան
 Եւ հուսկ մարմնոց քընարան :

Մայր վըշտահար զօղեալ ի խորշ մ'առ սեղանն
 Զոր կամարաց սատեն ըստուէրք սրբազան ,
 Զորդեակն իւր լայ քաղցուէնի .
 Որդի զմօր լաց հարկանի :

Նըկարք որմոց , գըմբէթ , սինահք եւ կամար
 Եւ լըութեան սրբոյ ազգումն անդադար
 Ահաբեկեն ըզսիրտ թիւր
 Ծուշըր կրկնեւ անստերիւր :

Աղջիկ հովիւ յամառնային միջօրէ
 Իջեալ ընդ սարս՝ ոմբողնին նըւիրէ
 Ըզհամասպրամ երփնազարդ
 Շիկնեալ եւ ինքն այտիւք վարդ :

Անդըր զիմեն եւ սիրտք բեկեալք աղօթկեր
 Յոյց ջերմն ըղձից տալ ըզմեղուին փայլուն բեր ,
 Դէմք ի խոնարհ ձեռնամած
 Մեղըր կաթեն ծայրք աչաց .

Եւ անցորդ վայր մի խոտորեալ ի շաւղէն
 Ընդ անձանօթ մարդկան խառնէ զսիրան անդէն .
 Լըսէ հանուրց սըրտազէտ
 Առնու անձնիւր զիւրըն սէտ :

ԻԲ

ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ

Եթերաճեմ հըսկայ յերկրէ
 Քարաբուսակ սիւն անասղարթ
 Ի տաճարին սուրբ սընարէ
 Կանգնէ կտտար պըսակազարդ .

Փայլ նորածին աստեղն աւուր
 Ի նախն ի վազ յաշտարակին
 Ի դունա կապէ վառ բոցաթոյր
 Առաւօտել ադարակին :

Իսկ մինչ արեւ յուղեցն ի կէս
 Սըփուէ ճաճանջոս տասպագին ,
 Գանչէ զանգակն երկնահանդէս ,
 Օրհնել զերկնից արքայուհին :

Եւ մինչ լուսին յամբոց ի ծիր
 Ի ծագ նորուն վառէ լսպտեր ,
 Ո՛հ ամբարտակ կանթեղակիր
 Կարծեմ ըզնա կենացս յեզեր ,

Ամահոթեան ըստոյգ փարոս
 Յեկեղեցւոյ նաւահանգիստ ,
 Ի բարձանց փայլ փայլ լուսահոս՝
 Կակղէ զսըրտից խոցուածը խիստ :

Մերթ ժիրաժիր քաղցրահրնչին
 Աւետարեր իբրեւ հրեշտակ
 Խըմբէ ի տօն զորդիա հիւղոյն,
 Խինդ ըզգենուն բլրոյն կատարք :

Մերթ սրգաւոր անձին տիպար
 Ի լռուութեան խոր գիշերաց
 Ծանրադանդաղ փանչէ բարբառ,
 Զարթուցանէ զթմբեալ հառաչ :

Բայց ընդ երեկս երգէ հանդարտ
 Եւ քաջալերս առնու մըշակ :
 Սրբեալ ըզքիրտն յորթոյ սաղարթ
 Ճօճան խաղալ դիտէ զզանգակ :

Իբր ի ծովէ խոր մըռնչին
 Լըսէ բացուստ ըզձայնն անցորդ .
 Եւ ի միջոյ լռին մայրոյն
 Դիտէ զնորին ծագ ոահահորդ :

Ի հայրենեաց մեկնիլ նորին
 Սա էր ուղւոյն յետին ընկեր,
 Յօտարն հողոյ եւ ի դարձին
 Սա իւր արնկանըն լուսաբեր :

Կ Ա Մ Ո Ի Ր Ջ

Որդին հիւղեց անթաց ոտիւք գընայ 'նդ գեա
 Սալս ագուցեալ կամարանման ջուրցն ի վէտ .
 Յեց կամըրջին ի փայտ մանուկն ակընկոր
 Պարսպառուակեալ դիտէ զյորձանըս սլըլտոր :
 Այլ այն երկուցն ափանց յանդուգըն շաղկապ
 Մերթ ի լերանց վազէ ի սարըս սաղապ ,
 Անջըրսկեալ ըզկիրձս՝ ըզխոր անդընդովք
 Իբրեւ շաւիղ օդոց կախի կապանօք .
 Հաւք փապարաց մինչդեռ թեւեն յորս ի վայր
 Յաճախ փետուր մի կամըրջին գայ ի ծայր .
 Չայն ընդ գըլուխ կապէ անցորդն ուղւոյն վարձ ,
 Եւ ի բարձուէն գունակ հաւուց բանակաց
 Ըզմարմանդիւք դիտէ զորդիս գեղջէից ,
 Եւ զվիթխարի եզանց նախիր ընդ հօտից ,
 Չոսկեփառ գունտ աշտարակի տաճարին ,
 Չարտս արջնաթոյր , ըզտաղաւարս , խաղս առու .
 Բանի՛ փոքրիկ տախտակամածն այն սերձ է , (ին :
 Որ զոչընչիւ յափանց յափուռս ընդմիջէ ,
 Աւակելով զկենացըս զորմ՝ դիւրանցիկ
 Ընդ որ յափուռս օտար երթամք անգարձիկ ,
 Որք ամբառնան .բան ըզլերինս թըխաթոյր
 Յաւիտենից անվանելի որմք հաստոյր .
 Այլ անցանեւ թէ հարկ՝ չիցէ՞ խմաստուն
 Երթալ վըստահ ի կառուցողըն նոցուն :

ԻՒ

ԾՈՒԽ ՇԻՆԻՅ

Բազմեալ ի բարձրս նաժըշտաց օգաճեմ
 Հեզիկ հողմոյն եւ ճաճանչից արեգդէմ,
 Ընդառաջել առաւօտուն գեղաղէշ
 Ընդ ադարակս եւ ընդ անտառ բարձրուղէշ :
 Ամբառնայ ծայր շինին ի կերպ ի սպիտակ
 Իբր հողմուռոց կըտաւ ի գաշտ կապուտակ .
 Կամ իբր յեռեալ հաստատութեանն ի մոյգ գոյն
 Իբրեւ անտառ զայլ անտառով ինչ կանգուն .
 Վարագուրեալ ըզտաճարին աշտարակ
 Կատար նորուն օգակառոց թըւի յարկ .
 Յական արփւոյն շամանդաղել առ ի շեղ
 Բոցակոհակ արձանանան ժայռք զետեղ .
 Կամ թէ հողմոյ յանկարծ դիպեալ մարտընդդէմ
 Յըրիւ ցըրիւ յայեր շըրջին լուսադէմ .
 Մերթ սաւառնեալ մահաւասար ըզշինիւ
 Իբր ընտանի ամու անցանէ անկըսիւ .
 Եւ մերթ հեզիկ հեզիկ ելեալ բարդ ի բարդ
 Յարշալըրոց խառնի կոհակ կարմրաւարդ :
 Ես ի գաշտէն երկնակառոց ի զընին
 Ո՞ տայր սսեմ բազմել ի ծուխ ծըխանին ,
 Ի ծըխոյ՝ յամու , յամուոյ վազել յարեւակ
 Եւ ընդ նըմին հիւ գալ զերկրաւ ըովանդակ :

Սակայն եղնիկ , լուծեալ ծըխոյն ծուփի ի ծուփ
 Եւ զիմ հալէ ծուփս տենչանացս հուպ ընդ հուպ .
 Շիթք ի ծըխոյն հոսին լերանց ի կատար ,
 Շիթք արտասուացս ի մարդն հոսին վայրասպար :

ԻԵ

Մ Շ Ա Կ

Յարտս արօրադիր իջանէ մըշակ
 Սընուցիչ շինից եւ երկրի դայեակ ,
 Ի վերս խոփոյն սեւորակ
 Ի հայրականն ագարակ
 Սփռէ զսերմըն ցիր
 Ըզնոյն զերկրի ձիր .

Անդ շիջեւափառք եւ անկերպարան
 Գիշերս ամսօրեայս խաղաղք ի քուն կան ,
 Մինչ շաղ արփւոյն , ցօղ աղբեր ,
 Հողոյն սընունդ բարեբեր
 Ածցեն գարունս յարտ
 Զերկրիս կանաչ զարդ :

Քանիցրս տընկոց չեւ արձակեալ գէս
 Հիւ գալ ըզգաշտան ընդ առուին եզերս
 Տեսի զմըշակն յերիկուն
 Կամ ի ծընունդս արեւուն

Գաւաղանաւ նուրբ
Զածուն գործել սուրբ :

Ըզդեռաբուսիկ արգասեացն ընձիւլ
Ո՞րչափ ոռոգեաց ի ցօղ քրտնաբուսիս ,
Միոյն զառուն բաժակեալ
Այլում նեցուկ հաստատեալ ,
Իննամեղով ըզծնունդ
Զոր սին ծընաւ ունդ .

Մինչեւ պատմութեան կանաչ արկ ցօղուն ,
Համբուրեաց զեփիւռ ըզճակատ նորուն .

Լայնասաղարթ սոնք իաւարո
Տարածեցաւ բարդ ի բարդ .
Եւ ազգ ազգ բանջար
Բուսաւ ի պաշար :

Ո՛վ ծնուցիչ սերմանց , նախնեաց պայազատ ,
Դու զբաղց հարկանես շինից մարդաշատ .

Քեզ շնորհապարտ է երկիր

Որոյ երկանց դիւր եղիր .

Զօսկեակ հասկաց շեղջ

Պատուէ եւ գահ պերճ :

Ե Չ Ո Ղ

Ըզգիշերուոյ մինչ ըմպելին անդք ըզցօղ
 Խոփոյն ճրոխնչ բացօւստ հընչեաց ձայն խայթօղ .
 Որդի հնութեան էր փապարեալ են ձեռք քոյ ,
 Բիրտ ըստեղումպդ ըզկերպ առեալ կոշտ հուլոյ : —

Խոփոյն եղջերք բըրտացուցին
 Ըզմաճակալ ձեռն եզողին :

Ընդ կորդ գետին ռաս երկայնեն եզանց լուծք
 Ահօսանան առու առու տըրտա՛մ գուղձք .

Դանդաղաքայլ ամոլիցն յերթս ընդ ածուն
 Ըստուար փայտիցըն կերկերեալ ճըռընչիւն
 Բարողէ զոյս ապագային
 Տաժանակիր մաճակալին :

Ի լեռնօտէն իջեալ հովուին յերիկուն
 Կոհակաձեւ դիտէ զթուխ հերձս երկաթոյն .
 Մինչդեռ ըզհետ քարչեալ ըզսուր իւր գործին
 Դառնայ յուշիկ եւ խոնջ ի հիւղ հայրենին .

Եղիսէի համբակն ըզգաստ
 Հարիւր ածուա ձըգեալ ի դաշտ :

Իսկ իմ տեսեալ զեզողն ի գործ արօրին
 Ըզտէրունեան վըճիւն յիշեմ առօրին .

Յագարակի կենացս հանուրց ձեռն ի մաճ ,
 Հարկ է յուսով երթալ յանձնիւր գործ յառաջ .
 Մի ոք ընդ կրունկն յերկիր ի դարձ՝
 Որ ձեռն ի մաճ յերկին ամբարձ :

Ի Է

ԱՐՏՈՒՆՁՔ

Շողեալ շարժուն հասկաց ի շունչ տարուբեր
 Ամարային բոցով խայծին կարմրահեր :
 Արիք ելէք սերմանահանք , հունձք են հունձ .
 Զուռւոյն բազուկ յեռեալ ի վարս ծաղկափունջ
 Արկէք ի գործ ըզմանկաղ
 Ի յերթ եւ եկս անդանդաղ :

Մանուկ հիւղից , արկեալ ի յուս յօտոց սուր
 Չայն աւետեաց ի հանդրրուանս յինէն տուր .
 Ոյք լալադին արկէք սերմանս սրրտաբեկ
 Ի հունձ զըլարճ ընկեր զընկեր կարդացէք .
 Արկէք ի գործ ըզմանկաղ ,
 Ի յերթ եւ եկս անդանդաղ :

Ոսկեպըսակ ծիծաղի յոյս յարտորայս
 Ատոբացեալ հասկ հասկ թափէ բովիճայս .
 Կարչնեղ բազուկք շոյտ շոյտ աստ անդ անցին հիւ
 Զօրանայ 'րեւ , հասկա մանկուիք ի յայթիւ
 Արկէք ի գործ ըզմանկաղ ,
 Ի յերթ եւ եկս անդանդաղ :

Ի թուփ թըմբին կարմրալանջ հաւն ի կողեր
 Հըրճուողլաճայն երգովք մեղմէ զվաստակ ձեր .
 Նըչան ի շէնս առաքեցէք ընդ ալիս
 Հասկ բըռնալիւր ամալով նոր անդ խայրիս :
 Արոք ծածանեալք կանգնին նըտաին դաշտանան ,
 Կոհակ կոհակ գաղիչք դիզեալ ամբառնան .

Գիրգ օրիորդք գիրկըս պարզեն լայնալիճ ,
 Յուս պատանեաց կախին որայք ի կապիճ :
 Ճըռինչ սայլից որ զհունձ բառնան ցորենոյ
 Գեղձից կառք են յողթականք , փողք յուսոյ .
 Բոյոս շինին օրհնէ զբազուկ հընձողաց՝
 Առատութեան տածիչք , սիրուք հայրենեաց :
 Որայսպատակ մանուկ հընձող դայ ի տուն .
 Պատրի հողմիկ մերկ գըտեալ զանդն ի զարդուն .
 Յօղ հանգարտիկ տեղան աստեղք ի փող սին ,
 Տըղզան միջատք ի դէմս սափրեալ վիճակին :
 Արկէք ի բաց ըզմանկաղ
 Մըշակքդ ի պար անգանդաղ :

ԻՐ

ԱՅԳԵԿՈՒԹՔ

Որդէք կըթոց , մի զուս օրթոց հոլանի
 Տացուք հողմոց կոծել ի զուրկ հովանի .
 Ըզմարց խըրթնի զազատորդիան անուշակ
 Մի մերկ թողցուք տարուբերիլ սըգօրակ .
 Հանպա կազմեալ զուարթ երախսանս
 Արէք էլէք ի յայգեստանս :
 Ի կուլթս այգեաց հընչեաց վիճակ մեր շինին .
 Զամբիւղ կողով յուս ըստանձնեալ պատանին ,
 Եւ աղջրկոճիք դիմեն յայդիս խանակիր .
 Վառ խաղտղոյն ըզծերն առնէ շոյա եւ ժիր .
 Ի թափս ոտից թընդասցէ դար գինեբեր
 Յաղուրայնիս պըսակաւոր ծադ ի վեր ,

Ի սանդղածեւ այգեստանւոյն հոժ կատար
 Վազվազեացէ մանկանց առոյգ գարշապար :
 Հանպա կազմեալ զուարթ երախանս
 Արիք ելէք ի յայգեստանս :

Յարին որթոյ ներկեաց գեղջուկն ըզըրթունս ,
 Չայն է խընդից Սպանդիարայ ի խրախունս .
 Հովուին տեսեալ ծափէ , հընչեն դարեւանդք ,
 Եւ լըւանիստք այսօր կայթեն արձագանդք .
 'Նըշգարենիք կիցք խիղք ի խիղք՝ անջատան ,
 Որթոյն գընտակք գըրխակորեալ երերան .
 Թօթափին հատք , ճըմլին ի հոյզ քաղցուէնի ,
 Մեղրածորան յորդէ աւիչկ ծիրանի :

Սապատ սակառ սեաւ սեաւ դիզան բլրագոյն
 Մայր ցընծութեան սահի սայլիւ թաթաղուն .
 Այ սայլավարք , ճեպ տուք եզանց ի խայթ սուր .
 Մուծէք ի շէն ըզգեղեցիկն յերկրիս տուր :

Եղջերք եզանց յորթատերեւս առան շուրջ .
 Ի սուիչ անուին գաւառապետ Ժպտի լուրջ .
 Խաղո՞ղ , եկ բէր մեզ տօն մանկանց եւ ծեր հարց .
 Եկա՞յք աղքատք լի ամանով առնել դարձ :

Ահա մանկունք կարմիրոտունք ի հանգէս .
 Բոսորագոյնս արձակեն սայլք յորդ աղբերս .
 Բոկ պարմանի դոփէ ի խուան խաղողոյն ,
 Վըտիտ ներբան կազմէ հընձան պարզագոյն :

Բոյր մըշկահոտ թըրթուիկ խաղմուզն արձակեաց .
 Եւ գեղջից վառին աչաց բիրք ծաւեաց .
 Ի տօնս այգեաց օրէնք են գոլ քաղցուալից ,
 Այլ փախերուք դուք ի բակբեան աղօնից :

Լըցէք ըզգուբըս կըշտապինդ ,
 Բազում ցաւոց դինեակն է խինդ :

ԻԹ

ՄՐԳԱՊԱՀ

Ընդ հովանեաւ չորից ձողոց

Ի դուռն այգեաց ի հեշտ խոտոց

Ըզցանկալի ծընունդս երկրի

Պահէ մըշակ ծառաստանի •

Ձոր նորահաս ծընաւ գարուն

Դիւցոյց սաման, հասոյց աշուն •

Ի գեղ չըքնաղք ու ի գոյն ու ի ձեւ

Կըրթեն զորկոր ու աչաց արեւ :

Ո՛հ թէ նոցին նըւազ էր գեղ

Յաչկունս Եւայ չըգայր խըտեղ,

Եւ հովանին եղեմական

Չառնէր զորդեակքս բացական :

Ո՞յր է յաճեալ ի ծառաստան

Պըտողոց քաղցունց վայր ծնելական •

Ըզխընձորին տեսեալ կարմիր

Որ ոստախիտ կըքի յերկիր •

Գարնանագեղ կեռաս բոլոր

Ձխարդ թափէր դըլոր դըլոր •

Իբր երկդիմեան դեղձիկն անուշ

Տիտ աղուամաղ այտից քընքուշ •

Եւ սուղ կըրտեր պըտուղ ծիրան

Ձոր հին բերէ հողն հայաստան,

Եւ թագակապ նուռն անդ ընտիր

Վատեալ ի գոյն վարդակարմիր •

Շուրջ թիկնապահ կարգեալ իւր փուշ,
 Մի ժպրհեսցի ձեռն անըզգոյշ •
 Եւ պարկ թըզոյ մեղրածորան
 Կաթէ հրաւեր ի հեշտ բերան :
 Այլ զի մի մի թըւել ըզխայր
 Զոր արգաւանդս եբեր մեզ վայր •
 Ընդ հովանեաւ չորից ձողոց
 Ի տաղաւար հիւսեալ յոստոց ,
 Եկայք տեսէք զոր մըրդապահ
 Գանձեաց երկրի աւանդ անահ ,
 Զոր մըշակաց բաղմաջան երկք
 Սատարեցին գեղաղան բերք •
 Եւ օրհնեցէք զաջն աննախանձ
 Որ արկ յերկիր զազգ ազգ սերմանց •
 Եւ գերագոյն ուսոյց արուեստ
 Հանել յերկրէ զկենաց պարհեստ ,
 Եւ վաստակոցըն մըխիթար
 Առնուլ ըզմիրգս ամոքարար :

Լ

ԱՆՏԱՌԱՊԱՀ

Քրսան նորեկ հիւրըս մայրեաց
 Պահապանն անտառի,
 Քրսան նոցին չուս ողջունեաց
 Աչս յառեալ յաշնայնի .

Ետես նա մի 'ստ միտջէ զծառոց
 Նորածին զոստ զընձիւլ
 Ըզգեղ ծաղկանց ըզբեր պտղոց,
 Ըզճանճորս սարդին հիւլ :

Ի զով շաչիւն հովանոցին
 Առ աղբերց խոխոջիւք
 Բնթանան կեանք մըրգապահին
 Հեզասահ գընացիւք .

Բաղմեալ ի դար մի բըլրածե՛
 Ճաճանջիւք ոսկեգոյն
 Ի դալ ու երթալ դիտէ զարեւ
 Ի կատար եղեւոյն :

Յուսլ ի ձեռին խայտախարի
 Ճեմի զջուրք կաշկանդեալ
 Զոյր ձորձ պատէ ամոյն դաւարի
 Եւ սաղարթ թօթափեալ .

Եւ դարձուցեալ զաչս ըստ դիպաց
 Զովութեան ի խընդիր

Դիտէ զանցորդ ծանրաբեռնած
Խոնարհեալ ի յերկիր .

Առեալ ածէ զնա յառուն զով
Տայ ըմպել եւ լուանայ ,
Զմախաղ նորուն լընու պրտղով
Եւ զուղւոյն նըշան տայ :

Յառաւօտին աշնան տամուկ
Ի ծածկոյթ ամպածեւ
Մառախլապատ ըզծառոց շուք
Տեսանէ անարեւ .

Ի շեղջակոյտ սին սաղարթաց
Ընթանայ զարամուր .
Յոտից շրջիւն իբր յանձրեւաց
Հընչէ ձայն ի սարսուռ .

Զյետին սաղարթ մերկ անտառին
Տեսանէ ոլորմուկ
Իբր առկայծեալ ջահ լապտերին
Խոնարհել ի դալուկ .

Կայմից գունակ հոլաբազուկ
Յոյց ճարտար նաւուղիդ
Բառնայ զկտաւին յօդոց շրջուկ
Լուծականն ի շաւիղ ,

Մերկըս դիտէ զծառըս համբուն
Պահապանն անտառի .
Ի բունս նոցին դրոշմէ զանունն
Զ' ի դարնան ընթերցցի :

ԼԱ

Ո Ր Ս Ո Ր Գ

Զարշալըրչոց սահուն դիտող
 Որսասէր մանուկ
 Յանտառ ի դաշտ՝ աչօք հըսկող
 Ու ի սարս սատրասուկ ,

Յառաւօտուց միայնութեան
 Դէմք երկնակառոյց
 Դիտեմ՝ յաճախ կանգուն միայն
 Ի մարդ ցողալոյժ .

Գեղեցկագոյն քան զառասպել
 Նա ճեռ Լետովայ ,
 Սօլերք թեթեւ ոտիցն ընտել
 Ըզվախիւք վազ տայ .

Յեղջեր գալար հընչին զըւարթ
 Խուճապի ճագար .
 Իսկոյն շանթէ հրավէժ երկաթ ,
 Կաղան ոտք սրավար :

Թեւակոծեալ աչք երկրապիշ
 Բերի տորան ի խարձ .
 Ասպաստանիկն հարուածոյն սիշ
 Որսին առնէ դարձ .

Ըղձիչ բարձեալ հաւ սիրամայր
 Չագուց յօղնութիւն
 Խոց կարեւէր սիրոյն ի խայր
 Ըրսէ զողբ բունոյն :

Խնայեա՛ մանուկ ի տատրակին
 Վարուճնեակ տրխուր,
 Թող թող ի թուփսըն մըթագին
 Մընչեսցէ զկիրս իւր,

Որով յոլովք եւ յիմըս սիրա
 Բուժին մանրը վէրք...
 Որսորդ, մի տաս տատրակին խիրտ,
 Մի հաւուն քաջերդ :

ԼԲ

Գ Ե Ղ Ձ Ե Ր Ե Յ

Պատմութեանս թըխազգեստ
 Խոյր ի գըլուխ խաչանիչ
 Չանդաստանօք դայ համեստ
 Երէցն աչօք երկնապիչ .

Ծիծաղախիտ ի ճեմն առնուլ ժպտի անդ
 Մաղթանք նորին ըղհող առնեն արգաւանդ :
 Յիսուն ձմերանց կան սլոսակք
 Վարսից նորուն յարտեւան .
 Քրսան նորեկ ծիծուանց դասք
 Յերդիս վանացն օթեցան .

Որդի հիւղին՝ հայր կոչէ զնա ի համբոյր ,
 Որդեակ կոչի 'նմանէ գրգուեալ ի գիրկս իւր :
 Ի սիրտ ցաւած կաթէ նա
 Զանուշարար բալասան .
 Զարտուղէլոյն անուղղայ
 Ի ախպ հովուին արթնական
 Ըզհեա գընայ մինչեւ ի կիրճ գըժուարուա ,
 Եւ ըստանձնեալ զոչխարն առնէ խինդ տօնուա :
 Գեօղ եւ գեղջեայ ու ագարակ
 Յօրհնիս նորին ուռճանան .
 Առ ամենայն նա հասակ
 Ածէ նըղաստ զանազան .
 Զեկեալս ի ըրս՝ յանմահութիւն ծընանի ,
 Ի հուր երկնից նըւիրէ զջահ հիմենի :
 Տառապանաց ի մահիճ
 Ընկողմնէլոյն անյարիր
 Զառկայծէլոյ լուսոյն լիճ
 Լընու յուսով սիրալիր .
 Խառնէ արտօսը ընդ ցուրտ քըրտան օրհասին
 Եւ զաչս աստէն փակեալ բանալ տայ յերկին :

ՈՒՂԵՒՈՐ

Քիրան ի ճակատ, անթանոցիկ ընդ ձախուն
 Խոյր պըրտուեղէն արկեալ զուսովք կարմրաշար
 Անբաժ ընկերն ուղւոյ ու օճան ցուպ յաջուն,
 Անցորդ սրանդուխտ երգէր ի շէնս ու արտավար,

Լէրինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ

Աչք ի նպատակ իմ ուղւոյս,

Շինականք դուք ողջամբ կայք:

Ընդ ծուխ այգուն նա ելանէր ի շինից
 Ընդ երիկուն ծուխ նա ի գեօղս իջանէր,
 Ի տապ արփոյն ի կողմն եղեալ յեզր արախց
 Յուզն առ սընար ըզնոյն բարբառ մշտ կրկնէր:

Լէրինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ

Աչք ի նպատակ իմ ուղւոյս,

Շինականք դուք ողջամբ կայք:

Բաղուան ի կող լերին արեւն ինձ յարեաւ,
 Ի գետեզերս հովանացաւ ուռեհին,
 Եւ նընջեցի նդ լայնատարած եղէւնեաւ,
 Ի գլուխ ուղեաց ես երգէի յերեկին,

Լէրինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ

Աչք ի նպատակ իմ ուղւոյս,

Շինականք դուք ողջամբ կայք:

Յագարակաց հազար բարձի կեր եւ ումբ,
 Տեսի զմանկունս շինից խաղալ շուրջ զինեւ:

Հուպ հայրենեաց ցանկամ ըզնոյն զըւարթ խումբ
Յանկամ ըզգեղձ պարզ օդ, ըզպարզն իւր արեւ :

Որդեակ հիւղից, հիմ ընդ նրժգէհս զարմացար .
Ո՛հ, չէ սրանդուխտ որ ագանի՝ հանգրբուանս ,
Ըզվանատրին տանի նա զձիր յուշարար

Եւ միշտ յիշեալ երգէ զնորայն ըսփոփանս ,

Լերինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ

Աչք ի նպատակ իմ ուղւոյս ,

Շինականք դուք ողջամբ կայք :

Որդին հիւղից ասէ ցորդեակն այն ուղւոյ ,

Ձայս իմ անդիս երկաբեր հասկ բարդաւաճ՝

Տարցես յինէն յուշ ծընողիդ ծերունոյ

Եւ երգեսցես յեաին զանոյշ քոյ աւաջ :

Որդին ուղւոյ զնրբափողոցն ունի սահ

Յոր որթատունկք հովանան ի վրտակ .

Ձոճ ցորենոյն նա ողջունէ սրահ ընդ սրահ .

Եւ յիւրն հասեալ չէն՝ երգէ հուակ զայս նըւադ .

Լերինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ ,

Ձորգւոյ հիւղին զայս արիտուրս

Բերեմ իմ հօրս յիշատակ :

Որդի ուղւոյ ընդ սար եւ ձոր աշխարհի

Երթամ եւ ես օթեւանաց ի խընդիր

Հանգուցանել առ վայր մի զսիրտ որ խամրի ,

Նըւագեւոյ ի միթարանս առ ձանձիր .

Լերինս հարիւր ես ի չուս

Տեսի հազար ագարակ ,

Ո՞ զհայրենեաց իմոց դուրս

Բացցէ առ խոնջրս վտարակ :

ԼԴ

ՊԱՏԿԵՐ ԲՆՈՒԹԵԱՆ

Չի՛արդ չըքնաղ հաստեր ղերկիրս այս ո՞վ Տէր,
 Յանյագ վայելս մարդոյ՝ զոր անդ հաստատեր :
 Ո՛րպէս զե լոյս անձկալի յաչս է քաղցրիկ՝
 Երբ ըզքընոյ թափեալ թըմբիր մոռացիկ
 Ալոտածագ դիտեսցէ հուր դեռ անկէզ,
 Մինչեւ ցամաք եւ ծով շողան բոցադէղ •
 Շիկնին երկինք, ամպք ըզգեհուն ծիրանի,
 Ճայթունն ճաճանչք, արեւելից փեղկ բանի •
 Զահէ լամբարն առաւօտին աճեցուն
 Ծաղկապըսակ եւ լուսայեռ գունագուն •
 Յակինթ զմրուխտ դիշերային արտասուք
 Յեռեալ փայլեն ի տընկոց ոստըս ճապուկ •
 Արբուցանէ եւ երկիր զիւրըն սրասուք
 Ի վեր բանայ կարմիր կոկոնս վարդ սամուկ :
 Խաւարաբորբն ըզքօղ թողուն դաշտք սրբիւր
 Եւ տատանին ծառք եւ մացառք ի ղեփիւր •
 Ըստուէրք ճամուկք ի ձորս յեռուն խիտառ խիտ,
 Մըրցին յեմակս երանդք ծաղկանցն ի վերթիթ :
 Դղչին դնդչեն ուղխից հոսանք սըրաւար
 Ի դիտակաց բարձրաբերձից գըլեալ վայր •
 Յորձանապոտոյտ կէսք տասալեալ խոչ եւ խութ
 Բուռըն սուրան վիթին լինին ծովամուտ •
 Վիտոց զըւարթ ի բիւր մանուած կարկաջուն
 Ի մարմանդից անմեկին՝ նինջ քայլցր առնուն •

Յորոց զատեալ քաղցրաստիտջ սուրբ առուակք
 Չօնեն արբումն անդոց , ըմպեն եւ դաշտակք .
 Բայց անդրագոյն խորշակագնաց աւազուտ
 Յիր ծաւալի մեռելատիպ անօգուտ :

Յառնեն յոխորտ յաւերժական պարք լերանց
 Կէպք ձիւնագէզ սլարգեալ ճակատ խրոխտաւ
 Ապառաժուտ այլք ըզթիկունս ահարկու, (պանձ,
 Ուր են կրուականք ոտից արծուեաց ամպաչու .
 Նոցին ի կողս ձրգին աստուտ ընդ շինից
 Եւ անտառակք այգեստանեաց զուգակից :
 Անդ սեպացեալ հըսկայք երկրի սեւադէմ
 Սոսկավիթխարք թըւին երկնից մարտընդդէմ .
 Բոց փորատեալ շանթիս յահուր ըզգայուն
 Որտաընդոտ ծըծումք ընդ վիհս հուրեղէն ,
 Գետահետեալ մողին խամրեն ըզուրջ վայր
 Զառիթ ցատմանն անջինջ թողեալ լուրթ կար .
 Անդ սիրալին ընդառաջէ տեսարան (կառ :
 Միշտ հինաւուրցն եւ միշտ մանուկ ովկիան .
 Ձրգեալ պատէ զերկիր բազիօք թուլատարր ,
 Մերթ ի համբոյր կակուղ ավանց սիրաբար ,
 Մերթ սաստ ի զուր մըռընչելով սիգատէս
 Յարուցանել լերինըս թուխս ու ալէգէս .
 Թաւալգըրոր ոգորիլ գալ ընդ իրար
 Քուշանաբար զաւաղն առնուլ ի յաւար .
 Իսկ խիճ խաղաղ խըմէ գքըրտունս դրացոյն ժանդ ,
 Նընջեն կոհակք զինչ վարսակի հընձեալ անդ :
 Եւ ո՞ սանձէ զալիս ծովուն մըրըրկտլար
 Դաշինս կրուել կալ ընդ երկրի հաշտաբար .
 Ո՞ անաստուած , ցամաքեացի լեզուդ սրեղծ ,
 Թէ զանմահին չիմանաս գործ անտըխեղծ .

Տէս զովկիան զերկնից կարգաց արբանեակ,
 Հայեաց յարեւ՝ զիարդ ըզտիւ յերկինս հակ՝
 Աս՝ ի կապոյտ ամառս ոսկեղէն անկողին
 Արկեալ փափուկ եւ խաղաղի գլխովին .
 Երկիցս յալիս զոսկեակ գրչսոյն ծածկէ զհեր ,
 Երկիցս յերկին ծիրանածին յառնէ վեր .
 Ի խոնարհէն՝ ըստուերանան յաղթ լերինք .
 Լըռէ երկիր , հանդէս առնուն մութ երկինք :
 Ձեռն որ զարվին վարէ ի մարդ տարաշխարհ ,
 Պարզէ զլուսին կոյր գիշերոյ լուսարար .
 Յուշիկ յուշիկ զով եւ զըւարճ ձրգի ամբ
 Հեղանաղին մահկի սպիտակ ընդ ոտամբ .
 Բանան ու աստեղք ըզսրատուհանս լուսաղարդ ,
 Աչք եթերին , անշէջ լապտերք , լուսոյ վարդ .
 Ուղղեն սիրով մոլորեւոյն ըզյաւիղ ,
 Կըրթեն ըզբիբ ծովաչըւին նաւուղիդ .
 Հաստչին հնազանդք թաքչին յիւրեանցըն սրահու ,
 Փեղկըս շափուլս ածեալ դըրանց լուսատու .
 Լուսնին մահիկք ի ճաճանչից կողոպուտ
 Իբր աղեղան թուլանան լարք խոնաւուտ :
 Մեկնի գիշեր , արեւ դառնայ ի ծովէ
 Լուսաաբտուն իբր արմաւ տար յաշխարհէ ,
 Մինչ ծովափնեայ լերինք եւ ամբք լուսաթոյր
 Շարախառնիլ թըւին , ճաճանչք ընդ փրփուր ,
 Յալեաց բացեայց յոր չըզօրէ ական ոյժ՝
 Փայտ անտառին ի թեւս թեթեւս ասպաժոյժ
 Ընդ մրկանունս զոր կէտք սուղեն վեթխարի
 Իշխանաբար սահեալ յառաջ կոյս վարի .
 Սանձահարեալ փայտիւ ըզփայտ , զծուր ջըրով
 Վարդեն մարդիկ ի նոր ափունս անվըրդով .

Քաղաքանին գայ յերեւան արէսաստ
 Ուր արքայից գահոյք, ճոխից եւ դարաստ,
 Եւ գեղձէից եղեգնատունք խիտ ընդ խիտ
 Հուպ արտորայց եւ մարմանդից ի փըթիթ :
 Ի բացահան ծայրից կաղնեաց սեւորակ
 Տան անմահին դիտի գանչող աշտարակ,
 Յոր հարկանի արեւ երբ գայն եւ երթայն
 Ի ստուեր նորուն նընջեն հասակք ամենայն :
 Աստ յանջրուետ մըռայլ կըրձից որձաքար
 Գընայ 'նդ կամուրջ օդապարիկ գարշապար :
 Ի կող նոցին ճեմի հօտիցն իշխեցող,
 Հողմով շքրջին հանդիպոյ թեւք աղացող :
 Յօռըս լերանց յեցեալ աւանք եւ քաղաքք
 Չարմանալեաց երկրի հանդէպ բովանդակ .
 Ուր բիւրազգի յարարս մարդիկ թարթափին
 Ազգամաք՝ զոր մասն ամենավար էտ հաստջին .
 Որ արփայնոց ասաց եւ կան ի նոյն կարդ ,
 Հրամայեաց երկրի եւ տայ զիւրըն հարկ ,
 Ծովու՝ եւ ոչ իշխէ գրթել աւազին ,
 Հիմն արկլերանց , դողան սարսուեն ու ոչ դրդուին .
 Գոռ գաղանաց յարդարեաց որջս ի թաւուտ
 Անդէն մըրնչել հարուլ զահեղն որկորուտ .
 Չերէ վայրի , զարջառ էած շինից մերձ .
 Չիշխէ մանկան ցուլ հըսկայ գոլ լըծընկէց .
 Օդապարիկն հաւու զբարձունս եդ տընակ
 Չլեւիաթան վարեաց ի սոր ջրակուտակ .
 Փիղ յընթանալ ցընցէ զերինս տապայեղց .
 Ի Լապրատոր ի գահ սառին ընդ ծով մեծ
 Արջն ըսպիտակ թըմբրեալ նաւէ անխոտոր :
 Ամսախաղաց չըւեն թըւչունք սարաւոր ,

Զանժանօթ վայրս ծանօթ ձայնիւքն ողջունել
 Եւ ձագախառն աճեցեալ դարձ յետս ամնել :
 Վըտառ վըտառ թեփազրահիկք ընդ Պոնտոս
 Գան վայելէլ ըզգեղ գարնան , թողուն ձուս .
 Ծողուն վառեակ ի մերկ սպարեխն եդեալ բոյն
 Յանդուլ հառաչս ալեաց խառնէ զձայն սիրոյն .
 Յերփնէրանգ թեւ , յակինթ զուլամբ մէհեանդ
 Սիգաճեմեալ սիրամարդ գայ ի մարմանդ .
 Երփինունակ հաւուկ ի դրախարս ճէնաց ,
 Ըզհամագեղ ծաղկանց ծըծէ հիւթ զըւարձ :
 Մինչդեռ սողունք ընդ հող դրնան գողուղիք
 Ու արեւագէմ խոյանս առնուն սուր արծուիք .
 Զեռան տխուռնիք ի խաղ Նիւէայ երկեկից ,
 Եւ զանապատս հերձու ջայլամն ոտնաթուխ :
 Արմաւենի անդ գըլխոյն լոկ եդեալ շուք ,
 Եւ եղեւին կանգնի համակն սատ զարդուք .
 Աճումնաձիգ արձան մահու զուսպ նոճի ,
 Եւ գիսարձակն ուռի զեղերբք անդ աճի :
 Ի թեւս հողմոց ծառ առ ծառ սերմն արկանէ
 Եւ հարսնանայ Լիբանան մեծն ընդ Սինէ ,
 Նունուֆարաց սրփոին հեշտոցք ի լըճին ,
 Քեցեալք առ սէր ընդ մըկանունըս մատչին : ...
 Տարեաց ըզքէզ Տէր քարողէն բորմունք ,
 Այրի երկրի կոյսք հարսնագեղք գան գարունք .
 Մառախլապատ դէմք դաշտաց ծաղը ըզգենուն ,
 Լերինք կակղին , փշրին տարերք կարկաջուն .
 Բանայ զարգանդ մայրըն հող , սար եւ մարմանդ
 Գունանարօտ պճնին , խաղայ սիււզ ի յանդ .
 Տատանին բոյնք յոստ նորընձիւղ յանտառակ
 Ըլթուխս հարսին մեղմէ երգովք վարուժեակ .

Խայտայ բնութիւն , ու ի ջուրց գաւառ սրազաւ
 Դոնք եւ դրիկնք գան զերերօք ոլորուն . (ջուն
 Կարմիր ճանճիկէն բուրեան ըզգեսա առնուն ծառք
 Ամառնային խնդրէ պըաուղ արեւ բարկ .
 Կեռաս , շըրոր , խընծոր , ծիրան , մի առ մին
 Ու ելակ կարմիր թանգուզելով կայ ի քմին .
 Որդիք մաքեաց եւ ուչք այծից ոստոսաուկ
 Ճարակին ցլրդ եւ ծոթորին անտաղաուկ .
 Կոհակաձեւ կըքի ցորեան ոսկէհեր
 Համբոյր հողմիկ երբ գըրկածէ հեշտաբեր .
 Զըստուէր խնդրէ սոճեաց եզող քրանախոնջ .
 Հովին յալպեայ քարայրս հանգչի ցուպ յանթոջ :
 Փոխանակին ապա 'ւուրք կարճք եւ գիջին ,
 Աւուրք ածից , սաշա' ի բաժակ նոր գինին :
 Մերձի օրհաս յեղանակեալ արեգկան ,
 Ճեպեն սըաուլք , այնքան քաղցր որք' անագան :
 Սիւզ հիւտիտեակ վըչէ ի շունչ ցըրտաբեր
 Տըխրին գալաբք եւ դալկանան ի յերեր .
 Շընչէ կրկին , թափին սաղարթք մերկ տըմոյն ,
 Սըգան երկինք միգապատեալք յեւ այգոյն .
 Հրակայքն երթան ամպը հարք բերրի անձրեւաց
 Բըռնանայ հողմ' տեռազերծող անտառաց .
 Կարապետէ ձմերան Եւրոս ցըրտաշունչ
 Խամբել ըզգեղ , գրաւել զերկիր անշըշունջ .
 Հեռանան հիւրք օգոց , տեղի տան անգեայք .
 Գըղաթք ամպոց տեղան գիզին ըսպիտակք .
 Պահանգք դընին գետոց , սառոյցք' ծովափին ,
 Օձ գալարեալ զօղէ ի բանտ խորգով հին .
 Մերկ կողոպուտ ծառք ճարճատեն ցըրտաբեկ ,
 Ոստովքն ըզհիւղ ջեռուցանէ հովիւ հէք .

Ի զուր խնդրէ յանպատըսպար օգոյ նախ
 Թռչնիկ նօթի զվրտանգէլոց կենաց սխիւն :
 Ո՛հ, զիւրդ յայնժամ արամազգեաց է երկիր .
 Արեւ, լուսին ու աստեղք թըւին ցրտակիր :
 Այլ գան գարունք նորք, նոր ծիծաղ աշխարհի .
 Յեղանակի ամ, բնութիւն չերերի .
 Սերմանք մեռեալք՝ ընձուեն կենաց բարունակ,
 Գունին սաղարթք, բարդաւաճէ բուն եւ տակ .
 Ոտս արձակէ արմատն ի գիրկ բլրակին,
 Բըլուրն յեցեալ ի մեծանխտ կող լերին,
 Եւ վնթխարին արձանացեալ լեան յերկրի
 Թաքուն բովոց աճումն առեալ ի ստուերի .
 Մեծազանգուած եւ գունտ հողոյս բովանդակ
 Զարեգակամբ շրջի ուրմոյ նրմանակ .
 Եւ աշխարհաց իշխանն՝ անուոյ փոքու տիպ
 Ի գիւ յերկին գայ, թէ՛ւ կըլուէ զայն ոչ բիբ .
 Ու ամբաւակոյտ երկնից՝ կամարք պատ ի պատ
 Տիեզերաց ըսպաս հարուն անընդհատ :
 Բնութիւնք անշունչք եւ շնչականք օղ ընդ օղ
 Կան զիրարեալք ի ծրար մատինն արարող : ...
 Ծիր հիւսպանչ, յոր իմ յառեալ ի զբօսանս՝
 Ըզհանգրրուանս երգեցի նուրբ ի ձրգանս .
 Զոր ոլորեմ զընդուզենեաւս արդ ձօնի,
 Ողջոյն տըւեալ տեսլեանց չքնաղըս շինի :
 Ողջամբ կացջիւք իմ գեղազան ագարակք,
 Կացցե՞ն արգեօք ողջամբ ու երգոցս յիշատակք : ...

ԵՐԳՒԲ ՀԱՆԳՐՈՒԱՆԱՅ

ԱՌ՝ ԱՌՈՒԱԿՆ

Սիրեմ՝ ես զեզր առուակին՝
 Որ ի սարէն մենաւոր
 Ընդ զառ ի կող բըլրակին
 Սահեալ երթայ գաշնաւոր ,

Ծաւալ՝ ի մէջ մարմանդի
 Եւ գիրդ ծաղկանց տայ համբոյր .
 Մանրիկ ալեօքըն սլատի
 Շըրջան առեալ բիւրըս բիւր .

Թէպէտ անդորր՝ այլ աշխոյժ
 Ալիքն հաշտեալ հեղեղին ,
 Գան եւ մօտին եւ անժոյժ
 Ի մայրն իւրեանց խաղաղին :

Մանրիկ ալեակք եւ վրտակ ,
 Ժիրք եւ հեղիկք , ասացէք ,
 Զինչ մըռնչմամբ սիրունակ
 Յափանց այտի զինչ խընդրէք .

Կամ զո՞ր սատգամ գաղտնի տայք .
 Զամսոց ուր ձեր խանձարուրք ,
 Զծաղկա՞նց ոյց էքըդ բաժակք ,
 Թէ այլ ինչ էն ձեր բարուրք :

— Զայն չըդիտեմք, բայց զայս մին՝
 Զի քո պատկեր եմք ճըշգրիտ .
 Թէ գիտիցես զինչ կամին
 Անգուստ կոհակք քո սըրտիդ ,

Որ անդուլ գան եւ բախեն
 Մընչեն մւընչեն տան քըրքիջ ,
 Գան եւ երթան, դարձ առնեն
 Խօսիլ կամին , չասեն ինչ :

1844

Ս.Ռ. ՀՈՂՄԻԿ ՄԵՂՄԻԿ

Օգոյի կոյսըն գուսան
 Մըշտասարսուռ ու անասան
 Իջեալ ի մարգս համապիւռ
 Հանդէս առնէ, զով զեփիւռ .
 Հըրճուին հովիտք լըւանխտ ,
 Շըքթին շթոճնք անհանգիստ .
 Ծուփ ի ծայրիցն ընդ մարմանդ
 Ծաւալանայ յանդոյ յանդ .
 Տըրտմեալ տերեւքն ամբառնան
 Փոշի թափեն մանկանան .
 Ծըղիկք ծաղկանց ծաւալին ,
 Ծառոց գիսակք ծածանին .
 Կարկաջ աղբերըն դաշնակ
 Փոխի յայլ քաղցր եղանակ ,

Եւ շրրաուցեալ ի դիտէն
 Մընէ տատրակն հեզօրէն : . . .
 Ինքն ընդ երկին եւ երկիր
 հողմիկն յածեալ ժիրաժիր ,
 Յաներեւոյթ մատն ածեալ
 Եւ խաղալով դայլ ի դայլ՝
 Շարժէ քնարիկ սաղարթուն
 Սուէ արուէ ձայն սիրուն :

Ես յայն ձայնէն ըզմայլած
 Օրհնեմ ըզսէր քո Աստուած ,
 Որ ըզպատկեր քո ի լոյս
 Ըզձայնդ յայտնես ի հողմոյս .
 Հայիմ յարեւն՝ հրաշանամ ,
 հողմոյս լքսեմ՝ հեշտանամ .
 Յամէն սօսիւն այս սըքիս
 Սիրտըս սարսէ եւ հոգիս . . .
 Քանզի պանդուխտ եմ ես , ո՛հ ,
 Ոգի տրկար եւ տըժգոհ .
 Միայն հիքոյս մըխիթար
 Ինքն է հողմոյս ճանապարհ ,
 Ընդ որ հառաչ առ հառաչ
 Մըզեմ ըզսիրտս իմ յառաջ :

ԱՌ ՀՈՂՄՆ ՀԵԶԻԿ
ԵՒ ՅԱՆՉՐԵՒ ՔԱՂՅՐԻԿ

Կառեալ յառիմ աւասիկ

Ընդ ծաւալումնն հովտիս ,

Աչքս ընդ բնութիւնն ըզբօսիկ

Եւ միտք ի պրակըս սըրտիս :

Ահա սօտափ եւ շրչիւն . . .

Հողմն անցանէ հեղաշունչ ,

Բարբառ ձրգէ նուաղ բնութիւն ,

Սաղարթք ամէն ի մրմունջ .

« Ո՛վ այցելու օդասպար

Ահա խամրիմք , ցօղեա մեզ » .

Եւ առ օդոյն դարչասպար

Տատանէին մանր եւ հեզ :

Երկիցս հողմոյն առեալ հիւ ,

Ու ահա զիզան ամսւք խոնաւ .

Շիթք արծաթիք հեղուն ցիր ,

Ըմսգէ բնութիւն ու ասէ բաւ :

Ի սաղարթուց ծայր դալար

Դիտեմ արդ սուրբ մարդարիտ ,

Իբրեւ երգոց շարժեալ ըար ,

Եւ զինաց մանըր ժըպիտ :

Կառեալ յառիմ եւ յիմ սիրտ ,

Վաղու խամրեալ եւ երաշտ ,

Յօղոյն անձկաւ խիրտ ի խիրտ ,

Ու ի տարերաց բունն անհաշտ .

Ո՛վ յիս շնչէ զհողմն հեզիկ
 Եւ նազէի զովաբար •
 Ածէր զանձրեան ինձ քաղցրիկ ,
 Եւ ցօղէի հեղաբար :

ԱՌ ԸՆԳՈՒԶԵՆՆԻՆ ԱԳԱՐԱԿԻ

ՎԵՐԱԿԱՐՁԵԱԿ ՅԵՏ ԺԱ ԱՄԱՅ

Ո՛վ առոյգաբունդ ու երկարակեաց անշուշտ քան
 Իմ խորանանման կատարաբերձ ընդուզենիս, (զիս
 Սիրասնունդ զաւակ բնութեան, հաստոյր եւ գե
 (զաղէշ,
 Որ շուրջանակի արձակես ոստ ամբարձուղէշ,
 Ողջոյն քեզ սղջոյն ընդուզենիդ իմ սիրունակ :
 Իցես ճանաչել արգեօք ըզգէմքս այս սեւորակ •
 Իցես ճանաչել, իցես յիշել ըզպատանի՝
 Որ խանդիցն ի բոց դաւար՝ ինդրէր զովդ հովանի •
 Եւ վայրենայած մորձ՝ մուզայից հանդիսարան
 Զօդակառոյց դէան համարէր քո սգանձ գազա
 (Թան •
 Ի սաւառնաձայն հծծիւն հողմոյ, որպէս եւ արդ •
 Սըրտաթունդ լուէր բարբառս յամէն քոյին սա
 (զարդ •
 Եւ գեղայօրէն սպասկերք ատելեանցրն շինական
 Ծրադրէին ի յաչս ի միտս՝ ու անառուս ի մատեն
 (կան։։

Ամբ արդ մետասան, բաբէ քըթիթ ամանակի,
Անցին իբր ըստուերք չթողեալ անանց զնիւթս հա
(սակի,

Զի կարճօրէիւք ինձ չափեցաւ կենաց շրջան,
Ի ոչ հարիւրաւորս շնչել գարունըս քեզ նրման:
Խանդավառեալ յայնժամ պատանեակ ես աղածրի
Թէլս ոսկեճամոկ արկանէի զգիմօք երկրի •

Ընդ քերդողական քօղով աշխարհըս բացխլփիկ՝
Ունել դեռ ունէր յինքն երեւոյթ ինչ գեղեցիկ •
Իսկ մինչ զերկվեցեակ այսօր թողեալ ամս ի թիւ
(կունս,

Ծանրաբայլելով ճեմիւմ ընդ մարդս եւ ընդ ծաղ
(կունս,

Յանկարծ գագաթմանդ բարձրաբողոր եկեալ ի տես
Եւ ըզվաղընջուցն ածելով զիւմ յուշն ի հանդէս,
Ասպրնջականիդ իմ սիրայնոյ գիմեալ առ բուն,
Յակճիւս ողջունեմ ըզնոյնդ, սհ ես ոչ եւրս նոյն:—

Ահա խանդաշարժ սաւառնի զքեւ հեզն այն զե
(փիւռ,

Ահա հին եւ նոր հովանեօք գան տերեւք ի հիւռ •
Բաղցր ինձ եւ այսօր զովիկ շրշենդ օղաբաշնակ,
Այլ մաղձամրղճիկ ըզմէ՞ ճըմլի սիրտ սեւորակ •

Ոչ եւս ինքնաշարժ վաղեն ի քնար մատուէք հրա
(ծայր,

Բայց թ' առ յուշ նախնի դորովեալ դամ մի սիրա
(բար:

Ամօք թէպէտ ոչ յոյժ երկարովք կրուեալ հասակ՝
Սակայն ծանրասիրտ կըքի յերկիր լըջադիմակ •

Աւիւն աչաբոյժ ծորեալ՝ նըւաղ ակնարկեն բիբբ,
Եւ ըզվերնածայր զիմացս ունի սպիտակ փընջիկ:

Ոչ եւս ծաղկաճեմ կայտուէ ի գնալըն դարչապար,
 Այլ եւ ընդ ծաղկամբք խիթայ զմթինըն ճանա-
 (պարհ: . . .

Ե՛կ սաւառնաձայն զեփիւռ՝ ի ծառս՝ եկ եւ շըն-
 (չեաց,

Ոչ եւս ի հրաւէր՝ տի՛նա յաւէտ հրաժեշտ մուզայց.
 Ոչ եւս քաղցրանայ ինձ ոլիւմբեանն այն օշարակ,
 Կրթելոյս ի դառն յանսեթեւեթ յամբ ի ճաշակ.
 Մի եւս ինձ զանցեալս ի յուշ ածես քաղցր իմ զե-
 (փիւռ՝

Յար զընդուզէնեաւս օղեղինօք թեւօքդ ի թիւռ.
 Տես քանի՛ սորայս բարգաւաճեալ կան բարունակք
 Ընդ սուրհանդակիդ թեւապարեւ զուգադաշնակ.
 Անդ երկոտասան արձակեցան հասակք թռչնոց՝
 Գարնանաբերից յոտամիջակըն բունեւոց,
 Աւագաստ զուգից փեարապաճոյճըն հոմանեաց,
 Զորոց հարսանիս փեսայն երգէր հարսնըն պա-
 (րեաց.

Չագունք կիսամերկք յորորանի ոստոցդ ի շարժ
 Յանկարծ վերացան թեւաբուսեալք ի թիւրս վարժ.
 Նորոյ գարնայնոյ յաշխարհ օտար թէ գնան եւ
 (հիւրք

Այլ յետ ձմերայնի գան ողջունել զայս խանձա-
 (րուրք՝

Որում ցօղաթուրմն աջօք փարեալ ես տամ համ-
 (բոյր,

Եւ ելեալ գրնամ՝ դու պաշտեա՛ զսա քաղցր իմ զե-
 (փիւռ:

Ի ՎԵՐԱՅ ԹՄԲԻ ԳԵՏԱԿԻՆ

Թումբ դալարիկ ախորժ բազմոց
 Քան զարքենին է ինձ հեշտոց :
 Զուրբս պայծառ եւ հեղասաս
 Որ քծնելով ընդ իմբս գահ՝
 Ըզժիզ յարդին եւ ըղտերեւ
 Ման ըզմանի քրշեալ զիւրեւ ,
 Անցանէ գնայ զուղն անշրշունջ
 Միակամարն ընդ սարղ կամուրջ ,
 Զուրս այս պայծառ խաղաղագնաց
 Որ լոկ զպատկերբս դալարեաց
 Եւ ըզգեղջկին եւ զգեղուհւոյն
 Ծնանի յեղերս ճեմեցելոյն :
 Զուրս այս բուժեալ զկիրբս բոլոր
 Զինչ գործէ իւր պէս՝ զսիրտ պղտոր :
 Ո՛վ անպաճոյճ քան զքնաւ տարերս
 Եւ բազմադէմդ ի հրաշակերտս ,
 Որ ի բարձունս յերկնից դահլիճ
 Հաստատութիւնդ ես լայնալիճ ,
 Եւ յարհաւիրբս խորանդընդոց
 Դընդընչաձայն զեռաս հոժ հոժ :
 Դու եւ ի ծով անծայրածիր
 Կասոյտ ողամբք կայտուես ի հիւ ,
 Մերթ խուովայոյզ կոհակաշարժ
 Զկոփեալ անտառս ածես ի քարշ ,

Եւ մերթ զիջեալ զեկի փոքու
 Յարեւմտաց յեւ արեւու
 Ի գուն տախտակ կրբես զազինս ,
 Մերձեցուցեալ զօտարածինս .
 Արծաթահիւս գլուխ քո ի սարս
 Եւ յովկիան տաս դարշասպարս :
 Ո՛վ ջուր , որ այժմ՝ ինձ առննթեր
 Ըզհեզութեան առեալ սրտիկեր ,
 Լըռիկ մընջիկ ընդ նուրբ շաւիղս
 Խաղաս գընաս ընդ արտ ու այգիս ,
 Ողբամք երթ ա՛նց վրտակ հեզիկ
 Ծարրեալ ծընիւք գեղածաղիկ :
 Ահա սօսեակ սաւառնասէր
 Եւ ուռնեակըն մըշաերեր ,
 Եւ կաղամախք երկայնաշուք
 Կանգնեալ ըզքեւ լուրջ տարազուք :
 Հանդէս առնեն տերեւաշարժ
 Հեզիկ հողմոյ հընչամբըն վարժ .
 Խօշիւնս ախորժ , ծուփ տերեւոց
 Զկեղեալ սրտիս ամօքեն խոց :
 Ճանճ եւ ճըճի բազմակերպեան
 Մանրակրտիտ երագ գունեան ,
 Ծիրանազգեաց եւ զմըրըխտի ,
 Այլ եւ կանաչ տիպ սաղարթի ,
 Ըզնուրբ ծըղիւ կախեալ ի քեզ
 Թըւին յառիլ ընդ գէմբըղ հեզ .
 Իսկ ծիծեռան կարակնաթեւ
 Պարզեալ տըտամբն անցեալ ըզքեւ՝
 Գամ մի հարու զըրթունս ի ջուր ,
 Զըղիտեմ յունսյ թէ ի համբոյր ,

Եւ շոյա շեշտի ճըճմամբն ի վեր
 Օձաձեւիկ հատեալ զայեր :
 Թըւի ամէնս որ շուրջ ըզքեւ՝
 Ի սէգ սօսեաց մինչ խուն տերեւ ,
 Աղկաղկ որդնուկ եւ անդեայք յոյր
 Որ ճարակինս ի դաշտն ըսփիւռ ,
 Եւ դաշտս ինքնին ըսնածաւալ
 Ձոր հորիզոնս այս ձեւէ մռայլ ,
 Մատուրւակեալք ի բաժակէդ՝
 Հեզք եղանիլ ալեացդ հանդէս :
 Իջից աղէ իջից եւ ես ,
 Մի խոժոռիս թէ ձըպեմ՝ ձեռս՝
 Եկեալս յաճախ ընդ սեաւ մըրուր
 Քարտ քերելով ի գիրըս զուր ,
 Իջից ու առից կրկինս օփով
 Ի մրկանանցդ յըստակ եւ զով ,
 Առից եւ տայ շրթանցըս գօս
 Համբարելով զուսուլ քաղցրահոս :
 Իջէք անբիժ ալեակք դուք յորդ ,
 Քան ըզնեկտար ի հիւժ կոկորդ ,
 Իջէք զն անդր հուպ մինչ ի սիրտ
 Եւ նըստուցէք զամէն խըլիւրտ :
 Ո՛հ , իցի՛ւ ծուփ ծովուս սրաին
 Խառնեալ , ո՛վ ջուր , յալիս քոյին
 Քո պէս խապառ հանդարտ ու ամբիժ՝
 Ծընանէր լսկ ըզժինս երկնից :

Ի ՄԷՋ ՉՈՐԻՅ ԲԱՐՏԻ ԾԱՌՈՅ

ՀՈՒՏԻՆ ԳԼԱՓԱՄԱՅ ՄԵՐՉ Ի ԼՈՆԴՈՆ

Ո՛վ քառասին հողմոյ տաճար ,
 Որոյ ձեղունդ օգբ շքրջապար ,
 Ու ի միջակէն կախեալ արեւ
 Իբր ի բիւրեղ գրմբեթաձեւ .
 Ո՞յր արդեօք ձեռն լարաձիգ
 Արկ ըզհիմունքդ աճումնաձիգ ,
 Ոյց ժամանակ՝ աճմանդ պատճառ
 Սըխրանալով կայ եւ պատկառ .
 Քանի՛ արդեօք էանց դարուն
 Մինչ յայս հասին հասակ կանգուն .
 Քըսանպատիկ բարձուք քան զիս
 Շարժեն կատար հուպ ի յերկինս .
 Չեռն գարնան հանդերձազարդ
 Շուրջ ի կանաչ սլըճ՛նեալ սաղարթ
 Մէշտ ըզսոսա բնութեան մանկունս
 Մատուցանէ առ հիւր հողմունս :
 Ծառ հովանուտ ի լայն դաշտի
 Քաղցր իջեւան է պանդըխտի ,
 Իբր առժամեայ ինչ հանգըրուան
 Ի յարաչուն կենաց սահման .
 Իսկ դէմ առ դէմ սոքա քառեակ
 Եւ գապաթամբն յիրար մանեակ ,
 Անշարժք յարմին ճըփունք ի ձայր
 Թըլին ըզկայ մարմնոյս ի վայր :

Եւ ըզգընացս հոգւոյ յերկին
 Ազգ ինձ առնել՝ քաղցր ընդ դառին :
 Եւ հողմն ի յարկըն քառածայր
 Երերազին շնչեալ յամայր ,
 Չիցէ՞ եւ նա սըրտի սրտակեր
 Հառաչելով յերկրէ ի վեր :
 Ահա 'նդ հողմոյն սա խոյանայ
 Ահա թըռչի յերկին դընայ .
 Եւ ոչ բաւեալ սարել էրկնի
 Ի ծայր շարժուն սեանցս անկանի :
 Ո՞ արկանէր սրտ՝ անդ դահոյս ,
 Եւ հանգուցեալ իմ ըստ հաճոյս
 Դաշնակէի զեղծեալքս լար
 Ընդ յարերգու հողմոյն քընար .
 Եւ անդ ընդ մէջ էրկնի ու երկրիս
 Երգէի զխառըն կիրք սըրտիս .
 Զոմն հոսէի 'վայր ընդ տերեւս
 Եւ զոմն հողմոյ տայի վեր եւս .
 Օրհնեսցի՛ր անձն այն եւ մի գամ
 Որ զայս տընկեաց ծառքս ի Գլափամ ,
 Ուր թեւածեալ հարցուկն օրոց
 Խօսի սատգամ խընդից ու ողբոց :
 Եւ ես սրանգուխտ առեալ ըզկայ 'նդ
 Այլարձի աչա արտասոււախանդ ,
 Տեսի զերկին շըրջականդուն
 Հասարակաց իբրեւ ձեզուն .
 Եւ բարձրագոյն հատեալ հառաչ
 Քան ըզհողմոյն դահոյս կանաչ ,
 Թօթափեցի խէթ մ' ի սըրտես
 Եւ փոքրաբեւըն դառնամ յիսս :

Ի ԿՈՇԿՈՌ

ՀԵՂԵՂԱՏԻՆ ԿՐԵՍՊԱՆՈՒ

Ի Տարսիսիոն գառառի .

Ես երգել ասա կամիմ, դու լուս լեր Մուսս .
 Լուս հանձար, լուս լիցի արուեստ Պառնասայ .
 Զանեղակերտ լարեալ ըզքնարն երկնայեց
 Մեծանըւագ աստէն հընէ բնութիւն մեծ .
 Դաշնակաւոր դեղգեղաձայն դասապետ
 Ի ծործորոց լերանց վիժակս ալեւէս ,
 Քարակոչկոճ ընդ դարավազ աստիճանս
 Փրփրագիսակ բերէ յաւերժս երգահանս :
 Լերինք աստի լերինք անտի հըսկասար ,
 Եւ ի միջի լեռնահովիտ հաւասար ,
 Անցս ի կուսէ թողեալ բրդանց սրահակի ,
 Յորմէ անկիւն ծովածաւալ նըջմարի
 Դաշտորէլց եւ քաղաքաց շրջածիր ,
 Զոյր ոչ բաւեն աչք մահացու առնուլ հիւ :
 Սեաւ ասպառաժք առաջի , սեաւք ի թիկանց
 Զարհուրագին կարկառմամբ մի զհէտ միմեանց ,
 Թըլին ունել զիրար յանկման դահալէժ
 Կամ կործանել ու առանց անկման կալ յաւեժ .
 Եւ ես նըստիմ ի ժայռ եւ ոտք իմ ի ժայռ ,
 Զոր քերէլով սահակարկաջ ջուր սպայձառ
 Բիւր բիւր բեկմամբ շրջապըտոյս ման ի ման
 Շուտախաղաց շաջմամբ երթայ սըրտահան :

Ո՛վ ջուրք կայտառք, յարահոսանք յարաձայնք
 Վայրի վայրացս երաժիշտք դուք սիրավանդք •
 Տամ զիմ քընար մըշտագընացդ ի ձեր խաղ,
 Լըռեմ, լինիմ ես լըսելիս լոկ խաղաղ •
 Եւ ըզփորեալս ի կրրից սիրտ սափոր տամ,
 Լընում լընում լընում եւ ոչ լիանամ: . . .

1851

Ի ՎԱԼԼԷՆ ԼՃԻ ՀԵԼՈՒԵՏԻՈՅ

Տաշտ քարակոփ ափով լըցեալ հօրն հանուրց,
 Եկեալ յերեր սեւակապոյտ ալեաց ջուրց,
 Հրսկայք երկրի սալաթիկունք բարձ ի բարձ
 Արձանանան լերինք ըզքեւ գեղապարծ •
 Կէսք պողպատջուռն բիւրղեայ եդեալ ասարօշ,
 Զորով երփն երփն ամպոց շարժին փառք եւ դրօշ •
 Այլք արհաւիրս սեւապարոյրս սփռեն անդ
 Յանտորնխէթ դահավիժիդ դարեւանդ •
 Իսկ միւս բնութեան ծրղէօք ծաղկեալ ղիւր նա •
 Յամպոց ի վայր ձըգէ ՂՃամուկըն նափորտ: (րօտ՝
 Ո՛հ, թէ կանգնէր ինձ տուն ի կող սարակիս,
 Ըզբնութեան հաստիչն երգէր միշտ հոգիս •
 Եւ սիրտ անկեալ ի քեզ կարասս սօս վըսեր,
 Քաջերգագոյնըս տայր զյեալին շունչն ի սէր:

1852

Ի ՅԻՇԱՏԱԿ

ՀԵՂԵՂԱՏԻՆ ՄՈՒԶՈՆԱՅ

Յաղմբկայոյց Սենայ 'ուաքեմ' յուշոյ քեզ ձօն
 Ո՛վ Ազրլեան բըլըոց վիժակ՝ մենիկ Մուզոն .
 Սուտ են նամէա նայադք , նիմփայք ալէպարիկ ,
 Այլ սըրտի չէ սուտ յիշատակն ափնայածիկ ,
 Որ առաթուր հարեալ եւ զորմ եւ զամբարտակ
 Սըանայ ի խաղ քո յոր երբեմն յածիւր մեկնակ ,
 Զանցս ըզբաղմանց , ո՛վ ժամանակ , արկեալ յան .

(յուշ

Ըղձայ ձրգեւ զայն ժամու թել խողմանցն անուշ .
 Եւ ի հեղեղս յեռյեռեւոց քայոխցդ ալեաց՝
 Որովք , սիրո՞յ մանեակ , փարիս ծառոց ծըղեաց ,
 Կաշկանդեալ զանձն՝ անմեկին քեզ սիրէ գերիւ ,
 Կուր կոհակացըդ դո՛ւ թ' առ քեւ չիք դեգերիւ :
 Ի հեա՝ զոր հարն՝ ոչ դադարէ սիրտ առնել դարձ ,
 Տի՛նա՝ զբնութէ՛ գեղ թէ անդ խուն ինչ ունի մաղձ .
 Մէն հառաչանք հոգւոյս , Մուզո՛ն , ծըփին յանդոր .

(բու

Յամէն խաժիկ խորշ մըկանանց քում ճակատու .
 Եւ ըստ ալեացդ , որ յար փոխին մինչ նոյն թըւիս՝
 Մինչ նոյն եւ ես , ա՛հ , ահա՛ նցեալ է հիւ թ սըրտիս :

Ի ՎԱՅՏ ԼԵՐԻՆ

Ի ՆՇՍ.ԻՍ.ԿԻ ՏԻԳՈՒԻՐ ԼՃԻ

Ո՞չ ահա՛ շնան գիտակք հարան ի սարսուռ
 Այլ զբնութիւն դեռ դիտեմ՝ առոյգ ի Տիգուր* .
 Աշխոյժ յաւերժ խաղայր եւ յիմ տրխեղծ տխր՝
 Զայսդոյն առուրս թ՛ երկարել տայր ոք բախտիս ,
 Յազատութեան վայր եւ դեղոյ աշխարհի
 Յորմէ հազիւ միաք , սիրտ անձկաւ հրաժարի .
 Մինչ լին՝ լուսոյս լընու լըճաւ քով Տիգուր ,
 Ըզմէ՞ ալիս ի նմա յուզէ սիրտ տրխուր .
 Հասեալ տեսեալ՝ դառնամ բարձեալ յուշ միակ ,
 Իբր ըսքողեալ դիմաց յանկարծ երեւակ .
 Պար սարուրեալ լերանցս յաջում ինձ վրկայ
 Նոյն յահեկէ ու ի թիկանց՝ լուռ թէսկետ կայ :
 Իսկ դու բեկոր սայծառ երկնից հայելոյ
 Անկեալ ի կիրճ գոռւղ կոհակացս Ալպիոյ ,
 Կէսըդ կապոյտ կէս ըսպիտակ ջինջ եւ հաշտ ,
 Սըրտի սարդոյ թըւիս խորհուրդ բարեպաշտ .
 Յոր սըխրացեալ եւ ծարաւիմ հայել բիւր ,
 Մինչեւ անոյս զաչս ամփոփեմ տրամաթոյր : ...
 Ո՛վ դու լըճիս շահապ խաժակն , սու զիմ յուշ
 Խառնեա՛ յալիսդ , խառնեա՛ ի հովս այս անոյշ :

1852

* Յուսիկ :

Ի ՀԻՒՍԻՍՍՅՅԻՆ ԾՈՎՈՒ

Յ՛Ոստենդեան ծով հիւսսի ճեմիմ միայնակ
 Երիս սրարգեալ առ հողմըն թեւս ի նաւակ .
 Զուարթ է արեւս, ծովըս ծիծաղ, հողմն ընդոյր ,
 հանդարտ եւ սիրտ յիշատակօք մաղձալծոյր .
 Իսկ միտք ալիս առեալ ի ծովն իւր սըրախն,
 Մերթ ըստ հողմոյս առ Աստուած վեր տատանին ,
 Մերթ ծաւալեալ յուխտ հաւասար սիրելեաց
 Ալեաց յալիս ձրգին ի հողն հայրենեաց .
 Եւ մերթ ի լուրջ եւ ծածանուտս հայելոջ՝
 Զանցեալն յիշեն եւ զայժմու կեանքս դողդոջ :
 Աչք իմ յուզեն զանդընդ յատակ ծովըս խոր ,
 Միտք իմ զասրայսն անհետազօտս ու ահաւոր .
 Հեշտ իմն հանդարտ բաղխի՝ նդ տաղնապըս զան .
 Եւ զուարճանամ եւ երկնչիմ ես անդուլ : (խուլ
 Եւ յառաջէ նաւակս ի շունչ օժանդակ
 Թողեալ ի թեկն ըզԲելգիա բովանդակ ,
 Փռանկաց ափուռք յաջմէ , Ոլանտ յահեկուս
 Ու անդ Ալպիոն իմ արդեւանն ապառուս ,
 Եւ հեռագոյն՝ շաւիղ շարժուն , որ կըշիւ
 Տանի՝ Թուլիս՝ չեկեալն աչաց ի յակճիւ :
 Ո՛վ նոր ալիք , նոր ափուռք , ձեզ ողջոյն տամ
 Ողջոյն մ՛եւեթ , զոր ոչ տեսից միւսանգամ .
 Ը՛նդ հուպ երթեալ կառեայց յիմ եզր հայրենին . . .
 Այլ սիրտ մերժէ զասհման . տացի նմա երկին :

ԱՌ ՊԼԱՒԻՍ ԳԵՏ

Ի հոսանս անձառագևաց աղբերն

Որ ի նպերտ բարձանց հոռիկեաց
 բացեալ արգանդ զարամուր՝
 ԶՅլպեայ պաղպաջուն գիւելոլ
 եւ ցուրտ ըստեանց ըզփրփուլի,
 Եւ աստ ի խորին խոռոչից
 խրթին ժայռից մազապուրծ
 Վազեալ ժիրաժիր պարմանի՝
 ու առնուս այլս հինաւուրց,
 Ի հունքո սպասեակ զոր պեղեաց
 յաւխտենից ամանակ
 Վակժոյժ թաւալել եւ փարել
 թուլաբաղուկ գրկափակ .
 Եւ իբրու դգաթից բարդ ի բարդ
 բարձեալ բեռինըս բազմաց
 Գըզեալ զիրերօք մերթ ի կոխ
 մերթ ի համբոյր հաշտ չըրթանց,
 Բիւրայորձան մերթ կնճռեալ,
 ծիծաղադէմ մերթ հանդարտ,
 Վարես եւ վարիս ընդ աիշեալ շէնս
 եւ բըլուրս եւ ընդ արտ,
 Մերթ ընդ անձուկ մերթ ընդ արձակ
 գործել ուղի աննահանջ,

Մինչեւ ի նստատակն եւ յանդունդ
 քոյին անկցիս լայնալանջ .
 Անդունդ սրխրալի , զորոյ ծիր՝
 յէից չափէ լոկ արեւ ,
 Եւ յորոյ սարգուած՝ երկիր՝
 կէտ մի խաղալիկ արդարեւ ,
 Հանապազագնացրդ Պլաւիս ,
 քանի շտապես ի վախճան՝
 Յորմէ յետս անդրէն դառնալոյ
 չիք քեզ հընար եւ օճան :
 Ալիք քո զաւուրս իմ թըւեն
 հոսեալ անդուլ յառաջ կոյս ,
 Երթամ , եւ խիթամ յոր երթամս հայել ,
 դարձի վրէպ ի յոյս .
 Դու թէ յար վատնիս , հանապազ
 եւ յորանաս ջուրք նորոգ ,
 Քո սկիւզբն վըսեմ , մէջդ հարուստ
 եւ կատարածրդ փառօք .
 Իմ յանձանօթէ յանրստոյդ թափ առեալ
 կեանք համառօտ՝
 Յար ծրփանօք լոկ քեզ նըման ,
 մինչ շուրջ ըզգամս ինչ կարօտ ,
 Ահա ոչ եւս հուն , վըճարեալ է
 կարծեցեալս շըրջան ,
 Հուպ աղբերականըս բացեալ
 անդառնալին այն վախճան : . . .
 Սակայն երթ ո՛վ գեա , երթ խիզախ ,
 չընախանձիմ ընդ քո բաստ ,
 Զի Երազագոյն են իմ վաղք ,
 եւ խորագոյն առաքաստ՝

Յոր թաւալեցայ անկորուստ ,
 Եւ հոսեցից բիւրս բիւրս եւս ,
 Մինչ քո խանձարուբք , անդունդք ,
 Հունք ու ափունք իցեն այլ ոչ եւս :

Ա Ռ Չ Ա Գ Ն

Որ եւնուտ ի խոց իմ . կարայ , զգունցի
 Եւ արձակցի .

Դարձիր ձագիկ սիրունակ ,
 Յաղատութիւն քո դարձիր ,
 Երկինք են քո սարունակ ,
 Զինչ առ յինէն քո խընդիր .
 Քո մեղուցեալ ումք չիք ,
 Չըմեղանչեմ եւ ես քեզ .
 Խանձիմ բաղդիդ երջանիկ ,
 Տամ քեզ ըզքոյդ ասպարէզ .
 Ե՛րթ թըռիր յօդս անարգել
 Բարձեալ ըզքերմըս համբոյր ,
 Եւ արձակեալ ձայն դելգել
 Մաղթեա՛ եւ ինձ եւս անոյր :

Ի ԶԱԳ ՏԱՏՐԱԿԻՆ

ԵՒ ՅՈՂՈՐՄ ՄՍՀ ՆՈՐԻՆ

Մուսա մայրեաց հովանեաց
 Մեղմիկ մընչմանց եւ լալեաց ,
 Որ ի խորուջ պուրակին
 Մարդես եւ զձայն տատրակին ,
 Մնչեաց ի լարրս փափուկ
 Զխմոց ձագուց սէր եւ սուգ :
 Ասա քեզէն զի գիտես ,
 Մըթնահանաչն ի պեւկէս
 Յեմահաւոր մայրւոյն ծոց
 Ի զեփիւռին հովանոց ,
 Ի՞բր ի բընկան ոստախիտ
 Զահիւ գարնան վառեալ սիրտ
 Ծընողք զսոքօք գրգային ,
 Յանոյշ պարգեւս հիմենին .
 Զխա՛րդ հոմերն անտառաց՝
 Սոխակ՝ ի գողըս կաղնեաց
 Իբրու գրացի գեղգեղէր
 Խանդաղատեալ յանկեղծ սէր :
 Կամ զխա՛րդ հայր ու ամուսին
 Ըղկերակրոյ մինչ գնացին ,
 Վայրենայած գեղջկորդին
 Ղօղեալ ի Թաւ պուրակին ,

Յանկարծ սրացաւ ծառն ի վեր՝
 Զձագունքդ ահիւ վայր եբեր,
 Մինչդեռ ի լաց ողորմուկ
 Ճիչ առ ծընողս բարձէք դուք :

Այլ ինձ յանկարծ լինէր ազգ
 Զմատեանս հարեալ ի տապաստ՝
 Ել՛ ի շուկայն հապճեպով,
 Դարձայ ձեօք ջերմին ծոցով :
 Ո՛հ թէ Կատուլ՝ իմ խընդին
 Կամ տէրն հայէր Իսային,
 Քաջ մոռացեալ զիւրն անձուկ
 Եւ ինձ լինէր նախանձուկ :
 Ձեռք ի գրգուանս բազմաբիւր
 Շըրթունք առատ ի համբոյր,
 Ազգի ազգի սփռեալ ունդ
 Հատք ընդ կաթին հեշտ սընունդ,
 Պատրաստ ի ջամբ չըքնաղաց
 Մոռացուցի զգուլթ ծնողաց .
 Թողեալ մըրոտ զիմ փետուր՝
 Ի նոր հանձար սիրասուր .
 Յեռի սըրտուեակ ընդ տաշեղ,
 Տուն հանգըստեան եւ շաւեղ :
 Ահանակիտ ջուրբ ի տաշտ
 Հալածեցի ես զերաշտ,
 Չօնեալ արբումն եւ հովոց
 Եւ բաղանիս ջերմ՝ օդոց :
 Ի տես զիմեալ մանկըտուոյն
 Եւ սըխրանայր առ գըլթոյն,
 Եւ չամաչէր ձեզ նախանձ
 Իերեղ՝ ձագունք սիրասական :

Երասնակցել իղձք եղեն
 Անուշ գգուանս առ յինէն :
 Հըտպիտ Թըրթրակ նաղէլիք
 Բազում ցաւոց ինձ բըթիշէք ,
 Բազում վըշտաց մոռացօնս
 Եւ հըճուանաց էիք ձօնս .
 Մինչ շողջոյեալ վառ ի վառ
 Զականողիսըդ փարփառ ,
 Կամ սաւառնմամբ բացխըփիկ
 Կամ գոգաւոր ի Թեւիկ
 Զուրիէլից բերեալ ձեւ
 Եւ մակուկաց ծովաձեւ ,
 Կամ Թէ կըտուց առ կըտուց
 Յառաջէիք քաղցր ի բուծ .
 Եւ կամ ի ջինջ աւազան
 Գելգել փողիւդ ի յորձան .
 Կամ Թեւախառն առնուիք
 Նինջ անուշակ եւ հեզիկ :
 Ամէն Թըրթրուդ եւ մըմօնջ
 Չօնէր սըրտիս առոյգ շունջ .
 Զանմեղութեանն որ փախեաւ՝
 Դուք զարթուցէք զսպաշաւ ,
 Եւ բերկրաւոյս մանկութեան՝
 Դուք տրտմախառն ազգարան :
 Ո՛ղջ էք ձագունք քաղցուենի ,
 Ողջ էք , անդուշ կրկնէի .
 Ձեր կազգութենն ի կորով՝
 Ինձ յաւելուլ ի գորով .
 Ընդ հուպ տեսից եւ զայն օր
 Յորում պըճնեալք փետրանոր

Նոր ըզգեցլիք մանկութիւն ,
 Կարակնացեալ ի տրտուն ,
 Գոյն համակեալ ի սարկեշա
 Ական տեսոյ քաղցր եւ հեշտ .
 Զսպարանոցաւրդ մընչող
 Յեռեալ մանեակ սեւասքող .
 Ժրասլիք ի գործ քաղցրընտէլ
 Ի հիւս բընկան նըրբաթէլ ,
 Յերախայրիս ջերմ սիրոյ
 Տալ բեղուն ձեր նըմանոյ : . . .

Այսու յուսով պարարեալ
 Երաղէի ոսկեփայլ .
 Ընդ մի զուգին՝ անդ զյոգունց
 Տեսանէի հոյլ ձագունց .
 Զանբիծ նոցին կենաց լար
 Յիս կարծէի առեալ սար .
 Եւ քաղուածոյ նոցա կուր
 Յագուրդ եւ կեանս ինձ կարծիւր .
 Ըմպել նոցա խուն կայլակ՝
 Ինձ ոլիւմբեան օշարակ . . .
 Սէր եւ յոյս՝ միշտ լուսաթոյր
 Սփռեն զաջօք վարագոյր : —

Այլ յերկարեւ հիմ ըզբանս .
 Դարձաւ ամէնն յաշխարանս :
 Ծանեայ զի քաղցրն իսկ եւ յոյս
 Ոլորս ունի նըրբահիւս .
 Եւ սիրոյ ինքն աննըման՝
 Ոչ է երգումն անդրուժան :
 Այն սէր այն յոյս իմ բոլոր
 Յ'այն ինչ հասեալ սրախս խոր՝

Յատակեաց լիք սոսկ թափուր ,
 Գետոյ գործեալ հուն արխուր : —
 Էր անգորրու ժամանակ
 Եւ թանձրանայր խաւարակ .
 Նընջէր անգամ եւ հընչիւն
 Երկնից ու երկրի եւ ծովուն .
 Մահ՝ ի ժամուն քաջաթուխ
 Որպէս արծուի սեւագլուխ
 Տարածեալ թեւս ընդ այեր
 Դէտ ակն յառեալ խէթ հայեր ,
 Տիգօք բըբացն , ո՛հ , ըստոյդ ,
 Բեւեռեցաւ յիմքս զոյդ :
 Իմ շատ վարեալ ասպարէս
 Յանըրջական ի հանդէս՝
 Իբրեւ յալեաց ի խորոց
 Յանկարծ ընդօստ յընկողնոց ,
 Լըսեմ մնչման ողբոյ շինդ .
 Սըրաիկս հարու ի մեծ թինդ .
 Ջահեալ լամբար՝ փոյթ անդէն
 Վազեմ շտապաւ ի մահճէն
 Աւ բոյն իմոց տատրակաց ,
 Եւ ժամանեալ . . . ո՛վ արկած . . .
 Ո՛ւր իմ հըտպիտ նազէնիկ ,
 Ո՛ւր իմ տատրակն եղունիկ .
 Խօսեաց ասա՛ վարուժնեակ
 Ո՛ւր է , ո՛ զքոյդ առ հարսնեակ . . .
 Այլ դու մընչէս միայն լուռ ,
 Անդամքդ ամէն ի սարսուռ .
 Ո՛հ , կաց ժուժեա՛ հանդարտ լեր ,
 Մի՛ սպառ ըզոյս իմ խըղեր :

Եւ ըզգեանաւ մածեալ շուրջ
 Սիրտ ի բերան խելաշուրջ՝
 Ընդ չորս անկիւն հետախոյզ
 Ի ոչ գրտի զնիշ ըղձաւոյս .
 Առաստաղ, խորշ եւ դարան՝
 Ընդ կոչս՝ ի զուր դող հարան :
 Դուռն եւեթ բաց կայր խըղիս ,
 Ո՛հ , խայթեաց խիղճ խմ սըրտիս .
 Ես եմ պատճառ աղիտին
 Որ առ ի ճեմըս հովին՝
 Բաց թողի զայն յերկիւռնն ,
 Ոստին ընդ այն եգիտ հուն :
 Ըզբուն գիշերն անձկայրեաց
 Երկայն քան զշարըս տարեաց ,
 Մենկանն այրւոյ մըխիթար
 Եւ ինձ տայի վայրապար .
 Կանխայարոյց քան զարեւ
 Որ ծագեցաւ զայն օր սել ,
 Արտասուք յաչս խմ ի հիւ՝
 Ի վեր եւ վայր ի խընգիւր ,
 Մինչեւ , ո՛հ , տէս անմուաց . . .
 Զխաբդ ժուժես սիրտ ցաւած ,
 Բեկ մանաւանդ բեկ ըզլար
 Եւ մի սրտամէլ զտեսըն չար ,
 Ի ցուրտ վիմին առաթուր ,
 Մի կարմրաներկ զայն փետուր .
 Մի զայն խաւար որ յաչկուռն
 Մի զպաղ արեանն յերակուռն ,
 Մի զտսկեծղի զայն մագիլ
 Յաճախ զմտտամբս խմ ի գիլ ,

Իբր ըզտերեւ հողմալար
Գիրդ յանդամոցն վըտար...
Ո՛հ, յակնարկել յայն բոսոր
Կըկոցին աչք իմ խոժոռ.
Փըքին մահու գնաց ընդ իս
Եւ թալանամ յաղիտիս :...

Վայ տամ գլխոյս ու աչերոյս
Սքողեալ ի սուգ սիրելոյս .
Վահ այն ժամուն խաւարի ,
Որ գնաց հտալիտն յաւարի .
Անէծք նըզովք ոսոխին
Որ ընդ շաւիղ գողուղին՝
Սողոսկեցաւ յարամուր
Եբեկ զտատրակն իմ մաքուր .
Դաժան մտանեալ մտղացն յորս
Դժոխորովայն ա՛ռ ի խորս :
Ո՛վ ծովացեալ քեզ սըրտիկ ,
Ո՛հ , մըխիթար այլուսա չեք .
Ոչ արշալուրչք լուսափայլ
Ընդ գիշերոյն ձորձ մըռայլ
Մերկացցի զմահ տատրակին
Զառիթ անկարծ քո վտանգին .
Ոչ վարուժնեակն իւր անբիծ
Յանդուլ մընչիւնս եւ թախիծ՝
Ոչ յարուսցէ քեզ հազորդ
Զքաղցրիկ կենացն կըցորդ .
Իսկ դու վիժածըդ վագեր
Կոյր դու կասկամ չարակեր ,
Անէծք անկցին միշտ ըզբեւ ,
Եւ օրհասին սարսափ սեւ .

Իբր իշխեսցեր չարակամ
 Զգողօնս եւ զմահ ի մի ժամ
 Ածել ժանեօք չարազէն
 Գոչ անմեղին գառնազէն .
 Շիրիմ եղեալ կենդանի
 Իմ տատրակիս գեղանի .
 Ըզքեզ հրաշէկ նեան արփւոյն
 Արկցէ տապաստ եւ նրկուն .
 Խօշ ճիւաղաց գէշադէշ
 Զիմ եւ զորսոյդ լուծցես վրէժ .
 Որ զի աչացն այն ծաւի
 Եւ մընջանաց գորովն՝
 Ակըն չառեր հըտպըտին
 Հրեշտականման իմ հաւկին : . . .
 Ո՛հ, ես ընդէր ընդ գըզուանս
 Չետու քեզ վերտ , սըռնապանս ,
 Բըլթեւ բեկեւ զգերչին ուժ ,
 Որ դեւ զաղիս քո քընքուշ : . . .
 Այդպէս եւ դու մահ չըւառ
 Չըկաս սիրոյ բնաւ սլաակառ
 Այլ հիմ յականջ անողոք
 Ընդ վայր հեղուլ զուր բողոք .
 Ի մահուանէ ո՞ թափեաց
 Զոր մահու չափըն սիրեաց :
 Ասեմ զմեռեալն երանի ,
 Վայ որ մընայն կենդանի :

Բ Ն Ո Ւ Ն Ի

ՅԱՆԿ

ԵՐԳՐԻ ՀԱՆԳՐՈՒԱՆԱՅ

Ա. Առ ջեղիսն ընդ ընդունելուսն	175
Բ. Ջեղիսն այգուն	176
Գ. Արսնիսի	178
Դ. Եւս արեւսն	178
Ե. Ասսուս	180
Զ. ———	182
Է. Միջոցե	183
Ը. Արեւսնայ	185
Թ. Լսնիս	186
Ժ. Աստղի	188
ԺԱ. Գիշեր	189
ԺԲ. Մարգարիտի	192
ԺԳ. Ծաղիսն	194
ԺԴ. Չոր, Ծործոր	197
ԺԵ. Ասս	198
ԺԶ. Գեղ	200
ԺԷ. Հովանի	201
ԺԸ. Արարայ	203
ԺԹ. Լիցի	204
Ի. Տաղարար	208
ԻԱ. Երեւելիսի	209
ԻԲ. Ջանգալայգուն	211

ԻԳ. Կամ-ը	213
ԻԳ. Ծոռ-ի շինից	214
ԻԵ. Մշակ	215
ԻԶ. Ելուչ	217
ԻԷ. Արքանեյ+	218
ԻԸ. Ազեկ-ն-ն+	219
ԻԹ. Մրգապահ	221
Լ. Անպատասպահ	223
ԼԱ. Որոտ	225
ԼԲ. Գեղը երեց	226
ԼԳ. Ողբ-որ	228
ԼԴ. Պարիէր Բն-նեան	230
Առ ստանալն	237
Առ հողի մեղի	238
Առ հողի հեղի ե-յանցը- ասլորի	240
Առ ընդհանրին ազատի լեհար-ընդհանր ծա- մայ	241
Ի լեհայ մեղի գեղանի.	244
Ի մեղ լեհի բարի ծառայ հողին Գլախմայ	247
Ի հողի հեղեղապին Կրեպան-	249
Ի վալեն լեհ հեղեղապին	250
Ի յիշատակ հեղեղապին Մո-ղանայ	251
Ի վայր լեհի ի նշանակ Տեղոր լեհ	352
Ի հիստորիան ծառ	253
Առ Պլա-ի գեղ	254
Առ Յապն որ էմ-պ ի իսող իմ.	256
Ի Յապ արարանին ե-յաղորձ ճան նորին	257

ՆՈՒԱԳԻՔ Բ.

Էջ.	տող.	Սխալ	Ուղիղ
8	10	Որ կարծի, դաշան ընկեցիկ	Որ կարծի՝ դաշան ընկեցիկ
27	28	աղունեակ	աղաւնեակ
129	18	զըրուաստից	զըրուատից
136	27	ԱԾՐՈՒՒ	ԱՐԾՈՒՒ
138	15	ակնակապիճ իւր	ակնակապիճք իւր
163	25	մերժէ ճեան Ա. դամայ	մերժէ զճեան Ա. դամայ
212	9	զլթըմբեալ	զլթըմբբեալ
212	28	զորմ	զոմ

